

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(2) 2020

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2021

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ս. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուրյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, Ալեք
Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության
ֆակուլտետ:
Հեռ.՝ 060-71-02-43

Էլ. կայք՝ publications.y-su.am
publishing.y-su.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@ysu.am
Տպագրական 7.125 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.04.2021
Հանձնված է տպագրության՝
11.11.2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արսեն Թավադյան	
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ, ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՅՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ.....	5
Լիլիթ Պետրոսյան	
ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶԵԼԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	14
Աննա Վարդապետյան	
ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՍԲ ԵՎԳԵՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԻ ՔՐԵԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԲԻՈԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ	40
Тигран Симонян	
ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ МОЛОДЕЖИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ	62
Կարեն Ամիրյան	
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	73
Գևորգ Վիրաբյան	
ՓԱՍՏԱՅԻ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.....	90

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ
ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

Արսեն Թավադյան

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը¹ (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ընդունվել է 1998 թվականին: Անցած 22 տարիների ընթացքում Օրենսգրքում կատարվել են մոտ 100 փոփոխություններ, լրացումներ, բարեփոխումներ: Դրանց մի մասը եղել է փոքրածավալ և ուղղված մասնավոր հարցերի կարգավորմանը: Մի մասը, լինելով մեծածավալ, ներդրել է որոշակի նոր ինստիտուտ, որը հակասության մեջ չի մտել առկա կարգավորումների հետ:

Սակայն Օրենսգրքում տեղի են ունեցել բարեփոխումներ, որոնք կատարվել են առանց կարգավորման ընդհանուր տրամաբանությունը և համակարգը հաշվի առնելու և որոշակի հարց լուծելու փոխարեն, իրականում խառնաշփոթ են մտցրել: Սույն հոդվածում անդրադարձ կկատարվի հենց այդպիսի բարեփոխումներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ու ընդհանրապես ՀՀ օրենսդրությունը համակարգ է: Ի թիվս այլնի, դա նշանակում է, որ համակարգի բոլոր տարրերը փոխկապակցված են, և տարրերից մեկի փոփոխությունն ազդում մնացածի վրա²: Այս տեսակետից օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելիս պետք է հաշվի առնել կարգավորման ամբողջ տրամաբանությունը և խնդրին լուծում տալ հնարավորինս քիչ միջամտությամբ:

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք թիվ ՀՕ-239, ընդունված 05.05.1998 թվականին, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

² Համակարգերի տեսությունը համապարփակ նկարագրված է տեսության հեղինակի հետևյալ աշխատությունում՝ Ludwig von Bertalanffy, General System Theory: Foundations, Development, Applications, New York: George Braziller, 1968:

Համակարգը կառուցվում է տրամաբանական կանոնների կիրառմամբ, որոնցից այս պահին կառանձնացնենք «Օկամի ածելիի» սկզբունքը, որը ձևակերպվել է 14-րդ դարի անգլիացի փիլիսոփա Ուլյամ Օկամի կողմից: Վերջինս այդ սկզբունքը մեկնաբանել է հետևյալ բառերով՝ «անիմաստ է կատարել մեծաքանակ միջոցներով այն, ինչ կարելի է անել փոքր քանակով» և «էությունները չպետք է բազմապատկվեն առանց անհրաժեշտության»:³

Օրենսդրական բարեփոխումների նկատմամբ այս սկզբունքի, ինչպես նաև համակարգային մոտեցման կիրառումը ենթադրում է, որ դրանք պետք է կատարվեն հնարավորինս քիչ միջամտությամբ և համակարգի արդեն իսկ առկա տարրերին համապատասխան: Օրենսդրական փոփոխություններ կատարելիս պետք է հատակ հասկանալ՝ ինչ խնդրի լուծմանն է ուղղված կարգավորումը և փորձել հնարավորինս քիչ փոփոխելով համակարգը լուծել այդ խնդիրը:

Այս հոդվածում կներկայացվի երկու օրինակ, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարեփոխումները կատարվել են առանց նշված սկզբունքների պահպանման:

1. Ապահովված իրավունք

Առաջինն ապահովված իրավունքի կարգավորումն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում այն ներդրվել է 2014 թվականին⁴, երբ նաև ընդունվել է «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենք⁵:

Բարեփոխումների հիմնավորման մեջ նկարագրված են եղել այն խնդիրները, որոնք առկա էին այս ոլորտում: Մասնավորապես, նշված էր, որ «Տնտեսական խնդիրներից մեկը, որը նաև բարձրաց-

³ St' u Философская энциклопедия : в 5 т. / глав. ред. Ф. В. Константинов. — М.: Советская энциклопедия, 1967. — Т. 4 : Наука логики էջ, 135:

⁴ St' u «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-264-Ն, ընդունված 17.12.2014 թվականին, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1 Հոդ.1253.53:

⁵ St' u «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-263-Ն, ընդունված 17.12.2014 թվականին, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1 Հոդ.1253.52:

նում են բանկերի, ձեռնարկությունների իրավաբանները, այն է, որ ընթացիկ իրավական համակարգը չի տրամադրում վստահելի կենտրոնացված ռեզիստրի համակարգ գրավի իրավունքը գրանցելու համար: Արդյունքում պարզ է դառնում, որ հայաստանյան ներդրողները ավելի քիչ են հակված գրավով ապահովված վարկեր տրամադրելուն:

...

Հայաստանի ինստիտուցիոնալ կառուցվածքը ևս համարժեքորեն մասնատված է և անարդյունավետ՝ ապահովված գործարքների ոլորտում: Շարժական գույքի գրանցումը կարգավորվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ըստ որի իրավունքները գրանցվում են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից: Միաժամանակ, կան նաև յոթ այլ ռեզիստրներ, որոնց նպատակն է գրանցել այլ հատուկ տեսակների գույքային իրավունքները: Այս ռեզիստրներից յուրաքանչյուրը գործում է անձնական կարգի համաձայն, շատ դեպքերում առանց հանրային մատչելիության և թափանցիկության: Նշված նախագիծը պատրաստվել է նշված թերությունները շտկելու նպատակով:

...

Որպես առանձին, սակայն կարելուր հանգամանք, առաջարկվող իրավական ակտերը Համաշխարհային բանկի «Doing Business»-ի չափանիշների նկատմամբ կունենան հստակ և դրական ազդեցություն: Համաձայն «Doing Business» 2013 թ. զեկույցի՝ Հայաստանը վարկային ցուցանիշներից հավաքել է 10-ից միայն 6-ը: Հայաստանի հավաքած 6 միավորը համեմատական կարգով ցածր է օրինակ Վրաստանի (9), Մոլդովայի (8) և Ուկրաինայի (9) հետ»⁶:

⁶ Տե՛ս «Շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փո-

Հիմնավորումից ակնհայտ է, որ հիմնական խնդիրը շարժական գույքի գրավների միասնական թափանցիկ ռեգիստրի բացակայությունն է, գրանցման ոչ մատչելի լինելը: Թվում էր, թե ամենապարզ լուծումն ընդամենը շարժական գույքի գրավների համար միասնական ռեգիստրի ստեղծումն է:

Սակայն, դրա հետ մեկտեղ, Օրենսգրքում ներդրվեց նոր՝ 14.1, գլուխը: Օրենսգրքի 15-րդ՝ «Գրավի իրավունք», գլխի կիրառումը սահմանափակվեց միայն անշարժ գույքի գրավով: Արդյունքում, անհրաժեշտություն առաջացավ փոփոխելու օրենսդրական կարգավորման ամբողջ ոլորտը, որի պատճառով ի հայտ եկան բազմաթիվ խնդիրներ: Հատկապես կարելի է հիշատակել սնանկության վարույթներում առաջացած բազմաթիվ խնդիրները⁷:

փոխություն և լրացում կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտության մասին հիմնավորում <http://www.parliament.am/-drafts.php?sel=showdraft&DraftID=6950&Reading=0> (02.02.2020թվականի դրությամբ):

⁷ Տե՛ս օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019 թվականի, թիվ ԵԱԲԴ/0058/04/16 սնանկության գործով 07.06.2019 թվականի, թիվ ԵՇԴ/0072/04/17 քաղաքացիական գործով 04.10.2018 թվականի, թիվ ԵԿԴ/0078/04/15 քաղաքացիական գործով 20.07.2017 թվականի որոշումները:

«Ապահովված իրավունք» հասկացության ներդրման արդյունքում մենք ունենք ամբողջովին նոր ինստիտուտ, որը բավականին թերի է կարգավորված: Նախկինում, շարժական գույքի գրավի նկատմամբ կիրառվում էր մոտ 40 հոդվածից բաղկացած Օրենսգրքի 15-րդ գլուխը: Այժմ, փաստացի շարժական գույքի գրավի կարգավորում գոյություն չունի: Փոխարենը, օրենսդրությունը ծանրաբեռնվել է նոր հասկացությամբ, որի համար ստիպված նոր օրենսդրական դաշտ է ստեղծում: Ավելորդ է խոսել, թե դա որքան ռեսուրս է պահանջում:

Դրա փոխարեն օրենսդիրը կարող էր գնալ ամենապարզ ուղիով՝ զուտ ստեղծել շարժական գույքի գրավների միասնական ռեգիստր:

Այսպիսի թերկարգավորումը բերեց նաև բարեփոխման մեջ դրված իմաստի աղճատմանը: Բարեփոխման հիմնական նպատակներից մեկը ռեգիստրների կրճատումն էր: Սակայն 2014 թվականի բարեփոխումներից հետո ակնհայտ դարձավ, որ նոր կարգավորումը բարդ է կիրառել առկա իրավական համակարգի հետ և 2016 թվականին ընդունվեց նոր փոփոխություն, որով նախատեսվեց, որ տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի գրավի հետ կապված հարաբերությունների կարգավորումը վերադարձվում է հին համակարգին⁸: Այս պահին, ՀՀ-ում միևնույն է առկա է շարժական գույքի գրավի մի քանի ռեգիստր:

2. Տուժանքի առավելագույն չափի սահմանում

Մինչև 2017 թվականի բարեփոխումները Օրենսգիրքը չէր սահմանում տուժանքի առավելագույն չափ: Դրա փոխարեն Օրենսգրքի 372-րդ հոդվածը իրավունք էր տալիս դատարանին նվազեցնելու տուժանքի չափը, եթե այն ակնհայտորեն անհամաչափ է պարտա-

⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք թիվ ՀՕ-190-Ն, ընդունված 27.10.2016 թվականին, ՀՀՊՏ ՀՀՊՏ 2016.11.16/83(1263) հոդ.1105:

վորության խախտման հետևանքներին: Նշենք, որ նման կարգավորում գոյություն ունի ռումանագերմանական և անգլոամերիկյան իրավունքի գրեթե բոլոր երկրներում:⁹

Այս հոդվածը մեկնաբանվել է ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով¹⁰: Մեկնաբանության կարևոր կետերից մեկն այն է, որ դատարանն իրավունք չունի ինքնուրույն նվազեցնել տուժանքը: Դատարանի լիազորությունն անմիջականորեն պայմանավորված է բացառապես առաջին աստիճանի դատարանում պատասխանողի (պարտապանի) կողմից վճարման ենթակա տուժանքը պարտավորության խախտման հետևանքներին ակնհայտորեն անհամաչափ լինելու վերաբերյալ դիրքորոշում հայտնելու կամ համապատասխան միջնորդություն կամ դիմում ներկայացնելու հետ: Սակայն հասարակության մեջ իրավական գիտելիքների ցածր մակարդակի, բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից առաջադրվող ակնհայտ ոչ նպաստավոր պայմանների առկայության պարագայում ստացվում էր հետևյալը՝ բանկերը և վարկային կազմակերպությունները միայն բարձր տուժանքների պայմանով էին վարկային պայմանագրեր կնքում: Վարկը չվերադարձնելու պարագայում վարկատուն հայց էր ներկայացնում դատարան: Վարկառուները, հատկապես ֆիզիկական անձինք, չէին ներկայանում դատական նիստերին, արդյունքում դատարանները բավարարում էին հայցը՝ բռնագանձելով տուժանքն ամբողջությամբ:

Սպառողների իրավունքների պաշտպանությունը, իրավունքների չարաշահման կանխումը և սոցիալական պետության առաքելության իրականացումը հստակ ամրագրված են նախագծի հիմնա-

⁹ Տե՛ս **Санисалова Н. А.**, Неустойка в российском и зарубежном законодательстве // Известия Пензенского государственного педагогического университета им. В. Г. Белинского, №28, 2012, էջ 151-156:

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/0492/02/14 27.11.2015 թվականի, թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի, թիվ ԵԿԴ/2680/02/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշումները:

վորման մեջ¹¹: ՀՀ Ազգային ժողովում նախագծի քննարկման ժամանակ նույնպես բարձրացվել է հենց այդ թեման: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարը նշել է՝ «... մենք օր առաջ պետք է այն արատավոր երևույթը, որ ձեզանից շատերը նաև բարձրաձայնել են, մենք ինքներս տեղյակ ենք, խոսքը վերաբերում է տուժանքներին, երբ բանկային համակարգում ֆինանսական շուկայի մասնակիցները երբեմն արհեստականորեն փչեցնում են, ուռացնում են այդ տուժանքներն անհարկի ձևով, ոչ իրավաչափ ձևով կամ ոչ համաչափ ձևով՝ ֆինանսական պարտավորություններ առաջացնելով վարկառուի համար, այլ թվում նաև՝ տնային տնտեսությունների համար: Եվ սա, օրինակ, տնային տնտեսությունը կարող է ունենալ, ենթադրենք՝ 100 հազարի վարկային պարտավորություն, բայց տուժանքներն անգամներով գերազանցեն: Եվ սա խիստ վտանգավոր բան է: Մենք օր առաջ այս հարցը պետք է լուծենք, ինչով և մենք առաջարկելու ենք այս օրենքի նախագծով վերին սահման և չափ սահմանել տուժանքների համար: Այսքանը»¹²:

Այսինքն՝ նախագծի ընդունումը պայմանավորված էր հիմնականում նրանով, որ անհրաժեշտ էր պաշտպանել սպառող քաղաքացուն բանկերից և վարկային կազմակերպություններից, նման դեպքերում, սահմանելով տուժանքի առավելագույն շեմ:

Արդյունքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը փոփոխվեց, վերացվեց տուժանքի նվազեցման հնարավորությունը (պահպանվեց միայն որոշակի կատեգորիայի անձանց համար): Նաև նախատեսվեց, որ պայմանագրով որոշված բոլոր տուժանքների

¹¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտության հիմնավորում
http://www.parliament.am/draft_docs6/K-184_himnavorum.pdf (02.02.2020 թվականի դրությամբ):

¹² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երկրորդ նստաշրջանի արտահերթ նիստի տպագրությունը, 12-ը դեկտեմբերի 2017 թ.,
<http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3374&day=12&month=12&year=2017&lang=arm#12.12.2017> (02.02.2020 թվականի դրությամբ):

հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա **պարտքի հիմնական գումարին**:

Արդյունքում, տուժանքն ուղղակի կախվածության մեջ դրվեց առկա պարտքի հիմնական գումարից: Սակայն, բարեփոխման ընթացքում մեկ կարևոր հանգամանք բաց թողնվեց: Տուժանքի հիմնական առավելություններից մեկն էլ այն է, որ այն հնարավորություն է տալիս պարտավորության խախտման դեպքում բռնազանձել որոշակի գումար առանց վնասի չափը հիմնավորելու անհրաժեշտության¹³: Դրա հետևանքով, տուժանքը պարտավորության կատարման ապահովման շատ հարմար միջոց է հասկապես ոչ դրամական պարտավորությունների դեպքում, երբ չկա պարտքի հիմնական գումար: Օրինակ՝ վարձատուրն ժամանակին չի հանձնում վարձակալված գույքը: Այս դեպքում պարտքի հիմնական գումար չկա:

Ներկայիս կարգավորման դեպքում երկու մոտեցում կարող է լինել ոչ դրամական պարտավորությունների ժամանակ՝

- պարտքի հիմնական գումար գոյություն չունի, հետևաբար տուժանքը կիրառելի չէ,
- պարտքի հիմնական գումար գոյություն չունի, հետևաբար տուժանքը չի կարող սահմանափակվել և նվազեցվել:

Առաջին մեկնաբանության դեպքում սահմանափակվում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքները, երկրորդի դեպքում՝ չի իրացվում սոցիալական արդարության ֆունկցիան և չի կանխվում իրավունքի չարաշահումը: Արդյունքում, բարի նպատակին ուղղված կարգավորումը խաթարում է քաղաքացիական օրենսդրության համակարգը:

Եթե օրենսդիրն այս դեպքում շարժվեր համակարգային մոտեցմամբ, հստակ կսահմաներ, որ համապատասխան կարգավորումը վերաբերում է միայն դրամական պարտավորություններին կամ այն պարտավորություններին, որոնց մի կողմը բանկն է կամ վարկային կազմակերպությունը:

¹³ St' u **Коровяковский Д. Г.**, Неустойка как способ обеспечения исполнения обязательств // Бухгалтер и закон., №1(85), 2006, էջ 24:

Այս երկու օրինակները բացառություն չեն: Կան մի շարք այլ փոփոխություններ, որոնք կատարվել են համակարգային մոտեցման անտեսմամբ: Օրինակ՝ հարևանային իրավունքի ներդրումը, սերվիտուտի բարեփոխումները:

Քաղաքացիական օրենսդրությունը շատ բարդ ոլորտ է, ուստի ունի բազմաթիվ համակարգային կապեր: Որևէ փոփոխություն պետք է լինի հստակ հաշվառված և հնարավորինս նպատակային: Այլապես, բարեփոխումն իրականում բերելու է ավելի մեծ խնդիրների և որպես հետևանք նոր փոփոխությունների:

РЕФОРМЫ ГРАЖДАНСКОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА: КРИТИКА ОТСУТСТВИЯ СИСТЕМНОГО ПОДХОДА

Арсен Тавадян

*Доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук*

В статье описываются два примера реформ Гражданского кодекса РА: внедрение института обеспеченных прав и реформа неустойки. Указывается, что эти реформы были осуществлены без системного подхода, а также без учёта логики гражданского законодательства. В результате реформы на самом деле привели к новым проблемам, которых возможно было избежать, если бы законодатель проявил системный подход.

Civil Law Reforms: A Critique of the Lack of a Systematic Approach

Arsen Tavadyan

*Associate Professor at YSU Chair of Civil Law,
Candidate of Legal Sciences*

The article describes two examples of reforms of the Civil Code of the Republic of Armenia: introduction of the institution of secured rights and reform of the penalty. It is indicated that these reforms were carried out without a systematic approach, as well as without taking into account the logic of civil legislation. As a result, the reforms actually led to new problems that could have been avoided if the legislator had taken a systematic approach.

Բանալի բառեր - ապահովված իրավունք, տուժանք, համակարգային մոտեցում:

Ключевые слова: обеспеченные права, неустойка, системный подход.

Key words: secured rights, penalty, systematic approach.

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶԵԼԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիլիթ Պետրոսյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ,
խրավարական գիտությունների թեկնածու*

Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը¹:

Հետևաբար, օրենքով սահմանված որոշակի կանոնների պահպանմամբ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը, որը տեղի է ունենում գործը դատաքննության նախապատրաստելու փուլում, դատարանի կարևորագույն խնդիրներից մեկն է: Ըստ այդմ՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Այսպիսով, գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները վկայակոչելու, դրանք հաստատող ապացույցները

¹ Տե՛ս **Jaffe L. L.**, Administrative Law: Burden of Proof and Scope of Review //Harvard Law Review, T. 79, № 5, 1966, էջ 914-920:

բացահայտելու, մինչև դատաքննությունը սկսվելը դատարան ներկայացնելու և չներկայացնելու հետևանքների վերաբերյալ նորմերն առաջին հերթին ուղղված են գործին մասնակցող անձանց ակտիվությունը խրախուսելուն, նրանց կողմից դատավարական իրավունքների չարաշահումը բացառելուն, դատավարական կարգապահությունը, դատաքննության կանոնավոր ընթացքն ու ողջամիտ ժամկետներում դրա ավարտն ապահովելուն²:

ՎԴՕ 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, իսկ ՎԴՕ 89-րդ հոդվածի 3-րդ մասում որպես դատարանի կողմից նախնական դատական նիստում իրականացվող դատավարական գործողություն է սահմանվել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելը: Նշված գործողությունն իրականացնելու համար «ex officio» սկզբունքի իրացմամբ դատարանը պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը³:

Ուշագրավ է, որ ՀՀ օրենսդրությունը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելու հարցում դատարանին չի դիտարկել որպես «պասիվ արբիտր»: Այսպես, օրինակ, քաղաքացիական դատավարությունում ապացուցման առարկան որոշելիս դատարանը չի կարող սահմանափակվել գործին մասնակցող անձանց ներկայացրած փաստերով և իր նախաձեռնությամբ դրա մեջ պետք է մտնի նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ փաստեր: Նման իրավակարգավորումը, որը հատուկ է խառը մրցակցային դատավարություն ունեցող գրեթե բոլոր երկրների դա-

² Տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 87:

³ Տե՛ս **Koche R.** Beweis Antrag und Amtsermittlung im Verwaltungsprozess. Boorberg, 2012, էջ 17:

տական համակարգերին, հիմնականում պայմանավորված է դատարանի օժանդակող գործառնություններով⁴:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի պարզման լիազորությունը վարչական դատավարությունում առավել ընդգրկուն է, պայմանավորված այս դատավարությունում «ex officio» սկզբունքի առկայությամբ:

Գ. Օսբորնի պնդմամբ «ex officio» (inquisitorial) սկզբունքի բովանդակությունը կազմող տարրերից հիմնականը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելն է⁵:

Նմանատիպ դիրքորոշում են արտահայտել նաև Կ. Ա. Պավլենկոն և Ե. Վ. Խամատովան, որոնք վարչական դատարանի ակտիվության դրսևորում են համարել ոչ միայն վարչական դատավարության մասնակիցներին իրենց իրավունքների իրականացման հարցում օժանդակելը, այլև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերի պարզման համար անհրաժեշտ նախադրյալներ ապահովելը⁶:

Գործի փաստական հանգամանքները պարզելու դատարանի լիազորությունը որպես դատարանի «ակտիվ լիազորություն» քննարկվել է տարբեր հեղինակների կողմից, որոնք փորձել են տալ դրա սահմանումը:

Այսպես, Ե. Կոնոնենկոյի բնորոշմամբ գործի փաստական հանգամանքների պարզումը դատարանի կողմից գործի լուծման համար անհրաժեշտ բոլոր փաստերը պարզելու համար օրենքով նախատեսված միջոցների ձեռնարկումն է, այդ թվում՝ սեփական նախա-

⁴ Տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևան, Արդարադատության սկադեմիա, 2020, էջ 42:

⁵ Տե՛ս **Osborne G.** Inquisitorial Procedure in the Administrative Appeals Tribunal-A Comparative Perspective // Fed. L. Rev, 1982, էջ 150-154:

⁶ Տե՛ս **Павленко К. А., Хаматова Е. В.** Цели, задачи и средства доказывания: специфика административного судопроизводства и гражданской процессуальной формы // Вестник Воронежского института МВД России, № 3, 2015, էջ 148-150:

ձեռնությամբ ապացույցները բացահայտելը և պահանջելը⁷: Դ. Ա. Նենսը գործի փաստական հանգամանքները պարզելը բնորոշում է որպես ինկվիզիցիոն լիազորություն, որի ուժով դատարանը հավաքում է «լավագույն» ապացույցները⁸:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության հասկացությունը սահմանելու համար անհրաժեշտ է բացահայտել այդ լիազորության բովանդակությունը: Ընդ որում, ՎՊՕ 5-րդ հոդվածի 2-րդ մասով փորձ է արվել սահմանել այն:

Այսպես, դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, ի թիվս այլնի, պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Օ. Պ. Զիստյակովայի կարծիքով գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորությունը ենթադրում է՝

- ապացուցման առարկան որոշելու համար անհրաժեշտ բոլոր փաստերի վերհանում,

- հայցի կամ կողմերի առարկությունների հիմքում չընկած և նրանց կողմից չներկայացված, սակայն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերհանում և կողմերի հետ քննարկում,

⁷ St' u **Коновенко Е. В.**, К вопросу о практике применения принципа официального выяснения всех обстоятельств дела в административном судопроизводстве//журнал Legea si Viata, № 11/2, 2015, էջ 69-71:

⁸ St' u **Nance D. A.**, The best evidence principle //Iowa L. Rev, T. 73, 1987, էջ 236:

- ապացուցման առարկայի մեջ այնպիսի փաստերի ներառում, որոնց վերաբերյալ կողմերը չեն վիճում, սակայն դրանք համապատասխան նյութական իրավունքում համարվում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր,

- ապացուցման առարկայից հանել կողմերի վկայակոչած, սակայն գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը,

- ապացույցներ պահանջելը,

- անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու համար որոշակի գործողություններ իրականացնելը, օրինակ, սեփական նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելը⁹:

Ե. Ա. Շիլովան նշել է, որ գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու համար դատարանը պետք է ունենա հնարավորություն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից պահանջելու ապացույցներ¹⁰:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության բովանդակության բացահայտման համար հարկ ենք համարում անդրադառնալ նաև այս առումով առկա միջազգային փորձին:

Այսպես, Գերմանիայի «Վարչական դատավարության մասին» ակտից բխում է, որ դատարանը պարտավոր է կողմերին առաջարկել համագործակցել փաստերի վերհանման հարցում (obligation of support): Ընդ որում, եթե այդ լիազորության իրականացման արդյունքում որոշ փաստեր մնում են չպարզված կամ չհստակեցված, դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանք պարզելու համար, այդ թվում՝ պահանջել անհրաժեշտ ապացույցներ: Արդյունքում, ապացուցման բեռի հարցը ծագում է միայն այն դեպքում, երբ լրիվ քննության արդյունքում գործի լուծման համար էական նշանա-

⁹ St'u **Чистякова О. П.**, Проблема активности суда в гражданском процессе // Дисс. ... к.ю.н., Москва. 1997, էջ 163:

¹⁰ St'u **Анатолевна Ш. Е.**, К вопросу о роли суда при реализации принципа состязательности и равноправия сторон в административном судопроизводстве // Бизнес в законе, № 1, 2011, էջ 111:

կություն ունեցող փաստը մնում է չհաստատված¹¹:

Էստոնիայի վարչական դատավարության օրենսգրքից հետևում է, որ կողմերը պարտավոր են ներկայացնել գործի լուծման համար անհրաժեշտ բոլոր ապացույցները: Այդուհանդերձ, «ex officio» սկզբունքի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզել և անհրաժեշտության դեպքում այդ նպատակին հասնելու համար սեփական նախաձեռնությամբ ապացույցներ հավաքել¹²:

Շվեդիայի վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ վարչական դատարանը պահանջում է անհրաժեշտ ապացույցները, անհրաժեշտության դեպքում վարչական մարմնից պահանջում է կոնկրետ փաստի վերաբերյալ հիմնավորումներ և մեկնաբանություններ ներկայացնել¹³:

Լատվիայում և Լիտվայում վարչական դատարանը առաջարկում է կողմերին ներկայացնել լրացուցիչ ապացույցներ կամ սեփական նախաձեռնությամբ պահանջում է կոնկրետ ապացույցները և հարցաքննում դրանք կազմած պետական իշխանության մարմնի աշխատակցին¹⁴:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության բովանդակությունը բացահայտվել է նաև ՎՃճաբեկ դատարանի կողմից՝ արձանագրելով, որ դատարանն ան-

¹¹ Տե՛ս **Dr. Carsten G.** judge at the Federal Administrative court, Administrative justice for Europe: Report for Germany, Leipzig, http://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/germany/germany_en.pdf (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

¹² Տե՛ս Administrative justice for Europe: Report for Estonia, http://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/estonia/estonia_en.pdf (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

¹³ Տե՛ս Administrative justice for Europe: Report for Sweden, http://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/sweden/sweden_en.pdf (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

¹⁴ Տե՛ս Administrative justice for Europe: Report for Latvia, Administrative justice for Europe: Report for Lithuania http://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/latvia/latvia_en.pdf, http://www.aca-europe.eu/en/eurtour/i/countries/lithuania/lithuania_en.pdf (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

տեսել է այդ լիազորության բովանդակության մեջ մտնող հետևյալ դատավարական պարտականությունները.

- դատարանն իր նախաձեռնությամբ չի ձեռնարկել համարժեք միջոցներ՝ տվյալ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար,

- դատարանը չի պահանջել, որ ներկայացվեն սույն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները¹⁵:

Հատկանշական է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու կարգն ունի որոշակի առանձնահատկություններ քաղաքացիական և վարչական դատավարություններում:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով¹⁶:

Մինչդեռ, ՎՊՕ 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, իսկ ՎՊՕ 5-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ դատարանը այդ նպատակին հասնելու համար ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Ավելին, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՎՊՕ 5-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների մեկնաբանությանը, նշել է, որ սահմանված պարտականությունների ոչ պատշաճ կատարումը կարող է հանգեց-

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշումը:

¹⁶ Ընդունվել է 09.02.2018 թվականին: Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), Հոդ. 208:

նել ոչ արդյունավետ դատաքննության իրականացմանը, ինչը գործնականում կբացառի վեճի պատշաճ քննության և ճիշտ լուծման հնարավորությունը, հետևաբար, եթե դատարանը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում վկայակոչված իրավանորմերի պահանջները և իր նախաձեռնությամբ չի ձեռնարկում համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, չի պահանջում, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները, ապա դրա հետևանքով չի ապահովվում վարչական արդարադատության խնդիրների լուծումը, մասնավորապես՝ հանրային-իրավական վեճերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն ու լուծումը, օրինականության վերականգնումն ու ամրապնդումը:¹⁷

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության, վարչական դատավարությունում դատարանին վերապահվել է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը ի պաշտոնե որոշելու բացարձակ հնարավորություն՝ չկաշկանդվելով գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերով:

Գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության առնչությամբ արտահայտված տեսական մոտեցումների և միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորությունը ենթադրում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը վերհանելու պարտականություն:

Այս առումով անհրաժեշտ է բացահայտել «կոնկրետ գործի լուծ-

¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/5084/05/14 վարչական գործով 02.12.2016 թվականի որոշումը:

ման համար անհրաժեշտ իրական փաստեր» հասկացությունը և դատարանի՝ գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու լիազորության և գործին մասնակցող անձանց՝ ապացուցման պարտականության հարաբերակցության հարցը:

Այս հարցերի վերաբերյալ միասնական չեն տեսության մեջ առկա դիրքորոշումները: Այսպես, օրինակ, Ա. Վ. Մարկինը գտնում է, որ ապացուցման առարկան ինքնուրույն որոշելու դեպքում դատարանը ձևավորում է գործի վերաբերյալ իր դիրքորոշումը՝ կորցնելով անաչառությունը և քննելով նյութաիրավական վեճը առանց դրա իրական բովանդակությունը բացահայտելու¹⁸:

Մինչդեռ, հեղինակների երկրորդ խումբը, ինչպես օրինակ Ա. Ի. Կոնովալովան, գտնում են, որ հանրային իրավական վեճը լուծելիս ապացուցողական նյութերի հավաքումը և գնահատումը պետք է հիմնված լինեն դատարանի ակտիվության վրա. անթույլատրելի է նման վեճերի լուծումը կողմերի կամաարտահայտությունից առկախելը¹⁹:

Օ. Պ. Չիստյակովայի կարծիքով ապացուցման առարկան ձևավորելու պարտականությունը ամբողջությամբ կողմերի վրա դնելու պարագայում, նախ իրավաբանական գիտելիքներ չունեցող կողմը կհայտնվի ծանր դրության մեջ, երկրորդ՝ ապացուցման առարկան կվերածվի կողմերի նախընտրությամբ ներկայացված փաստերի ամբողջության, որը պարտադիր կդառնար դատարանի համար:²⁰

Համաձայնելով հեղինակների երկրորդ խմբի դիրքորոշմանը՝ հարկ է առանձնացնել Ս. Գ. Մեդրյանի տեսակետը, համաձայն որի՝ գործին մասնակցող անձինք իրենց պահանջների և առարկություն-

¹⁸ St' u **Маркин А. В.**, Судопроизводство по спорам о праве собственности граждан на недвижимость в жилищной сфере, Автореф. дисс. ... к.ю.н., Екатеринбург, 1994, էջ 17:

¹⁹ St' u **Коновалова А. И.**, Эффективная деятельность суда при разрешении публично-правовых споров // Российский судья, № 11, 2007, էջ 10-12:

²⁰ St' u **Чистякова О. П.**, Проблема активности суда в гражданском процессе // Дисс. ...к.ю.н., Москва, 1997, էջ 167:

ների հիմքում որոշակի հանգամանքներ դնելիս կարող են սխալվել: Նրանք կարող են վկայակոչել իրավաբանական փաստեր, որոնք կիրառման ենթակա իրավանորմերով չեն արժևորվում, հայցի առարկային չեն վերաբերում, որևէ նշանակություն չունեն տվյալ գործի ըստ էության քննության և լուծման համար:²¹

Հատկանշական է, որ Խորվաթիայի վարչական դատավարության օրենսգրքի նախագծի առնչությամբ թվինինգ ծրագրի արդյունքում ստացված մեկնաբանություններում ևս նշվել է, որ թեև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե քննելիս (inquisitorial principle) դատարանը պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, այդուհանդերձ կողմերը պարտավոր են աջակցել դատարանին այս գործառույթն իրականացնելու համար, քանի որ կողմերը իրենք քաջատեղյակ են գործի իրական փաստերից և ապացույցներից:²²

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի գործառույթը չպետք է ընկալվի որպես գործին մասնակցող անձանց պասիվություն և իրավաբանական փաստերը դատարանին հայտնելու պարտականության բացակայություն:

Իրավաբանական փաստերը դատարանին հայտնելու պարտականությունը, այսինքն՝ հաստատման ծանրությունն առաջին հերթին դրվում է գործին մասնակցող անձանց վրա: Այսպես, հայցվորը հայցադիմումի մեջ ներառում է այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը (73-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ), պատասխանողը, իր հերթին, հայցադիմումի պատասխանի մեջ ներա-

²¹ Տե՛ս **Մեդրյան Ս. Գ.**, Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 55:

²² Տե՛ս **Karlovcan-Durovic L.**, CARDS 2004 Twinning Project Support to More Efficient, Effective and Modern Operation and Functioning of the Administrative Court of the Republic of Croatia // Croat. Pub. Admin, T. 7, 2007, էջ 40:

ռում է այն փաստերը, որոնք ընկած են իր առարկությունների հիմքում (86-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ):

Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԴՕ-ով նախատեսված կոնկրետ հայցատեսակներով վարչական մարմինն ունի ապացուցման պարտականություն, օրինակ, վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), ապա վարչական մարմինը պարտավոր է դատարանին ներկայացնել վարչական ակտի հիմքում ընկած փաստերը:

Նման դիրքորոշումը առարկայական է դառնում հատկապես դատական պրակտիկայում հանդիպող մի շարք դեպքերում, երբ վիճարկման հայց ներկայացված լինելու դեպքում վարչական մարմինը, չպատճառաբանված վարչական ակտ կայացնելու պարագայում, չի ներկայացնում վարչական մարմնի ընդունման համար հիմք հանդիսացած փաստերը, իսկ այնուհետև, ստանձնելով վարչական ակտի հիմքում ընկած փաստերի հիմնավորման բեռը, որոշակի դժվարություն է ստեղծում մյուս կողմի և դատարանի համար:

Այս առումով անհրաժեշտ է քննարկել այն հարցադրումը, թե արդյոք Վարչական դատարանը ձեռնարկում է կողմերի չվկայակոչած փաստերի պարզմանն ու հաստատմանն ուղղված քայլեր:

Հատկանշական է, որ նշված հարցին ի պատասխան Վարչական դատարանի աշխատակազմի 04.02.2019 թվականի թիվ ԴԴ-9-Ե3454/19 գրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Վարչական դատարանի՝ կողմերի չվկայակոչած փաստերի պարզմանն ու հաստատմանն ուղղված քայլերի ձեռնարկման առնչությամբ առկա չէ միասնական դատական պրակտիկա²³:

Այսպես, մի դեպքում Վարչական դատարանը միջոցներ է ձեռ-

²³ 21.01.2019 թվականին Վարչական դատարան հարցում է ուղարկվել «ex officio» սկզբունքի կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ, որին ի պատասխան ստացվել է Վարչական դատարանի դատավորների դիրքորոշումը:

նարկում կողմերի չվկայակոչած փաստերի պարզման ուղղությամբ, օրինակ, պարզելով այն փաստական հանգամանքները, թե վարչական ակտ կայացնելիս պահպանվել են արդյոք ընթացակարգային նորմերը, արդյոք երաշխավորվել է անձի լսված լինելու իրավունքը և այլն, մյուս դեպքում այդ լիազորությունն իրականացվում է միայն հայցի փաստական հիմքի շրջանակներում:

Հարկ է ընդգծել, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 15.12.2004 թվականի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ 2004 (20) հանձնարարականի համաձայն՝ վարչական ակտերը վերանայելիս դատարանը պետք է հնարավորություն ունենա գնահատելու օրենքի ցանկացած խախտում, ներառյալ իրավասության բացակայությունը, ընթացակարգային խախտումները և լիազորությունների չարաշահումը²⁴: Ստացվում է, որ անկախ հայցի հիմքում դրված փաստերից դատարանն ամբողջ ծավալով քննարկում է վարչական ակտի իրավաչափությունը:

Ինչպես արդեն նշել ենք այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը վարչական ակտի իրավաչափության գնահատումը կաշկանդել է շահագրգիռ անձի կամահայտնությամբ և վերջինիս մատնանշած իրավական և փաստական հիմքերի շրջանակներով:²⁵

Իրավական հիմքերի կապակցությամբ նախորդ պարագրաֆում արտահայտված դիրքորոշումից զատ, գտնում ենք, որ թեև ՎԴՕ-ն որպես հայցադիմումին ներկայացվող պարտադիր պահանջ է նախատեսել հայցվորի պահանջի հիմքում ընկած փաստերի մատնանշումը, այդուհանդերձ, գործի քննության ընթացքում կարող են ի հայտ գալ գործի քննության համար էական նշանակություն ունեցող նոր փաստեր, որոնց շահագրգիռ անձը կարող է կարևորություն չտալ:

²⁴ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 15.12.2004 թվականի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ 2004 (20) հանձնարարական, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=-09000016805db3f4 (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

²⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով 30.11.2018 թվականի որոշումը:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև Գերմանիայի Ֆեդերալ վարչական դատարանի դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ, որի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է առանց որևէ բացառության պարզել գործի լուծման համար անհրաժեշտ բոլոր փաստերը: Այս դեպքում գործին մասնակցող անձանց վարքագիծը ևս մեծ նշանակություն ունի, քանի որ նրանք կարող են կասկածի տակ դնել մյուս կողմի վկայակոչած փաստական հանգամանքները՝ այդպիսով ընդարձակելով դատական ճանաչողության սահմանները: Այնուամենայնիվ, գործի փաստական հանգամանքները պարզելու բեռը կրում է դատարանը, ավելին, վերջինս պարտավոր է պարզել նաև գործին մասնակցող անձանց կողմից չվկայակոչված սակայն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը²⁶:

Գտնում ենք, որ ՎԴՕ 5-րդ հոդվածով նախատեսված կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը պարզելու պարտականությունը կախված չէ կողմերի կամաարտահայտությունից և անկախ հայցի հիմքի փաստերից դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել նրանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի պարզման ուղղությամբ:

Ավելի՝ ՎԴՕ 5-րդ հոդվածով կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը պարզելու համար Վարչական դատարանի վրա դրվել է **ոչ բավարար փաստական տվյալները համալրելու առաջարկ ներկայացնելու պարտականություն**:

Ոչ բավարար փաստական տվյալները համալրելու առաջարկ ներկայացնելը, որը նախատեսված է նաև այլ երկրների վարչական դատավարության օրենսգրքերում, կարևոր գործիք է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի բացահայտման համար:

Այսպես, շատ հաճախ պատշաճ հայցատեսակ ներկայացնելու համար անհրաժեշտ է որոշակի փաստական տվյալներ ներառել հայցադիմումի մեջ, մասնավորապես վարչական ակտի ուժի մեջ

²⁶ St' u Decision of Federal Administrative Court of Germany, BVerwGE 106, 171/173:

մտնելու, ինչպես նաև կոնկրետ հայցատեսակի ներկայացման նախապայմաններ համարվող փաստերի վերաբերյալ: Օրինակ՝ պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայմաններ են բարենպաստ վարչական ակտ ընդունելու համար վարչական մարմնին դիմելը և վարչական մարմնի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելը: Ուստի քննարկվող նախապայմանների վերաբերյալ փաստական տվյալները պետք է ներկայացվեն դատարանին:

Հատկանշական է, որ պարտավորեցման հայցով դատարանը շատ հաճախ վերադարձնում է հայցադիմումը՝ առաջարկելով համալրել ոչ բավարար փաստական տվյալները, մասնավորապես՝ հայցադիմումին կցել վարչական մարմնին դիմելու և մերժվելու վերաբերյալ ապացույցները²⁷:

Կամ օրինակ, վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից ներկայացվել է վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջ, մինչդեռ հայցադիմումից և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ չէ, թե երբ է ուժի մեջ մտել վարչական ակտը²⁸:

Այդ դեպքում, դատարանը չի կարող վերադարձնել հայցադիմումը՝ նշելով, որ բաց է թողնվել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին, քանի որ պարզ չէ, թե երբ է ուժի մեջ մտել վարչական ակտը և արդյոք վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետը լրացել է, թե ոչ:

Նման դեպքում, Վարչական դատարանը պետք է վերադարձնի հայցադիմումը՝ նշելով, թե որ փաստերն է անհրաժեշտ համալրել:

Այսպիսով, վերը քննարկված օրինակների հիման վրա գտնում ենք, որ ոչ բավարար փաստական տվյալները կարող են համալրվել

²⁷ Տե՛ս, օրինակ, Վարչական դատարանի թիվ ՎՂ/11644/05/18 գործով 03.12.2018 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

²⁸ Տե՛ս, օրինակ, Վարչական դատարանի թիվ ՎՂ/3452/05/19 գործով 17.05.2019 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, եթե առանց այդ փաստերը համալրելու անհնար է որոշում կայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին (օրինակ՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելուն կամ դատարան դիմելու իրավական շահագրգռվածությանը վերաբերող փաստական տվյալներ), իսկ մյուս բոլոր դեպքերում՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:

Հարկ է անդրադառնալ նաև գործի փաստական հանգամանքները պարզելու դատարանի լիազորության բովանդակությունը կազմող մյուս տարրերին:

Այսպես, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի գործառույթի իրացումն անհնար է լիարժեք ապահովել առանց դրա բովանդակությունը կազմող՝ ապացույց պահանջելու, դրանք սեփական նախաձեռնությամբ ձեռք բերելու, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար համարժեք միջոցներ ձեռնարկելու դատարանի լիազորությունների իրականացման:

Վարչական դատարանը գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելիս ապացույցներ պահանջելուց զատ, միջոցներ է ձեռնարկում գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Մասնավորապես, Վարչական դատարանի աշխատակազմի 04.02.2019 թվականի թիվ ԴԴ-9-Ե-3454/19 գրության և դատական պրակտիկայի ուսումնասիրությունից հետևում է, որ Վարչական դատարանը մի շարք դեպքերում միջոցներ է ձեռնարկում գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու համար: Օրինակ՝ Վարչական դատարանը Ճանապարհային ոստիկանության վարչական ակտերի վիճարկման դեպքում Ոստիկանության պաշտոնական կայքից ներբեռնում է վարչական ակտի կայացման համար հիմք հանդիսացած տեսանյու-

թը կամ լուսանկարը, արագաչափ սարքերի որևէ գործառույթ չկիրարկելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար հարցումներ է ուղարկում քաղաքացիություն տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու հետ կապված գործերով՝ Ազգային անվտանգության ծառայությունից, որը չի հանդիսանում գործին մասնակցող անձ, պահանջում է անձին ժամանակավոր կացություն չտրամադրելու վերաբերյալ դիրքորոշման հստակեցում և այլն:

Ընդունված է համարել, որ մրցակցության սկզբունքից ելնելով, գործին մասնակցող անձինք են պարտավոր դատարանին ներկայացնել գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները, մինչդեռ, վարչական դատավարությունում ապացուցման առանձնահատկությամբ պայմանավորված դատարանը պահանջում է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները²⁹:

Ընդ որում, ՀՀ վարչական դատավարությունն այս առումով ևս ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, եթե միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ վարչական դատավարությունում հիմնականում ընդունված է «ex officio» սկզբունքի ամրագրման պայմաններում դատարանին սեփական նախաձեռնությամբ ապացույցներ պահանջելու լիազորություն տալը, ապա ՎԴՕ 5-րդ և 28-րդ հոդվածներից հետևում է, որ դատարանը ոչ միայն պահանջում է անհրաժեշտ ապացույցները, այլև դրանք ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ:

Մ. Ռզևուսկան, քննարկելով դատարանի ապացույցներ պահանջելու «ex officio» լիազորությունը, առանձնացրել է այն հարցադրումները, որոնք ենթակա են բացահայտման այս լիազորությունը պատշաճ իրականացնելու համար: Դրանք են.

- արդյո՞ք այս լիազորությունը վերաբերում է ցանկացած ա-

²⁹ Ст' у Жуковский А. Г. "Судоустройство Украины: учебник." Х.: Одиссей (2009), https://studbooks.net/78359/pravo/sudoustroystvo_ukrainy (հասանելի է 25.04.2021 թվականի դրությամբ):

պացույց պահանջելուն, թե ուղղված է կոնկրետ ապացույցների ձեռքբերմանը,

- ո՞ր դեպքում է պահանջվում ապացույցը,

- արդյո՞ք այս լիազորության իրականացման դեպքում մյուս կողմի համար սահմանված է հակակշռի մեխանիզմ³⁰:

Վերոնշյալ հարցերի քննարկմամբ հարկ է բացահայտել ապացույց պահանջելու «ex officio» լիազորության իրացման առանձնահատկությունները ՀՀ վարչական դատավարությունում:

Այսպես, ՎԴՕ-ով սահմանված չէ այն ապացույցների շրջանակը, որը կարող է պահանջվել այս լիազորության իրականացմամբ, ընդ որում, օրենսդիրը սահմանափակվել է միայն «անհրաժեշտ ապացույց» հասկացությամբ:

Վճռաբեկ դատարանը ևս, անդրադառնալով դատարանի այս լիազորությանը, նշել է, որ Վարչական դատարանը, կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր է գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելու նպատակով իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ և պահանջել, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու ու գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կոնկրետ գործով դատարանը չի կատարել իր այդ դատավարական պարտականությունը և չի պահանջել անհրաժեշտ ապացույցներ գործի քննության ու լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ (հայցվորը ենթարկվել է վարչական պատասխանատվության բնակավայրում սահմանված արագությունը գերազանցելու համար, իսկ դատարանը չի պարզել այն հանգամանքը, թե արդյոք ենթադրյալ իրավախախտման կատարման վայրը ճանապարհային երթևեկության կանոնների իմաստով

³⁰ St' u **Rzewuska M.**, Taking evidence ex officio by the court. Zeszyty Naukowe KUL 60.3, 2017, էջ 89-99:

հանդիսանում է բնակավայր, թե՛ ոչ³¹:

Այսինքն՝ դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցները ձեռք բերելու համար:

Դատավարագետներ Կ. Ա. Պավլենկոյի, Ե. Վ. Խամատովայի և Օ. Պ. Չիստյակովայի կարծիքով դատարանի՝ ապացույց պահանջելու լիազորությունը կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձինք, կրելով այդ ապացույցները դատարանին ներկայացնելու պարտականությունը, չեն կատարել այն, հակառակ պարագայում տուժում է դատական խնայողության սկզբունքը:

Այս առումով ՎԴՕ 28-րդ և 89-րդ հոդվածների վերլուծությունից կարելի է եզրահանգել.

- ✓ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները,

- ✓ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները,

- ✓ ապացույցներ ձեռք բերելու նպատակով Վարչական դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, դրանք պահանջելով դատավարության այն մասնակիցներից, պետական և տեղական ինքնակառավարման այն մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև դատավարությունում չներգրավված ֆիզիկական և իրավաբանական այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար,

³¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3314/05/14 վարչական գործով 02.12.2016 թվականի որոշումը:

✓ նախնական դատական նիստում դատարանը՝

- կողմերի հետ քննարկում և որոշում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը: Ապացուցում պահանջող փաստերի շրջանակը որոշելը նախապատրաստական փուլում չի սահմանափակում Վարչական դատարանի իրավունքը դատաքննության փուլում պահանջելու այլ ապացույցներ,

- սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները,

- կողմերի միջնորդությամբ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ պահանջում է անհրաժեշտ ապացույցներ:

Վերոգրյալ իրավական դրույթներից կարելի է եզրահանգել, որ ՎԴՕ 28-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ապացույց պահանջելու որոշումը, որն ապահովված է դատական հարկադրանքով, կայացվում է այն դեպքում, երբ նախնական դատական նիստում ապացույց պահանջելու և դրանք ներկայացնելու ժամկետներ սահմանելու պարագայում գործին մասնակցող անձը չի կատարում այն:

Ընդ որում, ՎԴՕ-ն չի պարունակում նորմեր այն մասին, թե երբ է այս որոշումը ուղարկվում հարկադիր կատարման կամ ինչ հետևանքներ են առաջանում նման որոշումը կամովին չկատարելու համար: Հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է ապացույց չներկայացնելու դեպքում տուգանքի նշանակման, ինչպես նաև ապացույց պահանջելու որոշման անհապաղ հարկադիր կատարման կանոններ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապացույց պահանջելու վերաբերյալ որոշումները, որպես կանոն, կայացվում են դատաքննության փուլում, ընդ որում, ապացույց պահանջելու որոշման հիման վրա տրված կատարողական թերթը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով կատարման նպատակով ուղարկելու պայմաններում էլ շատ հաճախ վարչական մարմինները չեն ներկայացնում որևէ ապացույց, չեն հայցում ապացույց ներկայացնելու նոր ժամկետ, ինչպես նաև

չեն հայտնում կատարման անհնարինության մասին տեղեկություններ³²:

Պատահական չէ, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգում ևս արձանագրվել է հետևյալը. «Վարչական դատարանում գործերի քննության անհարկի ձգձգման պատճառ շատ հաճախ դառնում է դատարանի ի պաշտոնե քննության շրջանակներում ապացույց պահանջելու մասին որոշումների չկատարումը վարչական մարմինների կողմից: Ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ այդ որոշումները կամավոր չկատարելու դեպքում, կատարումն ապահովվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, ինչը կարող է հաղթահարվել այն դեպքում, երբ նման որոշումները վարչական մարմնի կողմից կամավոր չկատարելու դեպքում, դատարանը ձեռնպահ մնա այդ որոշումները հարկադիր կատարման ներկայացնելու պրակտիկայից»³³:

Արդյունքում, քննարկված դեպքում չարդարացված կերպով ծախսվում են ինչպես դատարանի, այնպես էլ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ռեսուրսները:

Վարչական դատարանի աշխատակազմի 04.02.2019 թվականի թիվ ԴԴ-9-Ե-3454/19 գրության ուսումնասիրությունից ևս պարզ է դառնում, որ ապացույց պահանջելու մասին որոշումները, որպես կանոն, չեն կատարվում կամ ներկայացվում են դատաքննությունը ավարտելուց հետո, որի պատճառով Վարչական դատարանը շատ հաճախ վերսկսում է գործի քննությունը:

³² Տե՛ս օրինակ Վարչական դատարանի թիվ ՎԴ/8688/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/8043/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/6640/05/18 գործով 15.10.2018 թվականի, թիվ ՎԴ/8753/05/18 գործով 06.12.2018 թվականի, թիվ ՎԴ/8920/05/18 գործով 11.12.2018 թվականի վճիռները:

³³ Տե՛ս Բարձրագույն դատական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ, 2018, էջ 105:

Ընդ որում, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վարչական դատարանում տվյալ տարում ստացված գործերը շատ հաճախ չեն ավարտվում, քանի որ ապացույց պահանջելու մասին որոշում կայացնելուց հետո Վարչական դատարանը չի ավարտում գործը՝ ակնկալելով պահանջված ապացույցների ներկայացումը, ինչը ձգձգում է գործի լուծումը:

Հատկանշական է, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգրքի³⁴ 63-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու վերաբերյալ որոշումը ապահովված չէ դատական հարկադրանքով, այլ վարչական դատարանը կարող է դատական տուգանք նշանակել ապացույց չներկայացրած կամ իր կողմից սահմանված ժամկետում ապացույցը չներկայացրած գործին մասնակցող անձի նկատմամբ:

Որպես հարցի լուծում կարող է դիտարկվել ՎԴՕ 29-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն, եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասով բաշխվում է ապացուցման բեռը՝ ըստ հայցատեսակների: Այսինքն՝ օրենսդիրը յուրաքանչյուր հայցատեսակի մասով բաշխել է ապացուցման բեռը՝ միաժամանակ պարտավորեցնելով վարչական մարմնին ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

Միաժամանակ, ՎԴՕ-ում հարկ է նախատեսել նորմ համաձայն որի՝ եթե գործին մասնակցող անձի վկայակոչած փաստի վերաբերյալ ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով գտնվում է միայն գործին մասնակցող այլ անձի մոտ, ապա վկայակոչված փաս-

³⁴ Ст' u Кодекс административного судопроизводства Российской Федерации, от 08.03.2015 N 21-ФЗ (ред. от 29.07.2017):

տը համարվում է հաստատված, քանի դեռ գործին մասնակցող համապատասխան անձը հակառակը չի ապացուցել:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված դիրքորոշման համաձայն՝ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը³⁵:

Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված)³⁶:

Ապացույց պահանջելու մասին որոշման կատարման հետ կապված խնդիրների լուծման համար կարծում ենք՝ հարկ է.

- Վարչական դատարանի՝ ապացույց պահանջելու մասին որոշմամբ սահմանել ապացույց ներկայացնելու հստակ և ողջամիտ ժամկետներ,

³⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով 01.04.2011 թվականի որոշումը:

³⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով 22.04.2016 թվականի որոշումը:

- ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում Վարչական դատարանը ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ պետք է ուղարկի հարկադիր կատարման, իսկ անհարգելի պատճառով ապացույց չներկայացրած կամ սահմանված ժամկետում չներկայացրած անձի նկատմամբ նշանակվի դատական տուգանք,

- Վարչական դատարանը չպետք է վճռի կայացումը առկախի ստացվող ապացույցներից: Այլ կերպ ասած՝ ապացույց ներկայացնելու պարտականությունը չկատարելու դեպքում ex officio սկզբունքը պետք է համարել իրագործված:

Ամփոփելով ամբողջ վերոշարադրյալը՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորությունը կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը վերհանելու, դրանց վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ և ապացույցներ ձեռք բերելու համար դատարանի նախաձեռնությամբ դատավարական գործողությունների իրականացումն է,

2) գործին մասնակցող անձինք կրում են իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերի վկայակոչման պարտականություն (հաստատման ծանրություն), այդուհանդերձ, կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերը պարզելու պարտականությունը կախված չէ կողմերի կամաարտահայտությունից և անկախ հայցի հիմքի փաստերից դատարանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել նրանց կողմից չվկայակոչված, սակայն գործի լուծման համար անհրաժեշտ փաստերի պարզման ուղղությամբ,

3) գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի լիազորության պատշաճ իրացման համար կարևոր

գործիք է «*ex officio*» օժանդակման լիազորության, այն է՝ ոչ բավարար փաստական տվյալները համալրելու առաջարկ ներկայացնելու լիազորության իրացումը,

4) ոչ բավարար փաստական տվյալները կարող են համալրվել հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, եթե առանց այդ փաստերը համալրելու անհնար է որոշում կայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին (օրինակ՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելուն կամ դատարան դիմելու իրավական շահագրգռվածությանը վերաբերող փաստական տվյալներ), իսկ մյուս բոլոր դեպքերում՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում,

5) Վարչական դատարանը կայացնում է ապացույց պահանջելու մասին որոշում՝ ապացույց ներկայացնելու համար սահմանելով հստակ ժամկետ և նշելով սահմանված ժամկետում ապացույցը չներկայացնելու հետևանքների մասին: Այս պարտականությունը չկատարելու և դրա կատարման անհնարիությունը չհիմնավորելու դեպքում «*ex officio*» սկզբունքը համարվում է իրագործված, իսկ ապացույց ներկայացնելու պարտականություն կրող անձը պետք է կրի այն չներկայացնելու հետ կապված բացասական հետևանքները: Այսպես, եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի կմա փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը: Միաժամանակ, եթե գործին մասնակցող անձի վկայակոչած փաստի վերաբերյալ ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով գտնվում է միայն գործին մասնակցող այլ անձի մոտ, ապա վկայակոչված փաստը համարվում է հաստատված, քանի դեռ գործին մասնակցող համապատասխան անձը հակառակը չի ապացուցել:

6) անհրաժեշտ է ՎԴՕ 28-րդ հոդվածում նախատեսել, որ ապացույց պահանջելու մասին որոշումը ենթակա է անհապաղ հարկադիր կատարման,

7) ՎԴՕ 128-րդ հոդվածով նախատեսված լրացուցիչ որոշում կայացնելու հիմքերում անհրաժեշտ է լրացում կատարել՝ անհարգե-

լի պատճառով ապացույց չներկայացնելու կամ սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում համապատասխան պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու համար, ինչպես նաև կիրառել դատական տուգանք անհարգելի պատճառով ապացույց չներկայացրած կամ սահմանված ժամկետում չներկայացրած գործին մասնակցող անձի նկատմամբ:

**ВЫЯСНЕНИЕ ФАКТИЧЕСКИХ ОБСТОЯТЕЛЬСТВ ДЕЛА
“EX OFFICIO” В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ**

Лилит Петросян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Административно-процессуальный кодекс РА не содержит подробных определений понятия, содержания, объема и круга применения принципа “ex officio” (рассмотрение дела по должности), его реализации, в результате чего отсутствует единая судебная практика по проявлению данного принципа на этапах состава процессуальных действий, составляющих содержание данного принципа, порядка и объема их реализации.

Данная статья посвящена принципу выяснения фактических обстоятельств дела “ex officio”, который в наибольшей степени подчеркивает особенности административного судопроизводства. Соответственно, обсуждается вопрос активной роли суда в административном судопроизводстве, предусматривающем принцип выяснения фактических обстоятельств дела “ex officio”.

В статье детально рассматривается содержание принципа выяснения фактических обстоятельств дела «ex officio».

**ESTABLISHING THE FACTUAL CIRCUMSTANCES OF THE CASE “EX
OFFICIO” IN ADMINISTRATIVE COURT PROCEDURE**

Lilit Petrosyan

*Lecturer at YSU Chair of Civil Procedure,
Candidate of Legal Sciences*

The code of Administrative Court Procedure of Armenia does not have detailed regulations on the definition, content, the scope and application of “ex officio” principle, as a result, there is no unified practice on the judicial actions forming the content of this principle, the application and scope of these judicial actions.

The article is devoted to establishing the factual circumstances of the case of "ex officio" at the Administrative Court of the RA. The active role of the court is being discussed when establishing the factual circumstances of the case.

Thus, the article discusses definition and scope of establishing the factual circumstances of the case.

Բանալի բաներ - վարչական դատավարություն, ապացույց պահանջել, գործի փաստեր, ի պաշտոնե պարզել:

Ключевые слова: административное судопроизводство, требовать доказательства, обстоятельств дела, выяснить "ex officio".

Key words: administrative court procedure, evidence, requesting evidence, facts of the case, establish the facts "ex officio".

**ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՍԲ ԵՎԳԵՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԵՐԻ
ՔՐԵԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲԻՈԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

Աննա Վարդապետյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

...«Արդյո՞ք Աստված մեր գեներում է»¹ հարցադրումն առաջին անգամ ինձ ստիպեց մտածել, որ մարդու գենոմի վերաբերյալ ուսումնասիրությունների ու դրա հետ կապված փորձարկումների խորքային, հաճախ չգիտակցված նպատակը Արարչի փնտրտուքներն են, Ստեղծագործության միջոցով Արարչին ճանաչելու ձգտումը...

Գործող քրեական օրենսգրքի 127.1-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում եվգենիկական փորձերի իրականացման համար: ՀՀ քրեական օրենսգրքում հոդվածը լրացվել է 2018 թվականի մարտի 21-ին թիվ ՀՕ-161-Ն օրենքով: Լրացման հիմնավորումը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի հիման վրա ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններն են: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ բժշկության և կենսաբանության ոլորտներում արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը: Լրացման վերոնշյալ հիմնավորման մեջ արձանագրված է, որ եվգենիկական փորձերի իրականացման համար պատասխանատվության մասով ՀՀ առողջապահության նախարարության կողմից կատարված՝ օտարերկրյա պետությունների օրենս-

¹ Ամբողջական հոդվածը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://content.time.com/time/subscriber/article/0,33009,995465,00.html>

դրությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը. Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգիրքն ուղղակիորեն նշում է նման արարքի արգելված լինելը՝ հետևյալ ձևակերպմամբ. «Եվգենիկական փորձերը, ուղղված մարդու լավասերման կազմակերպմանը (...)»: Արարքը պատժվում է 30 տարի ազատազրկմամբ և յոթ ու կես միլիոն եվրոյի չափով տուգանքով: Մի շարք երկրների քրեական օրենսգրքերում կան փոքր-ինչ այլ ձևակերպումներ. այսպես Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքում սահմանված է. «Արգելված կենսաբժշկական փորձերի իրականացումը մարդու սաղմի կամ մարդու ներգրավմամբ առաջացնում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում, տուգանք կամ ազատազրկում՝ մինչև երկու տարի ժամկետով»: Իսպանիայի Թագավորության քրեական օրենսգրքում սահմանված է. «Կլոնավորման միջոցով նույնական մարդկանց ստեղծումը կամ այլ գործընթացների իրականացումը՝ ուղղված ռասայական սելեկցիային՝ պատժվում է ազատազրկմամբ 1-ից 5 տարի ժամկետով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով», Ֆինլանդիայի Հանրապետության քրեական օրենսգրքի համաձայն. «Գենետիկ ժառանգականությանն ուղղված ապօրինի միջամտությունները, մարդու, մարդու սաղմի ամբողջականության դեմ ուղղված գիտական փորձերի իրականացումը, որոնք նպատակ ունեն (...) սաղմերի միախառնմամբ ստեղծել մարդկային սերունդ (...) պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով» (աղբյուրը՝ <http://www.legislationline.org/documents/section/criminal-codes>):

ՀՀ քրեական օրենսգրքում կատարված վերոնշյալ փոփոխությունների նախագծերը մշակելիս հաշվի է առնվել առավելապես Ֆրանսիայի Հանրապետության փորձը:²

² Նախագիծը և հիմնավորումը հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://www.e->

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)³ 182-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու վերարտադրողական կլոնավորման կամ եվգենիկական փորձերի համար: Հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ մարդու վերարտադրողական կլոնավորումը մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպը ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելն է, իսկ եվգենիկական փորձերը մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն կատարելն է: Հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված են հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները:

Ինչպես գործող քրեական օրենսգրքի, այնպես էլ Նախագծի վերլուծությունից բխում է, որ եվգենիկական փորձերի համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածները շարադրված են բլանկետային դիսպոզիցիաներով և այդ հոդվածների մեկնաբանության համար առանցքային նշանակություն ունի *«մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված գործողություն»* ձևակերպման համակարգային վերլուծությունը, քանի որ *«եվգենիկական փորձ»* հասկացությունը ինչպես ՀՀ գործող քրեական օրենսգրքում, այնպես էլ Նախագծում բացահայտված է հենց «սելեկցիա (լավասերում)» եզրույթի միջոցով:

Նախքան քրեաիրավական վերլուծությունը, սակայն, կարծում ենք անհրաժեշտ է անդրադառնալ և համառոտ պարզաբանել «եվգենիկա» հասկացությունը, ինչպես նաև վերլուծել եվգենիկայի սահմանների վերաբերյալ ժամանակակից ընկալումներն ամրագրող միջազգային փաստաթղթերը:

«Եվգենիկա» հասկացության «հին» և «նոր» ընկալումները

«Եվգենիկա» հասկացության պատմական զարգացումը մի քանի փուլ է անցել. սաղմնավորվելով որպես իդեալիստական հայեցա-

draft.am/projects/322

³ Հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://parliament.am/reading1_docs7/K-634_R1.pdf

կարգ՝ եվգենիկան նենգափոխվել է ռասայի «հիգիենայի» վերաբերյալ նացիստական ծրագրով և խոցելի ու «ցածրակարգ» ռասայի ներկայացուցիչների ստերիլիզացիայի՝ ամերիկյան մոտեցումներով: Այս նենգափոխումները հանգեցրել են եվգենիկայի վերաբերյալ բացառապես բացասական ընկալումների, սակայն նախքան նենգափոխումների մասին խոսելը՝ համառոտ անդրադառնանք հասկացության ծագումնաբանությանն ու հիմնական բովանդակությանը:

«Եվգենիկա» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1883 թվականին Ֆրենսիս Գալթոնի կողմից, հունարենից թարգմանաբար նշանակում է բարձր ծագում, արժանապատիվ ժառանգականություն ունեցող: Գալթոնի ուսումնասիրությունների առանցքում պոզիտիվ եվգենիկան էր, որի նպատակը բարձր որակներով օժտված անհատների ձևավորումն էր՝ հասարակության ամենաշնորհալի անդամների վերարտադրողականության աճին նպաստելու միջոցով⁴:

«Եվգենիկա» հասկացության «հին» ընկալումներում այս հասկացությունը երկշերտ է՝ պոզիտիվ և նեգատիվ: Պոզիտիվ եվգենիկան ենթադրում է մարդու դրական, ցանկալի բնութագրիչ առանձնահատկությունների տարածում⁵: Նեգատիվ եվգենիկան ենթադրում է մարդու սոցիալապես անցանկալի գեների տարածման նվազեցում⁶: 20-րդ դարի սկզբին նեգատիվ եվգենիկան տարբեր օրենսդրական կարգավորումների միջոցով տարածվեց բազմաթիվ երկրներում. հիմնական գաղափարախոսությունն այն էր, որ մարդկանց որոշակի խմբեր «սոցիալապես ոչ ադեկվատ» են և կազմում են տվյալ հասարակությանը ոչ հարիր միավոր (օրինակ՝ տկարամիտ անձինք, հոգեկան հիվանդություն ունեցող անձինք, հանցագործները, էպիլեպսիայով տառապող անձինք, թմրամիջոցային կախվածություն

⁴ St' u Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1), էջ 3-4:

⁵ St' u Romeo-Casabona, C. M. (1998). Health and Eugenics Practices: Looking Towards the Future. *European Journal of Health Law*. 5 (3), էջ 241-242:

⁶ St' u Powell, Russell (2015). In *Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome*. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջ 684:

ունեցող անձինք, կույրերը, համրերը և ավն)⁷: Նման մոտեցումները տարբեր դրսևորումներ են ունեցել՝ կախված այն հանգամանքից, թե ինչ հնարավոր վտանգ են տեսել վերոնշյալ խմբերի մեջ մտնող անձանցից. Դանիայում և Շվեյցարիայում, մասնավորապես, օրենքներ են ընդունվել, որոնք թեն հիմնված չէին ռասայական գերակայության գաղափարի վրա, սակայն դրանցում ամրագրված էր, օրինակ, հոգեկան և սեռական շեղումների դեպքում որոշ միջոցառումների իրականացումը⁸: Շվեդիայում 1934-1976 թթ. մոտավորապես 20.000 մարդ հարկադրաբար ստերիլիզացիայի է ենթարկվել՝ մտավոր հետամնացության, տեսողության խանգարումների և սեռական շեղումների պատճառով⁹: ԱՄՆ-ում 1907-1961 թթ. մոտ 62.000 մարդ հարկադրաբար ստերիլիզացվել է¹⁰: Մեծ Բրիտանիայի ներքին գործերի նախարարի պաշտոնում պաշտոնավարելու տարիներին (1910 թվականի փետրվարից մինչ 1911 թվականի հոկտեմբերը) Ուինսթոն Չերչիլը կողմ է արտահայտվել ներկայումս որպես «մտավոր հետամնացություն ունեցող» գնահատվող անձանց մեկուսացմանը, սեգրեգացիային և ստերիլիզացիային¹¹:

⁷ Sté u Report of the Committee to Study and to Report on the Best Practical Means of Cutting off the Defective Germ-Plasm in the American Population I. The scope of the committee's work, by Harry H. Laughlin, Secretary of the Committee (1914). New York, էջ 15:

⁸ Sté u Stepan, Nancy L. (1996). The Hour of Eugenics: Race, Gender, and Nation in Latin America. Ithaca and London: Cornell University Press, էջ 30-31:

⁹ Sté u Hyatt, Stephanie (1998). A Shared History of Shame: Sweden's Four-Decade Policy of Forced Sterilization and the Eugenics Movement in the United States. Indiana International & Comparative Law Review. 8(2), էջ 476-477:

¹⁰ Sté u Kluchin, Rebecca M. (2009) Fit to Be Tied: Sterilization and Reproductive Rights in America, 1950-1980, USA: Rutgers University Press, էջ 17:

¹¹ Sté u Gilbert, Sir Martin. Churchill and Eugenics. International Churchill Society: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://winstonchurchill.org/publications/finest-hour-extras/churchill-and-eugenics-1/>

Եվգենիկական շարժումը տարածվել է նաև Լատինական Ամերիկայում¹², Չինաստանում և Ճապոնիայում¹³, ինչպես նաև Մերքիայի, Խորվաթիայի և Սլովենիայի Թագավորությունում¹⁴:

Նացիստական Գերմանիայում Հիտլերը, հիմք ընդունելով եվգենիկայի վերաբերյալ ԱՄՆ-ում ընդունված օրենքները, հետևողականորեն նպաստել է Գերմանիայում նման օրենքների ընդունմանը՝ դրանք դիտարկելով որպես ընդունելի միջոցներ, որոնք Գերմանիայում ևս պետք է կիրառվեն¹⁵: Գերմանիայում «Ժառանգական հիվանդությունների տարածումը կանխելու մասին» օրենքն ընդունվել է 1933 թվականին: Նշված օրենքում որպես ժառանգական հիվանդությունների հնարավոր տարածումը կանխելու միջոց նշվում էր հարկադիր ստերիլիզացիան: Օրենքում անորոշ կերպով առանձնացված էին ժառանգական հիվանդություններով տառապող անձանց ինը խմբեր¹⁶: Սույն օրենքի հիման վրա Գերմանիայում մինչ 1939 թվականը մոտ 350.000 մարդ է հարկադրաբար ստերիլիզացիայի ենթարկվել¹⁷:

¹² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Stepan, Nancy L. (1996). *The Hour of Eugenics: Race, Gender, and Nation in Latin America*. Ithaca and London: Cornell University Press.

¹³ Տե՛ս Chung, Yuehtsen Juliette (2014). *Better Science and Better Race?: Social Darwinism and Chinese Eugenics*. *Isis*. 105 (4), էջ 799-800:

¹⁴ Տե՛ս Kuhar, Martin (2017). 'From an Impure Source, All Is Impure': The Rise and Fall of Andrija Stampar's Public Health Eugenics in Yugoslavia. *Social History of Medicine*. 30 (1), էջ 92-113:

¹⁵ Տե՛ս Hitler, Adolf. *Mein Kampf*. Translated in to English by James Murphy (1939), էջ 361: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://greatwar.nl/books/meinkampf/-meinkampf.pdf>

¹⁶ Տե՛ս Law for the Prevention of Offspring with Hereditary Diseases (July 14, 1933). *German History in Documents and Images*. Volume 7. Nazi Germany, 1933-1945: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://germanhistorydocs.ghi-dc.org/pdf/eng/English30.pdf>

¹⁷ Տե՛ս Miffler-Hill, Benno (1992). *Genetic Inequality and Social Injustice: A Lesson from History*. In BBV Foundation (Ed.) pp. 357-364. *Human Genome Project: Ethics*. Madrid, Bilbao: Thyssen-Bornemisza Collection, էջ 360:

Եվգենիկայի վերաբերյալ վերոշարադրյալ ընկալումները հիմք հանդիսացան երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված ցեղասպանության, ինչը հանգեցրեց նրան, որ պատերազմից հետո եվգենիկական շարժումն սկսեց անկում ապրել (թեև վիճահարույց օրենքները դեռ որոշ ժամանակ շարունակեցին ուժի մեջ մնալ Շվեդիայում և ԱՄՆ-ում):

Ժամանակակից գիտությունը, սակայն, նոր բացահայտումներ ունի բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների, գենետիկ թեստավորման, գենետիկ մոդիֆիկացիաների, կլոնավորման և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ, ուստի եվգենիկան կրկին արդի քննարկման թեմա է կամ, ավելի ճիշտ կլինի ասել, արդիականացել է «նոր» եվգենիկայի (եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների) ձևավորման հարցը: Այս համատեքստում եվգենիկայի վերաբերյալ մոտեցումները մասնագիտական գրականության մեջ քննարկումների ու բանավեճի առարկա են. որոշ աղբյուրներում եվգենիկան մեկնաբանվում է որպես վերարտադրողականությունն օգտագործելու միջոցով այնպիսի մարդկանց սաղմնավորմանն ուղղված քայլեր, որոնք օժտված են առաջընթացի համար անհրաժեշտ որակներով¹⁸: Այլ աղբյուրներում եվգենիկան մեկնաբանվում է որպես պրակտիկա, որի նպատակն է բարելավել մարդկային կյանքը՝ ծնվող կամ վերարտադրվող անձանց նկատմամբ ժառանգականության հիման վրա վերահսկողություն իրականացնելու միջոցով¹⁹: Եվգենիկան ընկալվում է նաև որպես սոցիալական շարժում, որի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարելավել «մարդ» տեսակը²⁰:

¹⁸ St' u Anomaly, Jonathan (2018). Defending eugenics, From cryptic choice to conscious selection. *Monash Bioethics Review*. 35 (1-4), էջ 24:

¹⁹ St' u Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1), էջ 3:

²⁰ St' u Harding John R. Jr. (1991). Beyond Abortion: Human Genetics and the New Eugenics. *Pepperdine Law Review*. 18 (3), էջ 447:

Եվգենիկայի վերաբերյալ «հին» և «նոր» ընկալումների միջև առկա տարբերություններից մեկն այն է, որ «նոր» եվգենիկայում բացակայում է կազմակերպված հարկադրանքը:²¹ Բացի այդ, եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումը գերծ է «հին» եվգենիկայում առկա՝ կոնկրետ գեների անընդունելիությունը դրանք կրող անձանց բարոյական արժեքների հետ նույնացնելու արատավոր պրակտիկայից,²² ինչպես նաև այն ընկալումից, որ, օրինակ, մարդու բոլոր առանձնահատկությունները որոշվում են բացառապես գեներով:²³

Մասնագիտական գրականության մեջ լայնորեն քննադատվում է եվգենիկայի վերաբերյալ «հին» մոտեցումը և ընդգծվում է, որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» մոտեցումը հիմնված է կամքի ազատության վրա: Դրա հետ մեկտեղ, սակայն, հեղինակները նշում են, որ եվգենիկայի վերաբերյալ «հին» մոտեցման որոշ տարրեր, օրինակ՝ բնակչության որակի բարելավման ձգտումը, ինչպես նաև խտրականության որոշ դրսևորումներ, շարունակում են գոյություն ունենալ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումներում:

Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալման որոշ դրսևորումների առկայության կամ բացակայության վերաբերյալ քննարկումները որևէ կերպ օգտակար չեն գենետիկայի ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ծագող էթիկական և իրավական խնդիրների լուծման համար²⁴, սակայն կարծում ենք՝ եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալման որոշ դրսևորումների շեշտադրումն օգ-

²¹ St' u Romeo-Casabona, C. M. (1998). Health and Eugenics Practices: Looking Towards the Future. *European Journal of Health Law*. 5 (3), էջ 243:

²² St' u Powell, Russell (2015). In *Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome*. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջ 684:

²³ St' u Ekberg, Merryn (2007). The Old Eugenics and the New Genetics Compared. *Social History of Medicine*. 20 (3), էջ 590:

²⁴ St' u Cavaliere, Giulia (2018). Looking into the shadow: the eugenics argument in debates on reproductive technologies and practices. *Monash Bioethics Review*. 36 (1-4), էջ 17-18:

տակար է վիճահարույց տեխնոլոգիաների վրա հատուկ ուշադրություն հրավիրելու տեսանկյունից և կարող է հակակշռող դերակատարում ունենալ նոր տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ չկշռադատված ազատական մոտեցումները զսպելու համար:

Ինչպես նշվեց վերևում, «նոր» եվգենիկայի վերաբերյալ ազատական մոտեցումների հիմնական փաստարկները խաբսխված են կամքի ազատության և անձնական անձեռնմխելիության ելակետերի վրա²⁵: Ի պաշտպանություն ազատական մոտեցման՝ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ գենետիկ մոդիֆիկացիաներն անհրաժեշտ են «մարդ» տեսակի պահպանության համար, քանի որ ժամանակակից բժշկական միջամտությունները մարդու վրա էվոլյուցիոն ազդեցություն են ունենում, իսկ ավելի կոնկրետ՝ հանգեցնում են կոդավորող գենոմ ԴՆԹ բազային գույգի մուտացիաների կուտակման, ինչի արդյունքում այն կարող է դառնալ ոչ ֆունցիոնալ: Օրինակ՝ սննդարտադրության ժամանակակից տեխնոլոգիաների և տարբեր արհեստական սննդային հավելումների պատճառով թուլացել են պոտենցիալ թունավոր սննդի հայտնաբերման համար պատասխանատու համային ռեցեպտորների գենային կոդերը կամ տեսալսողական բժշկական սարքավորումների զարգացմանը և դրանց կիրառմանը զուգընթաց ավելանում են դրանք կիրառող անձինք, ինչը կարող է հանգեցնել տեսալսողական օրգանների սրության համար պատասխանատու գենային կոդերի դեգրադացիային և այլն²⁶:

Անդրադառնալով եվգենիկայի վերաբերյալ տարբեր ընկալումներին, «հին» և «նոր» եվգենիկաների տարբերություններին՝ հարկ է նշել, որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների համատեքստում հստակեցված չէ, թե ինչն է դիտարկվում որպես «ավելի լավ»,

²⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Robertson, John A. (1994). *Children of Choice: Freedom and the New Reproductive Technologies*. Princeton, New Jersey: Princeton University Press:

²⁶ Տե՛ս Powell, Russell (2015). In *Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome*. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջ 676-677:

ինչն է «մարդկության առաջընթացի համար անհրաժեշտ» կամ որն է այն արարքը, որը հակասում է պաշտպանության ենթակա հիմնարար արժեքներին: Օրինակ՝ կան արարքներ, որոնք ներկայումս ընդունելի են համարվում և տեղավորվում են եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների մեջ, օրինակ՝ պտղի գենետիկ թեստավորումից հետո հղի կինը տեղեկացվում է, որ պտղի մոտ առկա է գենետիկ ծանր հիվանդություն և նշվում է, որ նման դեպքերում սովորաբար ցուցվում է աբորտ: Մեկ այլ օրինակ՝ բիրթոշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների ժամանակ, որպես կանոն, մի քանի էմբրիոններ են ստեղծվում և կնոջ արգանդում տեղադրվում են լավագույն որակներով օժտված էմբրիոնները (մնացած էմբրիոնները կամ սառեցվում են կամ ոչնչացվում), որպեսզի միջամտությունն ավարտվի լավագույն արդյունքներով և անհրաժեշտություն չառաջանա կրկնելու բիրթոշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումը²⁷: Ուստի, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների համատեքստում կարևոր է տարանջատել «անձի գենետիկ ինքնության բարելավումը» և «հիվանդությունների ու անոմալիաների վերացումը» այն դեպքերում, երբ դրա հնարավորությունն առկա է²⁸: Իհարկե, համաձայն ենք այն տեսաբանների հետ, որոնք գտնում են, որ վերոշարադրյալ ձևակերպման մեջ ամրագրված առաջին չափորոշիչը խնդրահարույց է և բիրթոշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների ժամանակ էմբրիոնների՝ մի շարք չափանիշներով իրականացվող թեստավորումների (հասակ, ինտելեկտ և այլն) շրջանակը գնալով ընդլայնվում է, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է նրան, որ վերոնշյալ թեստավորումները որակվեն որպես ««մարդ» տեսակի բարելավում», «ոչ թերապևտիկ նպատակներով իրականացվող բա-

²⁷ Sté Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1), էջ 6-7:

²⁸ Sté Gaille, Marie and Viot, Ge'raldine (2013). Prenatal diagnosis as a tool and support for eugenics: myth or reality in contemporary French society? *Medicine, Health Care and Philosophy* Volume 16 (1), էջ 85:

րելավում» կամ «Եվգենիկական ստեղծարարություն»²⁹: Երկրորդ չափորոշիչի հետ կապված, սակայն, կարծում ենք, որ այն անհրաժեշտ է, քանի որ Եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների զարգացմանը խոչընդոտող տոտալ արգելքներն ի գործու չեն արդյունավետ կերպով հակակշռել զարգացող ժամանակակից տեխնոլոգիաները և, ընդհակառակը, նպաստում են ոլորտում «սև շուկաների» ու «սև խոռոչների» առաջացմանը. մարդն ու գիտությունը ձգտելու են առաջընթացի, ձևավորելու են նոր տեխնոլոգիաների կիրառման պահանջարկ՝ դրանով նպաստելով «սև շուկայի» զարգացմանը՝ բխող բոլոր, այդ թվում՝ հանցավոր հետևանքներով: Ուստի կարծում ենք՝ բիոբժշկական տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակաշրջանում ներպետական և միջազգային մակարդակներում պետք է հետևողականորեն ուրվագծվեն «թերապևտիկ» և «ոչ թերապևտիկ» նպատակներով իրականացվող միջամտությունների բարոյաէթիկական և իրավական, այդ թվում՝ քրեաիրավական սահմանները:

Եվգենիկայի վերաբերյալ ժամանակակից ընկալումներն ամրագրող միջազգային փաստաթղթերը

Եվգենիկայի հարցերի վերաբերյալ միջազգային փաստաթղթերի մասին խոսելիս հարկ է նշել «Մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը (ընդունված 1997 թվականին), «Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը (ընդունված 2005 թվականին), «Մարդու գենետիկ տվյալների մասին» միջազգային հռչակագիրը (ընդունված 2003 թվականին), վերջինս ամրագրում է գենետիկ թեստի հասկացությունը³⁰: Այս համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ ՄԱԿ-ի շրջանակներում չի հաջողվել ընդունել մարդու վերարտադրողական կլո-

²⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Persson Ingmar, Savulescu Julian (2019). The Duty to be Morally Enhanced. *Topoi*. 38(1), էջ 7-14:

³⁰ Տե՛ս UNESCO (2005). Universal Declaration on Bioethics and Human Right; UNESCO (1997). Universal Declaration on the Human Genome and Human Rights; UNESCO (2003). International Declaration on Human Genetic Data.

նավորումն իրավաբանորեն արգելող փաստաթուղթ, դրա փոխարեն, սակայն, 2005 թվականին ընդունվել է «Մարդու կլոնավորման մասին» հռչակագիրը³¹, որը բացի այն, որ իրավաբանորեն պարտադիր բնույթ չունի, նաև հստակ չի արգելում ո՛չ վերարտադրողական, ո՛չ թերապևտիկ կլոնավորումը³²: Այլ խոսքով՝ վերոնշյալ փաստաթղթերը գործում են «փափուկ իրավունքի» տիրույթում: Հետևաբար, բաց է մնում այն հարցը, թե արդյոք պետությունները համաշխարհային (ունիվերսալ) մակարդակում երբևէ պատրաստ կլինե՞ն ամրագրել առավել կոնկրետ՝ սահմանափակող կամ արգելող կանոններ: Այս առումով որոշակի առաջընթաց առկա է Եվրոպայում: Եվգենիկական պրակտիկաների արգելքն առաջին անգամ ամրագրվել է «Հիմնարար իրավունքների մասին» ԵՄ խարտիայում, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում, որի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում պետք է պահպանվեն եվգենիկական այն պրակտիկաների կիրառման արգելքները, որոնք ուղղված են, մասնավորապես, մարդկանց սելեկցիային: Նշված կարգավորումն առաջին հայացքից անորոշ է թվում, հատկապես, եթե արգելքի միակ չափանիշը մարդկանց սելեկցիան է, բացի այդ, ձևակերպման մեջ օգտագործվում է «մասնավորապես» բառը, ինչից բխում է, որ կան եվգենիկական պրակտիկաներ, որոնք ուղղված չեն մարդկանց սելեկցիային: Ավելին, պարզ չէ, թե ինչ է ենթադրվում

³¹ St´u United Nations (2005). Declaration on Human Cloning. A/RES/59/280.

³² Երկրները, որոնք կողմ են կլոնավորման բացարձակ արգելքին, սկզբունքորեն կարող են մեկնաբանել Հռչակագրի տեքստն այնպես, որ ստացվի, թե արգելվում են կլոնավորման բոլոր ձևերը, մինչդեռ մյուս կողմից, այն երկրները, որոնք կողմ են միայն վերարտադրողական կլոնավորման արգելքին, կարող են մեկնաբանել Հռչակագրի տեքստն այնպես, որ ստացվի, թե արգելված են միայն այն կլոնավորման գործընթացները, որոնք հակասում են արժանապատվությանը, կամ հանդիսանում են վերարտադրողական կլոնավորում: Հռչակագիրը չի սահմանում ո՛չ «կլոնավորում» ո՛չ «մարդ արարած» հասկացությունները, այս մասին առավել մանրամասն տե՛ս Clados, Mirjam Sophia (2012). Bioethics in International Law: An Analysis of the Intertwining of Bioethical and Legal Discourses. Inaugural-Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie an der Ludwig-Maximilians-Universität. München, էջ 91:

«եվգենիական պրակտիկաներ» ձևակերպման տակ, քանի որ բիրոժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորման ժամանակ էմբիոնների և ֆետուսների ընտրությունը ևս կարող է դիտարկվել որպես եվգենիական պրակտիկա:

Եվգենիական պրակտիկաների՝ ԵՄ խարտիայում ամրագրված արգելքը բխում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ Հռոմի միջազգային քրեական դատարանի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի (g) ենթակետի ձևակերպումից: ԵՄ խարտիայի հիմնադիրները վերոնշյալ արգելքն ամրագրելիս հիմնվել են եվգենիկայի վերաբերյալ «հին» մոտեցումների վրա, քանի որ եվգենիական պրակտիկաների և հատկապես մարդկանց սելեկցիային ուղղված պրակտիկաների արգելքը պայմանավորված է նրանով, որ «հնարավոր են իրավիճակներ, երբ կազմակերպվեն և իրականացվեն սելեկցիոն ծրագրեր, այդ թվում՝ ստերիլիզացիա, հարկադիր հղիություն, հարկադիր էթնիկ ամուսնություններ, որոնք բոլորը Հռոմի միջազգային քրեական դատարանի ստատուտի համաձայն միջազգային հանցագործություններ են³³: Հետևաբար, ԵՄ խարտիայում ամրագրված՝ եվգենիական պրակտիկաների արգելքը ենթադրում է, որ պետության մակարդակում պետք է ներդրվեն արգելքի իրականացման համար անհրաժեշտ հիմքեր, կիրառվեն հարկադրանքի միջոցներ:

Եվգենիական պրակտիկաները ժամանակակից գենետիկայի լույսի ներքո այլ իմաստ ունեն, որը տարբերվում է պետությունների կողմից նախկինում իրականացված հարկադրական ծրագրերից: Ի լրումն, հարկ է նշել նաև, որ ԵՄ խարտիայի վերոնշյալ դրույթը կոչված է բիրոժշկության ոլորտում պաշտպանելու մարդու արժանապատվությունը, իսկ ինչ վերաբերում է եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալումներին (սելեկցիոն հարկադիր ծրագրեր և այլն), ապա

³³ St 'u European Union (2007). Explanations Relating to the Charter of Fundamental Rights. Official Journal of the European Union. 303/17. 14.12.2007.

դրանք պետք է իրավական գնահատականի արժանանան խոշտանգումների արգելքի համատեքստում:³⁴

Եվգենիկական պրակտիկաների արգելքն ուղղակիորեն երաշխավորված չէ նաև «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին, մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ նաև՝ «Բիոբժշկության մասին» կոնվենցիա)³⁵: Եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումներն առաջին հերթին կապված են վերոնշյալ կոնվենցիայի 13-րդ հոդվածում ամրագրված արգելքի հետ, որի համաձայն՝ «Մարդու գենոմի փոփոխությանն ուղղված միջամտություն կարող է իրականացվել միայն կանխարգելման, ախտորոշման կամ թերապևտիկ նպատակներով և միայն այն դեպքում, եթե այն նպատակ չունի որևէ փոփոխության ենթարկել տվյալ մարդու ժառանգների գենոմը»: Այս կարգավորման նպատակն է բացառել «որոշակի հասկանիչներով և որակներով օժտված անձանց կամ անձանց խմբերի ստեղծման նպատակով իրականացվող՝ մարդկային գենոմի դիտավորյալ մոդիֆիկացիաները»³⁶: Մյուս կողմից՝ «Մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածը հնարավորություն է վերապահում իրականացնելու այնպիսի հետազոտություններ, միջամտություններ կամ ախտորոշումներ, որոնք ազդում են անձի գենոմի վրա՝ պայմանով, որ նախքան վերոնշյալ հետազոտությունները, միջամտությունները կամ ախտորոշումները իրականացվել է ռիսկերի և ակնկալվող դրական արդ-

³⁴ St' u Đukanović, Andela (2015). Evropski standardi u oblasti biomedicine-pravo na integritet ličnosti. doktorska disertacija. Beograd, էջ 295-296:

³⁵ Կոնվենցիան Հայաստանի կողմից չի վավերացվել, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/164>

³⁶ St' u Council of Europe (1997). Explanatory Report to the Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being regarding the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine – Explanatory Report to the Convention on Human Rights and Biomedicine. DIR/JUR (97) 5. Strasbourg, § 89:

յունքների մանրամասն գնահատում: Ժառանգական գենետիկ մոդիֆիկացիաները դեռևս փորձարկվում են կենդանիների վրա և գիտությունը պատրաստ չէ մարդկանց նկատմամբ գենետիկ ինժեներիայի տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման³⁷: Դրա հետ մեկտեղ, սակայն, CRISPR տեխնոլոգիաների միջոցով մարդկանց նկատմամբ գենետիկ մոդիֆիկացիաներ իրականացնելու վերաբերյալ առաջարկները մեծ աղմուկ են բարձացրել գիտական հանրության շրջանում: Երբ չինացի գիտնականները հայտարարեցին, որ հաջողությամբ նման փոփոխություն են իրականացրել զույգ էմբրիոնների նկատմամբ, որպեսզի վերջիններս ՄԻԱՎ-ի նկատմամբ իմունիտետ ձեռք բերեն, գիտնականները սկսեցին պահանջել զլոբալ մորատորիում մարդու գեների «խմբագրման» նկատմամբ, քանի որ նման «խմբագրումները» կարող են փոխանցվել հաջորդ սերունդներին³⁸:

Միտոքոնդրիալ հիվանդությունների դեպքում միտոքոնդրիալ տեղափոխումների տեխնիկայի կիրառումը ևս վիճելի է, քանի որ ենթադրում է *in vitro* բեղմնավորումներ, որոնց դեպքում սաղմի միտոքոնդրիալ ԴՆԹ-ն վերցվում է երրորդ անձից: Գիտնականների շրջանում միասնական մոտեցում չկա այն հարցի վերաբերյալ, թե արդյոք այս տեխնիկան սաղմի գենի մոդիֆիկացիա է. որոշ գիտնականներ առաջարկում են այն դիտարկել որպես «որոշակի պայմաններում ժառանգվող գենային մոդիֆիկացիա»³⁹: Ներկայումս միայն Մեծ Բրիտանիայում է ուղղակիորեն թույլատրվում միտոքոնդրիալ տեղափոխման թերապիան, թեև այն իրականացվում է նաև Մեխի-

³⁷ St' u Powell, Russell (2015). In Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջ 670:

³⁸ St' u Kuchler, Hannah (13 March 2019). Scientists plead for moratorium after designer babies outcry, Developers of Crispr technique for genome editing also call for halt to experiments on hereditary genes. *Financial Times*. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ft.com/content/468a1f16-45c9-11e9-a965-23d669740bfb>

³⁹ St' u Newson, Ainsley J. and Wrigley, Anthony (2017). Is Mitochondrial Donation Germ-Line Gene Therapy? Classifications and Ethical Implications. *Bioethics*. 31(1), էջ 66-67:

կոյում և Ուկրաինայում⁴⁰։ Հարկ է նշել նաև, որ այս տեխնիկայի կիրառմամբ երեխա է ծնվել Հունաստանում՝ չնայած այն հանգամանքին, որ Հունաստանը վավերացրել է «Բիոբժշկության մասին» կոնվենցիան⁴¹։

«Բիոբժշկության մասին» կոնվենցիայից բացի, գենետիկ թեստավորման հետ կապված հարցերը միջազգային մակարդակում կարգավորում են «Մարդու գենետիկ տվյալների մասին» միջազգային հռչակագրով և «Առողջական նպատակներով գենետիկ թեստավորման մասին» «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ։ Նշված Արձանագրությունը վավերացվել է ԵՄ անդամ վեց պետությունների կողմից⁴²։ Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Արձանագրությունը վերաբերելի չէ հետազոտական նպատակներով մարդու էմբրիոնների կամ ֆետուսների նկատմամբ իրականացվող գենետիկ թեստավորմանը⁴³, ինչը նշանակում է, որ այն չի կիրառվում նաև նախաիմպլանտացիոն կամ նախածննդյան գենետիկ ախտորոշումների նկատմամբ⁴⁴։

⁴⁰ St' u Ong, Sandy (June 2018). Singapore could become the second country to legalize mitochondrial replacement therapy, Science, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.sciencemag.org/news/2018/06/singapore-could-become-second-country-legalize-mitochondrial-replacement-therapy>

⁴¹ St' u Gallagher, James (11 April 2019). 'Three-person' baby boy born in Greece. BBC News. հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.bbc.com/news/health-47889387>

⁴² St' u Council of Europe (2019). Chart of signatures and ratifications of Treaty 203 Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Genetic Testing for Health Purposes, Status as of 14/06/2019. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/203/-signatures?p_auth=y4UdE2G5

⁴³ St' u Council of Europe (2008). Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, concerning Genetic Testing for Health Purposes. European Treaty Series. Strasbourg, հոդված 2։

⁴⁴ Հարկ է ընդգծել, որ Մարդու գենետիկ տվյալների մասին միջազգային հռչակագիրը ավելի լայն կիրառություն ունի, քան Առողջական նպատակներով գենետիկ թեստավորման մասին «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, երբ խոսքը վերաբերում է էմբրիոնների և ֆետուսների գենետիկ թեստավորմանը, տե՛ս Հռչակագրի 1-ին հոդվածը։

Եվզենիկայի ձևերից մեկի՝ կլոնավորման մասին խոսելիս անհրաժեշտ է նշել «Մարդու կլոնավորման արգելքի մասին» «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության վերաբերյալ, որն արգելում է ցանկացած միջամտություն, որն ուղղված է կենդանի կամ մահացած մեկ այլ մարդու հետ գենետիկորեն նույնական մարդկանց ստեղծմանը: Մարդու արժանապատվության պաշտպանության համատեքստում՝ ԵՄ խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում արգելվում է մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Եվզենիկայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներպետական կարգավորումները

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները սահմանվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով»:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում «Եվզենիկա», «սելեկցիա (լավասերում)» եզրույթները չեն կիրառվում, դրա փոխարեն օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ այն կարգավորվում է մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Բացի այդ, ուղղակիորեն չկիրառելով «Եվզենիկա» եզրույթը՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը հիմնված է Եվզենիկայի վերաբերյալ «նոր» մոտեցումների վրա, որի առանցքը կամքի ազատությունն է: Այդ մասին է վկայում, օրինակ՝ օրենքի 4-րդ հոդվածը («Վերարտադրողականության հետ կապված մարդու իրավունքները»), 9-րդ հոդվածը («Կամա-

վոր բժշկական ամլացումը»), 10-րդ հոդվածը («Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)») և այլն: Հետևաբար, կարծում ենք՝ ինչպես գործող քրեական օրենսգրքում, այնպես էլ Նախագծում առկա՝ մարդու նկատմամբ եվգենիկական փորձերի համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածները մեկնաբանելիս հարկ է առաջնորդվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի եզրութաբանությամբ:

Ինչպես նշվեց վերևում, գործող քրեական օրենսգիրքը և Նախագիծը որպես եվգենիկական փորձ են որակում մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն: Մեջբերված կարգավորումը համընկնում է ԵՄ խարտիայում և վերևում վերլուծված մի շարք այլ միջազգային փաստաթղթերում ամրագրված կարգավորումների հետ, սակայն, ՀՀ-ում թույլատրված վերարտադրողական տեխնոլոգիաների շրջանակի պարագայում, կարծում ենք՝ կարգավորումը հստակեցման կարիք ունի: Մասնավորապես, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական հետևյալ իրավունքները. (...) օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ միջոցներից և/կամ մեթոդներից, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից»:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կոնկրետ տեսակներ և ընդգծում, որ դրանք կիրառվում են կառավարման լիազոր մարմնի

հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա⁴⁵, իսկ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր):

«Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2013 թվականի մարտի 7-ի թիվ 214-Ն որոշման 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մինչև սաղմի (սաղմերի) տեղափոխումն արգանդի խոռոչ, ըստ բժշկական ցուցումների, իրականացվում է ***նախաինպլանտացիոն բժշկագենետիկ հետազոտություն և ախտորոշում*** (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.): Որոշման 38-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հղիության արդյունավետ ելքերի ապահովման նպատակով թույլատրելի է արգանդի խոռոչում ***3-ից ոչ ավելի*** սաղմի/պտղի տեղադրումը՝ ***բացառությամբ այն դեպքերի, երբ ինպլանտացիայի հավանականությունը գնահատվել է ցածր*** (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.): Որոշման 51-րդ կետի համաձայն՝ բազմապտուղ (3 և ավելի) հղիություն դեպքում հղիի դիմումի և իրագեկված գրավոր համաձայնությամբ ***կատարվում է զարգացող սաղմերի/պտուղների կրճատում (ռեդուկցիա) վիրահատական միջամտության միջոցով*** (ընդգծումը մերն է՝ Ա. Վ.):

⁴⁵ Տե՛ս «Անպտղության պատճառագիտության ախտորոշման, ինչպես նաև վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների շրջանակներում կիրառվելիք մեթոդի որոշման նպատակով իրականացվող համալիր հետազոտությունների ցանկը, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացու կողմից ներկայացվող դիմումի ձևը հաստատելու և պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների (արհեստական սերմնավորման և բեղմնավորման) կիրառման բժշկական ցուցումների ցանկը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի թիվ 39-Ն հրամանը:

կնոջ կողմից նշված քանակին համապատասխան, սակայն ոչ ավելի քան 3 սաղմ/պտուղ:

Մեջբերված կարգավորումների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում մարդու սաղմի նախաիմպլանտացիոն բժշկագենետիկ հետազոտության և ախտորոշման հիման վրա իրականացվում է սելեկցիոն գործընթաց, մասնավորապես՝ ընտրվում և արգանդում տեղադրվում են 3-ից ոչ ավելի սաղմ, բազմապտուղ հղիության դեպքում կատարվում է սաղմերի/պտուղների կրճատում: Ճիշտ է, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռի պլանավորման արգելք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն⁴⁶:

Վերոշարադրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով եվգենիկայի վերաբերյալ նոր ընկալումների առանցքային ելակետերը, որոնք ներկայացված են սույն հոդվածում՝ կարծում ենք՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում անհրաժեշտ է հստակեցնել «թերապևտիկ» և «ոչ թերապևտիկ» նպատակներով իրականացվող սելեկտիվ միջամտությունների քրեականացման սահմանները: Այդ նպատակով *առաջարկում ենք ՀՀ գործող քրեական օրենսգրքի 127.1-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եվգենիկական փորձերը՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված՝ մարդու կամ մարդկային սաղմի նկատմամբ ոչ թերապևտիկ նպատակներով ցանկացած գործողություն կատարելը՝*

⁴⁶ Արգելքը համահունչ է «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որի համաձայն՝ «Արգելվում է օգտագործել վերարտադրողական օժանդակ բժշկական տեխնոլոգիաները երեխայի ապագա սեռն ընտրելու նպատակով, բացառությամբ սեռով պայմանավորված ժառանգական ծանր հիվանդությունից խուսափելու դեպքերի»:

(...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 182-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարդու վերարտադրողական կլոնավորումը՝ մահացած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպը ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելը կամ եվգենիկական փորձերը՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված՝ մարդու կամ մարդկային սաղմի նկատմամբ ոչ թերապևտիկ նպատակներով ցանկացած գործողություն կատարելը՝

(...):»:

КРИМИНАЛИЗАЦИЯ ЕВГЕНИЧЕСКИХ ОПЫТОВ НАД ЧЕЛОВЕКОМ В СОВРЕМЕННОМ ПЕРИОДЕ РАЗВИТИЯ БИОМЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ

Анна Вардапетян

*Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук*

Данная статья посвящена анализу норм действующего уголовного кодекса и законопроекта уголовного кодекса РА, криминализирующих деяния, связанные с евгеническими опытами, т.е. деяниями направленными на селекцию человека. В статье анализируются историческое развитие евгеники, противоречивые подходы к евгенике в разные периоды времени, а также международные договоры по вопросам евгеники и внутригосударственное законодательство по данному вопросу в Республике Армения.

Технологическое развитие в области генетики привело к созданию понятия новой евгеники, которое вызвало многочисленные дискуссии, в первую очередь касательно преемственности от старой евгеники. Установление различий или сходств со старой евгеникой и различных определений новой евгеники не дает четкого представления о том, какое поведение противоречит основным ценностям, которые следует защищать на государственном уровне. На основании исследования, проведенного в рамках данной статьи, автор предлагает внести поправки в статьи 127.1(1) уголовного кодекса и 182(1) законопроекта уголовного кодекса РА.

CRIMINALIZATION OF EUGENICS EXPERIMENTS IN MODERN PERIOD OF DEVELOPMENT OF THE BIOMEDICAL TECHNOLOGIES

Anna Vardapetyan

*Associate Professor at the YSU Chair of Criminal Law,
Candidate of Law*

The article refers to analysis of the articles of the Criminal Code and Draft Criminal Code of the Republic of Armenia criminalizing eugenic experiments, i.e. acts aimed at selection of human. It refers also to analysis of historical developments of “eugenics”, contradictory approaches to “eugenics” in different periods of time, as well as the international treaties and internal regulations of the Republic of Armenia on eugenics.

Technological development in the field of genetics led to the creation of the notion of the new eugenics, which aroused numerous discussions, primarily regarding the continuity or discontinuity of the new eugenics with the old eugenics. Establishing the differences or similarities with the old eugenics and different definitions of the new eugenics, do not provide a clear roadmap about what behaviors are contrary to the basic values, which should be protected at state level. Based on research done within the scopes of this article, the author suggests amendment to the Articles 127.1(1) of the Criminal Code and 182(1) of the Draft Criminal Code of the RA.

Բանալի բառեր - եվգենիկա, պոզիտիվ և նեգատիվ եվգենիկա, էմբրիոն, ֆետուս, կլոնավորում, ստերիլիզացիա, սելեկցիա, գենոմ, բիոթեխնոլոգիա, եվգենիկայի վերաբերյալ միջազգային փաստաթղթեր, վերարտադրողականություն:

Ключевые слова: евгеника, позитивная и негативная евгеника, эмбрион, фетус, клонирование, стерилизация, селекция, геном, биомедицина, международные документы о евгенике, репродукция.

Key words - eugenics, positive and negative eugenics, embryo, fetus, cloning, sterilization, selection, genome, biomedicine, international documents on eugenics, reproduction.

ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ МОЛОДЕЖИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тигран Симонян

*Доцент кафедры уголовного права ЕГУ,
кандидат юридических наук, доцент*

Проблема преступности молодежи во все времена и во всех странах была и остается основной государственной проблемой. Данной проблемой занимались многие юристы, педагоги и психологи и другие специалисты как в Армении, так и за рубежом. По мнению С.А. Корягиной, «распространенность преступлений среди лиц молодежной возрастной группы, их качественные характеристики не без оснований могут расцениваться как прогностические для всей преступности». Как справедливо отмечает С.П. Минина, одной из значительных опасностей преступлений молодежи является «...то, что лица, совершающие противоправные действия в раннем возрасте, позже, как правило, значительно труднее поддаются исправлению и в итоге составляют основной резерв для взрослой и рецидивной преступности».

Молодежь представляет собой особую социальную группу, имеющую свои идеалы и ценности, которые формируются под воздействием разных факторов. Эти ценности довольно часто расходятся с общепризнанными нормами, могут служить поводом к негативным отклонениям в поведении молодежи и приводить ее к преступлениям. От того, какими идеалами и ценностями будет руководствоваться молодежь в процессе взросления, зависит нравственный климат общества и в конечном итоге судьба нашего государства. Известные работы таких авторов, как С.М. Иншаков, М.П. Клейменов, А.И. Солженицын, и других тесно связывают

причины возникновения преступности (в том числе и молодежной) с культурологической, идеологической и воспитательной составляющей.

Одними из самых действенных методов предупреждения молодежной преступности являются воспитательные и идеологические методы. Влияние этих методов всеобщее и не направлено на конкретную личность или группу, совершающую правонарушения. Эффективность этих методов в том, что они направлены на повышение образовательного, культурного уровня населения, (особенно молодежи), на более интенсивное участие разных социальных групп в общественной и политической жизни страны. Повышение культурного и образовательного уровня населения способствует тому, чтобы государство для достижения того или иного результата вместо принудительных методов все чаще использовало меры поощрения и убеждения, эффективность которых на порядок выше. Идеологическими и воспитательными методами государство положительно влияет на поведение, чувства, разум молодежи, что способствует предупреждению любых проявлений антиобщественного или преступного поведения со стороны молодых людей. Эти методы не только обеспечивают эффективное воспитание молодежи, но и непосредственно направлены на повышение общей и правовой культуры молодежи, формирование ее правосознания, уважения к государству и обществу. Практика воспитания молодежи сформировала ряд научно обоснованных методов, которые призваны предупредить совершение антиобщественных действий молодыми людьми. Эти методы тоже нуждаются в обновлении и усовершенствовании, поскольку развитие общественных отношений, деформированный переход к рыночным отношениям создают новую действительность, в условиях которой все ранее действующие методы не могут успешно функционировать. Идеологическими и воспитательными методами государство и общество как бы направляют молодого человека на

совершение общественно полезных действий. Но задача предупреждения молодежной преступности может быть решена только тогда, когда общественно полезные формы поведения превращаются во внутренние стимулы поведения данного молодого человека, в его убеждения.

Идеологические и воспитательные меры предупреждения молодежной преступности разделяются на следующие группы: методы убеждения, поощрения, государственного и общественного воздействия, критики и самокритики.

Содержание метода убеждения довольно разнообразно. Кроме того, что он является основным методом воспитания, воздействия со стороны государства и общества на сознание и поведение молодежи, в его рамках проводятся различные объяснительные и поощрительные мероприятия, цель которых убедить молодежь в том, что единственной правильной и приемлемой формой поведения является общественно полезное поведение, которое соответствует интересам как самого молодого человека, так и общества и государства.

Другие методы тоже направлены на формирование необходимых условий для правомерного поведения молодежи. Так, по средствам общественного воздействия люди, непосредственно окружающие молодого человека (будь это в семье, образовательной или трудовой среде), другие общественные формирования и организации напрямую воздействуют на психологию и сознание молодого человека, с тем чтобы он не совершал антиобщественных и антинравственных поступков. Но нужно отметить, что в нынешних условиях только такое воздействие недостаточно, поскольку возрастающие потребности молодых людей, их новые ценностные ориентации не позволяют только наставлениями предупредить их преступность. Нужно, чтобы молодые люди были материально достаточно обеспечены, и это должно стать одной из главных задач всех структур, которые занимаются предупреждением преступности молодежи. Только при

обеспечении минимальных потребностей молодого человека методы общественного воздействия могут быть эффективными, поскольку в ином случае нравственно-психологическое воздействие образовательной, трудовой или любой другой общественной среды пройдет даром и никоим образом не будет способствовать предупреждению антиобщественного поведения молодежи.

Осуществление воспитательных и идеологических методов носит системный характер. Это обусловлено тем обстоятельством, что преступность связана с явлениями, факторами, которые присутствуют в различных сферах общественной жизни. Эти факторы могут иметь как общий, так и ситуационный характер. Они проявляются в сфере взаимодействия личности с государством, обществом, разными группами, с другими личностями, и именно от успешного осуществления воспитательных мероприятий в этих сферах зависит нейтрализация и ослабление негативных влияний, способствующих росту молодежной преступности.

Нужно отметить, что очень важно выбрать именно тот воспитательный или идеологический метод, который соответствует характеру правонарушения конкретного молодого человека, поскольку только в этом случае метод будет эффективным и действенным. В настоящее время имеется множество способов влияния на личность со стороны государства и общества, и в развивающихся общественных отношениях очень важно выбрать именно те методы предупреждения молодежной преступности, которые основаны на глубоком научном изучении общественных процессов, факторов, непосредственно влияющих на поведение молодежи.

Для эффективного предупреждения молодежной преступности важное значение имеет также изучение мировоззрения и убеждений молодых людей, поскольку таким образом мы можем выявить отношение молодого человека, совершившего преступление к государству, обществу.

Одной из главнейших задач метода убеждения является формирование у личности общественно-полезного мировоззрения. Это само по себе является реальной предпосылкой для проявления молодым человеком законопослушного поведения. Здесь нужно иметь в виду, что воспитательные мероприятия должны основываться не только на передаче молодым людям соответствующих знаний, но и должны быть направлены на улучшение их психологического и эмоционального состояния, а этого можно достичь только тогда, когда органы, которые занимаются предупреждением преступности молодежи, владеют достаточными знаниями о возрастных, психологических, физиологических, социальных, культурных и других особенностях молодежи.

Формирование мировоззрения молодежи - сложный и многогранный процесс. У молодого человека, который только что вступил в общество, часто возникают конфликты, когда его личное противоречит общественному. Здесь главная задача состоит в том, чтобы, используя самые эффективные методы воспитания, достичь нейтрализации этих конфликтов, стабилизации психологического состояния молодых людей. От успешного применения этих методов во многом зависит общественно полезная или, наоборот, общественно опасная направленность убеждений и мировоззрения молодого человека.

Молодой человек в течение своей жизнедеятельности подвергается различным влияниям, которые присутствуют в школе, семье, общественных местах, на улице и т. д. Некоторые из этих влияний понятны и приемлемы для него, а некоторые нет. Приемлемыми для молодого человека, как правило, становятся те влияния, которые непосредственно связаны с его интересами и потребностями. Воздействия окружающего мира, которые наиболее существенны для молодого человека, он пытается понять, оценить, вникнуть в их суть, и, тем самым, принять некоторые из них и отвергнуть остальные. По

этой причине для правильного воспитания молодежи нужны системный подход, тесное взаимодействие семьи, образовательных учреждений, трудового коллектива. Эти мероприятия направлены на формирование и закрепление у молодого человека положительного мировоззрения, привычек.

Если по какой - либо причине воспитательный процесс временно приостанавливается, то формируются открытые места, которые заполняются влияниями криминогенного характера. В этом причина того, что одной из главных задач всех звеньев, занимающихся предупреждением молодежной преступности, должно стать обеспечение непрерывности воспитательного процесса. Характерно, что у молодежи в период перехода к рыночным отношениям формируется потребительская психология. Это приводит к возникновению эгоистических стремлений, что может приобрести огромное криминогенное значение. Для исправления этой ситуации нужны серьезные положительные общественные и экономические перемены, которых, по всей видимости, придется ждать долго.

Именно сейчас становится крайне важным налаженное взаимодействие всех субъектов, занимающихся воспитательной деятельностью, чтобы идеологическими методами дать молодым людям надежду на будущее, объяснить, что только совместными усилиями и правомерным поведением возможно приоткрыть дверь в будущее нашей страны. С сожалением нужно отметить, что такая идеология отсутствует, и очень немногие сейчас настроены оптимистично и предпринимают усилия для возрождения былой мощи нашего государства. В таких условиях кажется сомнительным воспитание такого подрастающего поколения, которое имело бы здравый смысл и государственное мышление.

Молодой человек, впервые сталкиваясь с жизненными трудностями, часто не может выбрать правильную линию поведения, не ориентируется в объективной действительности. Причиной этого,

как правило, является эмоциональное состояние, связанное с такими возрастными особенностями молодых людей, как возбудимость, чувствительность, нерешительность, стремление к самоутверждению и самостоятельности, которые приводят к тому, что молодые люди начинают проявлять антиобщественное поведение, игнорируя нормы права, нравственности и общежития. Действительно, воздействия окружающего мира различны как по своим формам, так и проявлениями, и для человека, который не имеет достаточного жизненного опыта, иногда очень трудно выбрать правильные и общепринятые формы поведения. Поэтому очень важно, чтобы над молодым человеком, который совершил преступление или находится в криминогенной среде, был установлен эффективный контроль теми государственными и общественными организациями, которые занимаются предупреждением молодежной преступности. В таких случаях огромное значение имеет демонстрация правильных форм поведения со стороны старших, объяснение молодым людям полезности и целесообразности такого поведения. Это становится особенно эффективным тогда, когда общепринятые формы поведения демонстрируются теми людьми, которые пользуются уважением у данного молодого человека.

Вместе с тем, нужно констатировать, что только демонстрация положительного примера недостаточна для предупреждения преступности молодежи. Нужно повлиять на психологию молодого человека такими воспитательными и идеологическими методами, которые смогут помочь ему освоить культурные и интеллектуальные блага с тем, чтобы общественно полезные формы поведения превратились в стереотип, мотивацию поведения.

Личность выбирает ту или иную форму поведения в зависимости от предоставленных ей возможностей. Выбор порой бывает очень сложным, что обусловлено противоречиями мотиваций. В этих противоречиях выигрывает та мотивация поведения, которая

наиболее актуальна для данного молодого человека, соответствует его ценностным ориентациям, мировоззрению, жизненной позиции. Не каждая личность с рождения наделена высокими нравственными свойствами, положительной сущностью, хорошим характером, но в результате правильного общественного воздействия общепринятые формы поведения могут стать привычкой конкретного молодого человека, стать его психологическим свойством, мотивацией поведения. Усвоение молодым человеком положительных норм происходит намного быстрее, когда у данной личности присутствует соответствующий уровень культурного, духовного, образовательного развития, когда данная личность имеет широкий кругозор и всесторонние знания.

В деле предупреждения преступности молодежи, а также для применения воспитательных и идеологических методов и поднятия уровня правосознания молодежи огромную роль играют средства массовой информации. В настоящее время средства массовой информации наделены огромным потенциалом для влияния на сознание, психологию людей, и роль СМИ все возрастает. Все более растет число таких телевизионных программ, которые освещают деятельность правоохранительных органов и проповедуют идеи правильного и общепринятого поведения, но всего этого пока недостаточно. Телевидение и другие СМИ должны сконцентрировать свои усилия для того, чтобы более глубоко и основательно объяснить суть законов и других правовых норм, выявить их целевое назначение, способствовать уважительному отношению к государству и закону со стороны молодежи, а также для ее правового воспитания.

Но сегодня наше телевидение заполнено насилием, порнографией, проповедованием чуждых культур. Нашей молодежи демонстрируется пример "правильного" образа жизни, и налицо факт, что она, словно губка, воспринимает его, забывая обо всем национальном, нравственном, правильном.

В этом смысле как настоящую катастрофу можно воспринимать огромные масштабы рекламы различных лото и азартных игр по телевидению. Такие игры "окупируют" телевидение и зазывают весь народ стать "миллионерами". Молодые люди в настоящее время все больше заняты не решением повседневных проблем, получением образования, приобретением работы, а все свое внимание сконцентрировали на покупке билетов различных лотерей, чтобы "на них с неба свалились автомобили и квартиры". По нашему мнению, это может привести к деградации нации и особенно самой чуткой и динамичной ее части - молодежи.

При рассмотрении влияния средств массмедиа на молодежь необходимо помнить, что современная молодежь имеет максимально возможный контакт с этими средствами. Необходимо также учитывать, что они (эти средства) оказывают одно из наиболее сильных влияний на духовное развитие молодых людей. В этом деле особая роль принадлежит интернету. Сейчас трудно переоценить это влияние, поскольку оно огромное и иногда беспощадное. Сказанное в особенности актуально в связи с соцсетями, влияние которых на молодежь и молодежную преступность растет по экспоненте. Огромное распространение насилия, порнографии и другого "треш контента" по социальным сетям и другим ресурсам интернета приводит к росту агрессивности молодежи напрямую способствуя росту молодежной преступности. Нужно во много усилить государственный контроль за интернет контентом, Это конечно не должно затрагивать и ограничивать свободу слова, но некоторые материалы (убийства, изнасилование, истязание и т. д) должны быть удалены соответствующими государственными органами.

Важное значение имеет также поднятие патриотического духа молодежи, внедрение государственного мышления. Нужно обобщенными и яркими примерами показать и объяснить молодежи, что только правомерным и общепринятым поведением можно вызволить

наше государство из того болота, в котором оно оказалось в результате неблагоприятной социально-политической и военной обстановки, которая сложилась в нашем регионе.

Обобщая сказанное, нужно отметить, что в деле предупреждения преступности молодежи воспитательные и идеологические меры имеют особое место. Эффективное применение последних не призвано предупреждать совершение преступления конкретным молодым человеком (хотя это возможно), а имеет общее благоприятное влияние на психологию и сознание молодежи, способствует повышению уровня ее правосознания и совершенствованию нравственного облика, что, в свою очередь, является реальной предпосылкой для правомерного поведения молодежи, уважения ею норм общезначимости. Важно отметить также, что эти методы являются первичным рубежом предупреждения молодежной преступности. Другие методы, как правило, направлены на исправление тех молодых лиц, которые уже совершили правонарушение или находятся на грани его совершения. Их целью является нейтрализация отрицательного влияния в молодежной среде, а идеологические и воспитательные методы направлены на воспитание молодежи в духе уважения государства и законов, имеют цель поднятия нравственного и духовного уровня молодежи, формирования здоровой психологии.

ՀՀ-ՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ԴԱՍԽԱՐԱԿԶԻՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Տիգրան Միմոնյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ-ում երիտասարդների հանցավորության կանխման գաղափարախոսական և դաստիարակչական միջոցների և միջոցառումների ամբողջությունը: Հատուկ ընդգծվել է ազգային և հայրենասիրական գաղափարախոսության շարունակական սերմանման ան հրաժեշտությունը և հրատապությունը արդի պայմաններում: Շեշտվել է այն հանգամանքը, որ զանգվածային լրատվության

միջոցները և հատկապես համացանցային աղբյուրներն ունեն ահռելի ազդեցություն երիտասարդների գիտակցության և հոգեբանության վրա, ինչով պայմանավորված նշված ոլորտներում լրջագույն փոփոխությունները ժամանակի հրամայականն են:

IDEOLOGICAL-EDUCATIONAL MEANS FOR THE PREVENTION OF YOUTH CRIME IN THE REPUBLIC OF ARMENIA

Tigran Simonyan

Associate Professor at YSU Chair of the Criminal Law

Within the framework of the article, the set of measures of the ideological-educational means for the prevention of youth crime in the Republic of Armenia was studied. The need for continuous sowing of national "patriotic ideology" and urgency in modern conditions was especially emphasized. It was stressed that the mass media, especially Internet sources, have a huge impact on the consciousness and psychology of young people, which is why serious changes in these areas are imperative.

Ключевые слова: молодежная преступность, идеология, воспитание, методы, предупреждения преступности, телевидение, интернет, влияние, нейтрализация, правомерное поведение, сознание, психология.

Բանալի բառեր – Երիտասարդների հանցավորություն, գաղափարախոսություն, կրթություն, մեթոդներ, հանցագործությունների կանխարգելում, հեռուստատեսություն, ինտերնետ, ազդեցություն, չեզոքացում, իրավաչափ վարքագիծ, գիտակցություն, հոգեբանություն:

Key words: youth crime, ideology, education, methods, crime prevention, television, internet, influence, neutralization, lawful behavior, consciousness, psychology.

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Կարեն Ամիրջան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի
ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Հանրային իրավական պատասխանատվության սկզբունքը, որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք, ունի ոչ միայն ներազգային (ներպետական), այլև վերազգային բնույթ: Այս սկզբունքի վերազգային բնույթն ուղղակիորեն կապակցված է պետությունների կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների հետ: ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է նաև, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Նշված սահմանադրաիրավական կարգավորումների վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային հանրային իրավական պատասխանատվություն է կրում իր կողմից վավերացված միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների իրացման առումով: Այս հանգամանքը շեշտադրվում է այն համատեքստում նաև, որ Հայաստանի Հանրապետությունը, իր անկախությունը հռչակելուց հետո, միանալով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն, համընդգրկուն և տարածաշրջանային միջազգային պայմանագրերին, վերահաստատեց, որ

մարդը, նրա կյանքը և առողջությունը, պատիվը և արժանապատվությունը, անձեռնմխելիությունը և անվտանգությունը բարձրագույն սոցիալական արժեքներ են:

Միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը կարևոր նշանակություն ունի պետության հեղինակության և միջազգային տարբեր նախագծերում նրա հետագա հնարավոր ներգրավվածության, պետության գրավչության առումով: Այս համատեքստում, ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, գտնում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին, որը, օժտված լինելով անհրաժեշտ լիազորություններով, կկարողանա մշտադիտարկում իրականացնել և մասնագիտական գնահատական ներկայացնել պարտավորությունների բարեխիղճ կատարման վիճակի, խնդիրների, դրանց լուծման հնարավոր միջոցների վերաբերյալ: Այդ գործառույթն այսօր հատվածական կերպով կատարում է նաև Ազգային ժողովը, երբ վերահսկողություն է իրականացնում օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի¹ և դրան կից արձանագրությունների (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթների իրացումը, պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարումն ապահովելու համար ստեղծվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան): Եվրոպական դատարանը Կոնվենցիան բնորոշել է որպես Եվրոպայում մարդու իրավունքների բնագավառում հասարակական կարգի

¹ St. 'u Convention for the Protecton of Human Rights and Fundamental Freedoms, Nov. 4, 1950, Europ. T. S. No. 5; 213 U.N.T.S. 221:

պահպանման սահմանադրական գործիք:²

Տեսական գրականության մեջ դեռևս միասնական մոտեցում չկա Եվրոպական դատարանի վճիռների անմիջական գործողության վերաբերյալ: Այս խնդրի պարզաբանումը կարևորվում է Եվրոպական դատարանի վճիռների՝ ներպետական իրավական կարգավիճակի հստակեցման տեսանկյունից: Նախ, առայժմ չկա հստակ, միասնական դիրքորոշում այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պարտադիր է պետությունների համար: Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավոր են կատարել բոլոր այն գործերի վերաբերյալ դատարանի վճիռները, որոնցում նրանք կողմեր են:³ Տեսակետ կա, որ ՀՀ-ի համար Եվրոպական դատարանի պրակտիկայի պարտադիրությունը վերաբերում է միայն այն մասին, որը ձևավորվել է ՀՀ-ի կողմից իր կոնվենցիոն պարտավորությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ գործերի քննության ժամանակ⁴:

Այս առումով հատկանշական է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի որոշումը, որը վերաբերում է Եվրոպական դատարանի կողմից ՌԴ-ի դեմ կայացված և Կոնվենցիոն խախտում արձանագրած վճիռների կատարմանը և, ընդհանրապես, այդ վճիռների, դրանց իրավական հետևանքների և սահմանադրական արժեքանության հարաբերակցությանը: Նշենք նաև, որ այս որոշման համար որպես իրավական հիմք են հանդիսացել 14.12.2015թ. Ռուսաստանի Դաշնության «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքում կատար-

² Տե՛ս Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, գանգատ թիվ 15318/89, 1998թ. հուլիսի 28:

³ Տե՛ս Verein GegenTierfabriken Schweiz (VgT) ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (2) (ՄՊ), թիվ 3277202, 30/06/2009թ., պարբ. 61:

⁴ Տե՛ս **Գոռ Հովհաննիսյան**, Սահմանադրական արդարադատությունը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը (Սահմանադրական արդարադատության հիմնախնդիրները և զարգացման միտումներն արդի ժամանակաշրջանում), էջ 43:

ված փոփոխությունները⁵: Այս որոշումից հետո «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2016թ. մարտի 11-12-ի 106-րդ լիագումար նիստում միջանկյալ կարծիք է ընդունել Ռուսաստանի Դաշնության «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի փոփոխությունների վերաբերյալ (15.03.2016թ., կարծիք համար 832/2015, փաստաթուղթ համար CDL-AD(2016)005⁶)՝ արձանագրելով կատարված փոփոխությունները վերացնելու անհրաժեշտությունը և նշելով այն նվազագույն քայլերը, որոնք պետք է ձեռնարկի Ռուսաստանի Դաշնությունը:

Նման իրավիճակն իրապես խորհելու տեղիք է տալիս և իրավաբնական ման նոր մոտեցումներ է առաջադրում՝ ուղղված ժամանակի փորձությունը: Սակայն, այստեղ էականն այն է, որ ցանկացած եզրահանգում և լուծում պետք է կոչված լինի մարդու հիմնական իրավունքների և ազատությունների առավելագույն պաշտպանվածություն և դրան համարժեք երաշխավորվածություն ապահովելու՝ իրավունքի գերակայության սկզբունքից բխող հրամայականի իրացմանը:

Ուստի, Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի պրակտիկան հաշվի առնելը պարտադիր է Հայաստանի համար միայն այն գործերով, որոնք կայացվել են ՀՀ-ի դեմ: Այլ պետությունների վերաբերյալ կայացված գործերով արտահայտված դիրքորոշումները, անշուշտ, ունեն էական նշանակություն՝ ուղղորդելու մեր օրենսդրական զարգացումները, իրավակիրառ պրակտիկան: Սակայն դրանք դասական իմաս-

⁵ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի՝ 2015թ. հուլիսի 14-ի թիվ 21-Պ որոշումը:

⁶ Տե՛ս [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2016\)005-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)005-e) էլեկտրոնային հղումը:

տով պարտադիր չեն ՀՀ դատարանների կամ մեկնաբանող այլ մարմինների համար, այլ ունեն ուղենիշային, կողմնորոշիչ նշանակություն, հնարավորություն են տալիս հասկանալու ՄԻԵԴ-ի դիրքորոշումն այս կամ այն հարցի առնչությամբ: Իսկ այս հանգամանքը կարևոր է նաև այն առումով, որ ՄԻԵԴ-ի պրակտիկայի ուսումնասիրությունը կարող է կանխիչ դեր կատարել հետագայում մեր իրավական համակարգում համանման օրենսդրական ակտի կամ դրույթի՝ Կոնվենցիային հնարավոր հակասությունը պարզելու, գնահատելու և փոփոխելու առումով:

Միասնական մոտեցում չկա նաև այն հարցադրման շուրջ, թե ով է Եվրոպական դատարանի վճիռների՝ ներպետական մակարդակում կատարման համար պատասխանատվություն կրում⁷: Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը վերաբերում է մասնակից պետություններին՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտի, ուստի չի միջամտում ներպետական սահմանադրական կարգում իշխանությունների տարանջատմանը⁸:

Այս հարցի շուրջ մեր մոտեցումն այն է, որ Եվրոպական դատարանի վճիռների համար պատասխանատվություն կրում է պետությունը՝ որպես մեկ միասնական օրգանիզմ՝ օրենսդիր, գործադիր և դատական համակարգի միջոցով: Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված պարտավորության պատշաճ կատարման համար պատասխանատու է պետությունն՝ ի դեմս պետական իշխանության եռամիասնական համակարգի: Հետևաբար, այդ պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն իշխանության առանձին ճյուղի շրջանակներով:

Այն, որ պետության պատասխանատվությունը չի սահմանա-

⁷ Տե՛ս **Հակոբյան Լ.**, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների անմիջական գործողության հիմնահարցերը. («Քաղաքական գլոբալ զարգացումները և միջազգային իրավունքի առանձին ինստիտուտների վերաբերյալ որոշ հիմնախնդիրներ» (հոդվածների ժողովածու)), Երևան, 2010, էջ 62:

⁸ Տե՛ս՝ *Protection of human rights in Europe. Limits and effects.* C. F. Muller Juristischen Verlag, Heidelberg 1982. Edited by Irene Maier, էջ 296:

փակվում միայն իշխանության առանձին ճյուղի շրջանակներով, իր ամրագրումն է գտել նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում: Այսպես, «Գյորգյուլուն ընդդեմ Գերմանիայի» գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, սակայն կոնկրետ հասցեատեր դատարանը՝ Նաումբուրգի բարձր տարածքային դատարանը, նշել էր, որ Եվրոպական դատարանի վճիռը պարտադիր է միայն Գերմանիայի Դաշնային Հանրապետության համար՝ որպես հանրային միջազգային իրավունքի սուբյեկտի: Անկախ դատարանները, այնուամենայնիվ, կաշկանդված չեն Եվրոպական դատարանի վճռով, քանզի Եվրոպական կոնվենցիան Սահմանադրությունից ցածր կանգնած սովորական օրենք է, և Եվրոպական դատարանը գործառնական առումով վերին ատյանի դատարան չէ⁹: Սույն գործով վճիռը սահմանադրական վերահսկողության օբյեկտ է նաև Գերմանիայի սահմանադրական դատարանում, որն արտահայտել է ուղեցուցային նշանակություն ունեցող այսպիսի դիրքորոշում. «... Գերմանիայի Դաշնային Հանրապետության պետական մարմինները, այդ թվում՝ դատարանները, պարտավոր են, որոշակի պայմաններում, որոշումներ կայացնելիս հաշվի առնել Կոնվենցիան՝ Եվրոպական դատարանի մեկնաբանությամբ: ... Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական ուժը տարածվում է բոլոր պետական մարմինների վրա և սկզբունքորեն նրանց պարտավորեցնում է ... վերջ դնել Կոնվենցիայի շարունակվող խախտմանը և ստեղծել Կոնվենցիային համապատասխանող իրավիճակ»¹⁰: Սակայն, մյուս կողմից, Գերմանիայի սահմանադրական դատարանը օգտագործում է «հաշվի առնել» եզրույթը, ինչը նշանակում է ի գիտություն ընդունել և կոնկրետ գործով կիրառել Կոնվենցիայի համապատասխան դրույթը՝ Եվրոպական

⁹ St 'u Order of the Second Senate of 14 October 2004 – 2 BvR 1481/04:

¹⁰ St 'u Конституционный суд Российской Федерации. Зарубежная практика конституционного контроля. Выпуск 86, М, 2004, էջ 31:

դատարանի մեկնաբանությամբ, այնքանով, որքանով այդպիսի կիրառումը չի խախտում իրավաբանական ուժով բարձր կանգնած իրավունքը, մասնավորապես, սահմանադրական իրավունքը¹¹:

Եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է իր վճիռների կատարման հետ կապված հարցերին, որոնք պետությունների հանրային իրավական պատասխանատվության մասին վկայող իրավական դիրքորոշումներ են¹²: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «Եվրոպական դատարանի վճիռների կատարումը» արտահայտությունը և պահանջը բավականին տարողունակ է: Սակայն, հենց դրա բովանդակային ծավալի բացահայտումն է այն ուղենիշը, որը թույլ է տալիս ամբողջապես հստակեցնել պետության պարտավորությունների շրջանակը: Եվրոպական դատարանի վճիռների կատարումը չի կարող սահմանափակվել լոկ վերջինիս եզրափակիչ մասում ամրագրված պահանջների կատարմամբ: Եվրոպական դատարանի վճիռը պետք է դիտարկել իր միասնության մեջ՝ որպես մեկ ամբողջական դատական ակտ:

Վերոնշյալ և համանման այլ իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունը վկայում է, որ Եվրոպական դատարանը Կոնվենցիային մասնակից պետություններին ենթարկում է հանրային իրավական պատասխանատվության, որը դրսևորվում է վերջինիս դրական և բացասական տեսակների միջոցով: Եվրոպական դատարանը հանդես է գալիս որպես հանրային իրավական պատասխանատվության ենթարկող ուրբյեկտ:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ բացասական պատասխանատվությունը դրսևորվում է կոնվենցիոն կամ վերջինիս կից արձանագրությունների խախտում

¹¹ St 'u **X. Ю. Папп**, Соотношение между национальным конституционным правом и Европейской конвенцией о защите прав человека с точки зрения Федерального Конституционного Суда Германии, «Конституционное правосудие», Вестник, Вып. 4 (34), Ереван, 2006, էջ 28:

¹² St 'u Vermeire v Belgium, Judgment of November 29, 1991:

արձանագրելու միջոցով: Վիճակագրությունը վկայում է¹³, որ Եվրոպական դատարանը կայացրել է շուրջ 65.000 վճիռ, որոնցից մեծ մասում փաստվել է կոնվենցիոն կամ վերջինիս կից լրացուցիչ արձանագրությունների խախտում: Կոնվենցիային հակասող ճանաչված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց գերակշիռ մասը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին (արձանագրվել է ավելի քան 25000 կոնվենցիոն խախտում¹⁴):

Այսպիսի հանրային իրավական պատասխանատվությունը կոչվում է բացասական, քանի որ հանդիսանում է այն բացասական հետևանքը, որն առաջանում է պետության նկատմամբ իր սահմանադրաիրավական-միջազգային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

Եվրոպական դատարանի կողմից կիրառվող բացասական պատասխանատվությունը կարող է դրսևորվել նաև դրամական հատուցման տեսքով: Եվրոպական դատարանի վճիռները շատ հաճախ պետություններին պարտավորեցնում են արդարացի փոխհատուցում վճարել տուժողին պատճառված նյութական կամ բարոյական վնասի դիմաց: Արդարացի փոխհատուցումը ներառում է Դատարանի վճռով ճանաչված իրավախախտման արդյունքում դիմումատուի կրած նյութական, ոչ նյութական՝ բարոյական վնասի դիմաց վճարվող գումարը և ներպետական մարմիններում և Եվրոպական դատարանում դատաքնությունների ժամանակ կատարված դատական ծախքերը և ծախսերը:¹⁵ Այսինքն՝ շատ հաճախ, ելնելով կատարած խախտման բնույթից և այլ հանգամանքներից, Եվրոպական դատարանը փոխհատուցում է սահմանում նաև կրած ոչ նյութական (բարոյական) վնասի դիմաց՝ նշելով, որ նման բացասական ազդե-

¹³ Վիճակագրությունը ներառում է Եվրոպական դատարանի գործունեության սկզբից մինչև 2021 թվականի հունիսը:

¹⁴ Տե՛ս [http://hudoc.echr.coe.int/eng#{\"documentcollectionid2\":\[\"GRANDCHAMBER\", \"CHAMBER\"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{\) :

¹⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Վլ.**, Մարդու իրավունքների եվրոպական դատարան. գործունեության առանձնահատկությունները, վճիռների իրավաբանական բնույթը և գանգատների ներկայացման կարգը, Երևան, 2002, էջ 75-76:

ցությունների դիմաց չի կարող բավարար կերպով փոխհատուցել սոսկ խախտման փաստի ճանաչումով (օրինակ՝ ֆիզիկական սուր ցավ, հոգեկան տառապանք, նվաստացում և այլն)¹⁶: Վիճակագրությունը վկայում է, որ 2020 թվականի փետրվարի 20-ի դրությամբ Եվրոպական դատարանի Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճիռներով դիմումատուների կողմից ներկայացվել է ընդհանուր շուրջ 28 միլիոն եվրոյին համարժեք հատուցման պահանջ¹⁷, որից բավարարվել է ընդհանուր 3,595,492 եվրոն, այսինքն՝ ընդհանուր պահանջի շուրջ 12,84 %-ը:

Ինչ վերաբերում է դրական հանրային իրավական պատասխանատվությանը, ապա, նախ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Եվրոպական դատարանի դիրքորոշումների ուսումնասիրությունից կարելի է բխեցնել, որ դատարանը որպես դրական պատասխանատվության հիմնական բնութագրական հատկանիշ նշում է, որ այն պետական իշխանություններից պահանջում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրավունքների պաշտպանության համար¹⁸ կամ ընդունել ողջամիտ և համաչափ միջոցներ՝ պաշտպանելու համար անձի իրավունքները¹⁹: Դրանք կարող են լինել նաև դատական միջոցառումներ²⁰: Միաժամանակ, կարող են լինել նաև գործնական միջոցառումներ: Ուստի դատական կամ գործնական միջոցառումների ընտրության հարցը հաճախ զուտ հանգամանքների հարց է²¹: Ուսումնա-

¹⁶ Տե՛ս «Մեկտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 32283/04, 17/06/2008թ., էջ 31, պարբ. 7:

¹⁷ Նշված գումարը չի ներառում «Չիրագովը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով դիմումատուների պահանջած գումարները: Շուրջ 6 մլն եվրոյի պահանջ, որից բավարարվել է 30.000 եվրոն՝ նյութական + ոչ նյութական և 28,642.87 ֆունդ սթերլինգ կրած ծախսերի համար:

¹⁸ Տե՛ս *Hokkanen v. Finland*, 24 August 1994:

¹⁹ Տե՛ս *Lopez-Ostra v. Spain*, 9 December 1994:

²⁰ Տե՛ս *Vgt Verein Gegen Tierfabriken v. Switzerland*, 28.06.2001:

²¹ Տե՛ս Jean-François Akandji-Kombe, Positive obligations under the European Convention on Human Rights, A guide to the implementation of the European Convention on Human Rights, Human rights handbooks, No. 7, Council of Europe, 2007, էջ 7:

սիրելով Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներ²², կարևոր ենք համարում նշել, որ Եվրոպական դատարանի կողմից պետությանը դրական պատասխանատվության ենթարկելն իր մեջ ամփոփում է երեք հիմնական ուղղվածություն: Այսպես, Եվրոպական դատարանի՝ դրական հանրային իրավական պատասխանատվություն սահմանող վճիռներն ուղղված են.

ա) օրենսդրին, այն է՝ սահմանել համապատասխան նոր իրավակարգավորումներ՝ դրանով վերացնելով օրենսդրական հարթության մեջ առկա անկատարությունները,

բ) գործադիր իշխանությանը՝ մի կողմից, օրենսդրական նախաձեռնության հնարավորությունից օգտվելով, հանդես գալ համապատասխան առաջարկներով, մյուս կողմից՝ կատարելագործել անհրաժեշտ ենթաօրենսդրական բազան՝ արձանագրված իրավախախտումները կանխելու համար, ինչպես նաև վճարել արդարացի փոխհատուցում, տեղեկացնել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին կատարված կազմակերպավարչատեխնիկական, օրենսդրական աշխատանքների, մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման, այդ թվում՝ նոր հանգամանքով գործերի վերանայման ընթացքի և արդյունքների մասին,

գ) իրավակիրառին, այդ թվում՝ դատական իշխանությանը՝ հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (հաճախ գործադիր իշխանության հետ համատեղ), ինչպես նաև չկիրառել Կոնվենցիոն խախտման հիմքում ընկած ներպետական համապատասխան իրավանորմը կամ այն կիրառել Կոնվենցիային համահունչ մեկնաբանությամբ:

Ըստ իրավական ամրագրման հանգամանքի՝ նշված պարտավորությունները կարող ենք դասակարգել երկու խմբի՝ իմպերատիվ ու դիսպոզիտիվ:

Առաջին խմբի մեջ մտնում են այն իմպերատիվ պարտավորու-

²² St 'u, մասնավորապես, Pla and Puncernau v. Andorra Judgment, Judgment of 13 July 2004. Odievre v. France, Judgment of 13 February 2003:

յունները, որոնց կատարումն ուղղակիորեն ամրագրված է համապատասխան իրավական ակտերում կամ Եվրոպական դատարանի վճիռներում (վճարել արդարացի փոխհատուցում, իրականացնել անհատական բնույթի միջոցառումներ, մասնավորապես, հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը, տեղեկացնել Կոմիտեին կատարված անհատական և ընդհանուր բնույթի միջոցառումների մասին), իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում դիսպոզիտիվ պարտավորությունները, որոնց կատարումն անմիջականորեն ապահովված չէ իրավական պահանջով, այլ ավելի շատ կրում է քաղաքական-հայեցողական-կանխարգելիչ բնույթ (մասնավորապես, սահմանել Եվրոպական դատարանի վճռից բխող համապատասխան նոր իրավակարգավորումներ, չկիրառել Կոնվենցիոն խախտման հիմքում ընկած ներպետական համապատասխան իրավանորմը կամ այն կիրառել Կոնվենցիային համահունչ մեկնաբանությամբ):

Շարունակելով դրական պատասխանատվության վերաբերյալ վերլուծությունը՝ նշենք, որ բոլոր այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիոն խախտում տվյալ պետության դեմ, վերջինս պարտավոր է ներպետական մակարդակում վերանայել համապատասխան դատական ակտը՝ գործի վարույթի նորոգման միջոցով: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերանայման կամ նորոգման վերաբերյալ (2000) 2 հանձնարարական²³, առկա են նաև Եվրոպական դատարանի վճիռներ²⁴: Իսկ

²³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականը անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կայացված վճիռների հիման վրա ներպետական մակարդակով որոշակի գործեր վերաքննելու կամ վերաբացելու մասին». Համապատասխանաբար Հանձնարարականի նախաբանի 5-րդ պարբերություն 1-ին կետ, 6-րդ պարբերություն:

²⁴ Տե՛ս Պապամիչալոփուլոսը և այլք ընդդեմ Հունաստանի, թիվ 14556/89, 31.10.1995թ., Նիկոդոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ

որոշ դեպքերում էլ, վերաբացման անհրաժեշտությունն այնքան ակնհայտ է, որ Եվրոպական դատարանն ուղղակի նշում է, որ իրավունքի խախտումն արձանագրող վճռում գործի վերաբացման անհրաժեշտության մասին ուղղակիորեն պնդելը կվկայեր միջազգային իրավունքին օտար ֆորմալիզմի մասին²⁵: Նշված հանձնարարականի կատարումն ապահովելու համար, բազմաթիվ պետություններ, այդ թվում՝ Հայաստանը, ընդունել են գործերի վերաբացումը, վերանայումը կարգավորող իրավական կանոնակարգումներ: Այդպիսի իրավական կարգավորումը հնարավորություն կտա, որ ավելի մեծ թվով ներպետական դատարաններ օժտվեն Եվրոպական դատարանի վճիռները քիչ թե շատ ավտոմատ կերպով կատարելու իրավասությամբ²⁶:

Եվրոպական դատարանի՝ հանրային իրավական պատասխանատվություն սահմանող վճիռները կարող ենք դասակարգել նաև մեկ այլ չափանիշով, այն է՝ ըստ բնույթի: Այսպես, ըստ բնույթի վերջիններս լինում են կոնկրետ և ընդհանուր:

Կոնկրետ բնույթի դրական հանրային իրավական պատասխանատվությունը դրսևորվում է հետևյալ միջոցներով՝ արդարացի փոխհատուցման վճարում, մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնում (*restitutio in integrum*), իրավիճակից բխող միջոցներ: Իրավիճակից բխող միջոցների առումով անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այդպիսիք կիրառվում են՝ ելնելով գործի առանձնահատկություններից: Օրինակ՝ Եվրոպական դատարանը կարող է վճռում պահանջել, որ խափանման միջոց կալանքը փոխարինվի խափանման այլ միջոցով²⁷, դատապարտված կալանա-

11724 և 13350/04, 08.04.2004թ., պարբ. 89):

²⁵ Տե՛ս Ռինգայսնն ընդդեմ Ավստրիայի գործով վճիռը (զանգատ թիվ 2614/65, 22.06.1972թ., կետ 8):

²⁶ Տե՛ս The European Journal of International law vol. 19 no. 1. Redesigning the ECtHR: Embeddedness as a deep structural principle of the European human rights regime. Laurence R. Helfer, էջ 137:

²⁷ Տե՛ս Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռը, 46468/06, 12.12.2008թ.:

վորն ազատ արձակվի²⁸, դիմումատուն անմիջապես կալանավայրից տեղափոխվի մասնագիտացված բժշկական հաստատություն²⁹, օտարված հոդատարածքը վերադարձվի դիմումատուին՝ բաց թողնված եկամտի և փոխհատուցման վճարումներով³⁰, ազգային դատարանում վեց ամսվա ընթացքում դատավարություն վերսկսվի³¹ և այլն:

Ընդհանուր բնույթի դրական հանրային իրավական պատասխանատվությունը հետագայում նմանատիպ իրավախախտումները կանխելու նպատակ է հետապնդում: Այն ունի պրնեցիպի նշանակություն: Այսինքն՝ ընդհանուր բնույթի միջոցներն ուղղված են օրենսդրական, ենթաօրենսդրական, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ու կատարելագործմանը: Ասվածի օրինակ է «Քեմպ Բեյլը և Կոզանզն ընդդեմ Մեծ Բրիտանիայի» 1982թ. փետրվարի 25-ի գործը, որից հետո Մեծ Բրիտանիայում ուժի մեջ մտավ մարմնական պատիժների կիրառումն արգելող կրթության մասին նոր օրենք (Եվրոպական դատարանի վճիռը վերաբերում էր դպրոցներում կիրառվող մարմնական պատիժներին): Եղել է նաև այնպիսի պրակտիկա, երբ դրվել է բավականին յուրահատուկ պահանջ, օրինակ՝ կալանավայրերի պայմանների բարելավում³²: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզ մոտ նույնպես կատարվել են մի շարք ընդհանուր դրական պատասխանատվություն պարունակող պահանջներ: Օրինակ՝ «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ

²⁸ Տե՛ս Ֆատուլլանն ընդդեմ Ադրբեջանի գործով վճիռը, թիվ 40984/07, 22.04.2010թ., պարբ. 176-177:

²⁹ Տե՛ս Սլավոմիր Մուսիալն ընդդեմ Լեհաստանի, թիվ 28300/06, 2009թ. հունվարի 20, պարբ. 108):

³⁰ Տե՛ս Դրիզան ընդդեմ Ալբանիայի գործով վճիռը, (զանգատ թիվ 33771/02, 13.11.2007թ., պարբ. 135):

³¹ Տե՛ս Սուլջանիկն ընդդեմ Բոսնիա և Հերցոգովինայի (Suljagic v. Bosnia and Herzegovina) գործով վճիռը, (զանգատ թիվ 27912/02, 2009թ. նոյեմբերի 3, պարբ. 65(i)):

³² Տե՛ս Նախարարների կոմիտեի թիվ (2003) 123 միջանկյալ բանաձևը Կալաշ-նիկովն ընդդեմ Ռուսաստանի (թիվ 47095/99) գործով վճիռից հետո:

Հայաստանի (թիվ 21638/03) վճռի կատարման ընթացքում վերացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և «Պետական տուրքի մասով» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դրույթը³³: Ընդհանուր և անհատական բնույթի միջոցառումների կարևորության մասին փաստել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը³⁴:

Ինչպես նշել ենք, հաճախ Եվրոպական դատարանն ուղղակիորեն չի մատնանշում դրանք, և պետություններն իրենք են ընտրում Եվրոպական դատարանի վճիռների իրացումն ապահովող միջոցները: Պետությունները, ունենալով իրենց դեմ Եվրոպական դատարանի կայացրած վճիռների կատարման և արձանագրված խախտումների վերացման իրավական դրական պարտականություն, միևնույն ժամանակ օժտված են անհրաժեշտ միջոցների և միջոցառումների ընտրության հայեցողությամբ (a margin of appreciation): Սակայն, միևնույն ժամանակ, լինում են իրավիճակներ, երբ Եվրոպական դատարանն անհրաժեշտ է համարում ուղղակիորեն մատնանշել, թե պետությունն ինչ է պարտավոր անել³⁵:

Համառոտ ներկայացնենք նաև, թե ինչպիսին է Եվրոպական դատարանի վճիռների կատարման վիճակը Հայաստանում: Եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության վերաբերյալ առաջին վճիռը կայացրել է 2007 թվականին: ՀՀ-ի դեմ Եվրոպական դատարանի կայացրած վճիռների կատարման վերաբերյալ վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ 2007 թվականից մինչ օրս³⁶ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացվել է 133 վճիռ: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի եզրափակիչ

³³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները, Երևան, 2011թ., էջ 70:

³⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 19.02.2009թ. թիվ 3-10(ՏԴ) որոշումը:

³⁵ Տե՛ս Աբբասովն ընդդեմ Ադրբեյջանի գործով վճիռը, 24271/05, 17.01.2008թ., պարբ. 37:

³⁶ 2021 թվականի մայիսի 18-ի դրությամբ:

բանաձևով ավարտվել է 84 վճռի կատարողական-վերահսողական վարույթ, իսկ 49-ը գտնվում են կատարման փուլում: 49 գործերից ընդամենը 11-ի կատարումն է վերահսկվում խստացված ընթացակարգով, իսկ մնացածինը՝ ստանդարդ ընթացակարգով: 8 գործ դեռ չի դասակարգվել³⁷:

Մեզ համար մի կողմից մտահոգիչ է այն հանգամանքը, որ գործերի վերանայման արդյունքում գործի ելքը գերակշռորեն մնում է անփոփոխ, իսկ մյուս կողմից այն, որ իրավունքի խախտման գոհերը պատշաճ ջանասիրություն և դրական վարքագիծ չեն դրսևորում նոր հանգամանքով ներպետական դատական ակտի վերանայման պահանջ ներկայացնելու առումով: Այս համատեքստում ներկայացված վերլուծությունը ցանկանում ենք եզրափակել այն դիպուկ բնորոշմամբ, որ տրվել է Եվրոպական դատարանի դերի մասին: Վերջինս հանգում է այն բանաձևմանը, որ մեզ մեծապես կարող են օգնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հարուստ փորձն ու դատարանի նախադեպային իրավունքի խելամիտ իրացումը մեր իրավական համակարգում³⁸:

Վերոշարադրյալ վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների կատարումը կարող է ամբողջական լինել միայն հետևյալ պահանջների համարժեք ընկալման և ապահովման դեպքում.

- Եվրոպական դատարանն այսօր մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության գործունե երաշխիք է դարձել:

- Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին հե-

³⁷ [https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECDocumentTypeCollection%22:\[%22CEC-%22\],\[%22EXECLanguage%22:\[%22ENG%22\],\[%22EXECState%22:\[%22ARM%22\]\]}](https://hudoc.exec.coe.int/eng#{%22EXECDocumentTypeCollection%22:[%22CEC-%22],[%22EXECLanguage%22:[%22ENG%22],[%22EXECState%22:[%22ARM%22]]})

³⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի ելույթի տեքստը 2014թ. դեկտեմբերի 15-ին Երևանում իրավիքված՝ «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները և Եվրոպական դատարանում կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում» խորագրով միջազգային համաժողովում http://concourt.am/armenian/structure/president/articles/yerevan2014_am.pdf:

տնելն ունի կանխարգելիչ նշանակություն:

- Եվրոպական դատարանի վճիռների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների ակտերի կատարման պարտականություն կրում են պետական իշխանության բոլոր մարմինները՝ կախված կոնկրետ վճռում ամրագրված՝ ՀՀ-ի կողմից իրականացվելիք միջոցառումների բնույթից:

- Եվրոպական դատարանի վճիռների կատարման և ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 61-րդ հոդվածի 2-րդ մասով երաշխավորված՝ միջազգային մարմիններին դիմելու իրավունքի միջև առկա է անքակտելի կապ. հակառակ դեպքում այդ իրավունքը կդառնա հռչակագրային նշանակություն ունեցող:

- ՀՀ դատարանները (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը և վճռաբեկ դատարանը) իրենց իրավասությանը վերապահված գործեր քննելիս պետք է հաշվի առնեն ինչպես Եվրոպական դատարանի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան (նախադեպային իրավունքը):

- Եվրոպական դատարանը Կոնվենցիային մասնակից պետություններին ենթարկում է հանրային իրավական պատասխանատվության, որը դրսևորվում է վերջինիս դրական և բացասական, կոնկրետ և ընդհանուր տեսակների միջոցով:

- Անհրաժեշտ է ստեղծել ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին, որը, օժտված լինելով անհրաժեշտ լիազորություններով, կկարողանա մշտադիտարկում իրականացնել և մասնագիտական գնահատական տալ պարտավորությունների բարեխիղճ կատարման վիճակի, խնդիրների, դրանց լուծման հնարավոր միջոցների վերաբերյալ:

РОЛЬ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА ПУБЛИЧНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Карен Амирян

*Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук*

Цель данной статьи - представить роль Европейского суда по правам человека в аспекте публично-правовой ответственности государственной власти. В статье этот вопрос рассматривается с точки зрения позитивной и негативной ответственности, в рамках которой делается ссылка как на ответственность государства в целом, так и на ответственность каждой ветви власти. В результате исследования был сделан ряд выводов, и мы считаем, что исполнение постановлений Европейского суда по правам человека может быть целостным только в случае их полноценного восприятия и соблюдения.

THE ROLE OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF IMPLEMENTING THE PRINCIPLE OF PUBLIC LEGAL RESPONSIBILITY

Karen Amiryan

*Assistant at the YSU Chair of Theory and History of State and Law,
Candidate of Legal Sciences*

This article is aimed at introducing the role of the European Court of Human Rights in the issue of public legal responsibility of state power. The article discusses the issue from the perspective of positive and negative responsibility, in the framework of which reference is made to the responsibility of the state as a whole, as well as to the responsibility of each of the branches of government. As a result of the study, a number of conclusions have been drawn, so we consider that the enforcement of the decisions of the European Court of Human Rights can be comprehensive only in the case of their full perception and observance.

Բանալի բառեր – Մարդու իրավունքների եվրոպական դատարան, պետության պատասխանատվություն, եվրոպական դատարանի դատական ակտերի կատարում, պետական իշխանության հանրային իրավական պատասխանատվություն:

Ключевые слова: Европейский суд по правам человека, ответственность государства, исполнение судебных актов Европейского суда, публично-правовая ответственность государственных власти.

Key words: European Court of Human Rights, responsibility of the State, execution of judgments of the European Court, public legal responsibility of state authorities.

ՓԱՍՏԱՑԻ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Գևորգ Վիրաբյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի դասախոս*

Իրավաբանական դոկտրինում, ի համեմատություն, օրինակ՝ իրավանորմի և իրավական կանխավարկածի կամ իրավական սկզբունքի և իրավական կանխավարկածի հարաբերակցությանը, վերջինիս դասակարգման հարցը մշտապես գտնվել է իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, դժվար է գտնել իրավական կանխավարկածներին նվիրված երկու կամ ավելի ատենախոսություն, ուսումնական դասագիրք, ձեռնարկ կամ մենագրություն, որոնց շրջանակներում հեղինակներն անդրադարձ կատարած չլինեն իրավական կանխավարկածների դասակարգմանը: Այս նույն տրամաբանության շրջանակներում, սակայն, դժվար է նշված աղբյուրներում գտնել այն հարցի պատասխանը, թե այդ հետազոտությունները հանուն ինչի՞ են կատարվել: Բնարկե, բացատրությունն այն չէ, որ իրավական կանխավարկածի և իրավական այլ միջոցների հարաբերակցության հիմնահարցը, այնուամենայնիվ, նվազ կարևոր է, քան դասակարգմանը: Առկա իրավիճակն ավելի շատ, այսպես կոչված, «գիտական ճաշակի» հարցը է, որը, անշուշտ, իր բացասական հետազիծն է թողել իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության մշակման ճանապարհին: Ավելին, իրավական կանխավարկածների դասակարգման ու իրավական այլ միջոցների հետ հարաբերակցության հիմնահարցերը սերտորեն կապված են միմյանց հետ. իրավաբանական հանրությունը պետք է ի վերջո հաշվի նստի այն իրողության հետ, որ դասակարգման հարցի քննարկումն անիմաստ է առանց իրավական կանխավարկածի՝ որպես օժանդակ իրավական միջոցի, իրավական այլ միջոցների

հետ հարաբերակցության հարցի քննարկման և հակառակը: Հետևաբար, իրավական կանխավարկածների դասակարգման այս կամ այն տեսակի վերաբերյալ հետազոտություն իրականացնելիս ամենից առաջ պետք է խորհել հետևյալ հարցադրումների շուրջ՝ հանուն ի՞նչի է հետազոտությունը կատարվում, ո՞րն է նպատակը: Եթե նպատակը գիտական նոր ճշմարտության բացահայտումն է, ապա ո՞րն է այդ ճշմարտությունը, որո՞նք են վերջինիս որոշման չափանիշները, ո՞ւմ է այն անհրաժեշտ և ինչի՞ համար: Մեր պատկերացմամբ անհրաժեշտ է այն ճշմարտությունը, որն անհատի և հասարակության իրավական կարգավորման տեսանկյունից պիտանի և օգտակար է (ունի պրագմատիկություն), որի նպատակի շուրջ առկա է կոնսենսուս:

Նշված հարցադրումների և վերջիններիս վերաբերյալ մեր պատկերացումների համատեքստում՝ սույն հետազոտությունը նվիրվել է փաստացի կանխավարկածների հիմնահարցին ոչ թե իրավագիտության մեջ ձևավորված գիտական «ավանդույթներից» կամ «նորաձևություններից» հետ չմնալու, այլ այն պարզպատճառով, որ *(1) փաստացի իրավական կանխավարկածների էությունը շարունակվում է մնալ չբացահայտված, որի բացահայտումը, սակայն, ունի գործնական նշանակություն, (2) այդ հիմնահարցի քննարկումը հնարավորություն կընձեռնի մի մասով ընկալելու իրավական կանխավարկածի էությունն ու նշանակությունը, (3) պիտանիության և օգտակարության տեսանկյունից հետազոտության արդյունքներն իրավակիրառին, իրավաիրացնողին, հետազոտողներին հնարավորություն կտան ընկալելու ինչպես փաստացի իրավական և ուղղակի ու անուղղակի իրավական կանխավարկածների տարբերությունները, այնպես էլ իրավական կանխավարկածի և իրավական այլ միջոցների հարաբերակցության հետ կապված հարցերը, որոնք դարձյալ ունեն գործնական նշանակություն:* Այլ կերպ ասած՝ կատարված հետազոտությունը, որի մեթոդաբանական հիմքն իրավունքի գործի-

քակագմային տեսությունն է¹, ունի տեսագործական նշանակություն: Իսկ ինչպիսի՞ն է փաստացի կանխավարկածների շուրջ արդի վիճակն իրավաբանական դոկտրինում, ո՞րն է հիմնահարցը, և որո՞նք են վերջինիս լուծման ուղիները:

Եթե վերցնենք և սկսենք բարեխղճորեն ուսումնասիրել մասնագիտական գրականությունը, ապա կտեսնենք, որ իրավաբանական միտքն ամբողջությամբ ողողված է այն գաղափարով, համաձայն որի՝ պատմական առումով «փաստացի կանխավարկածներ» հասկացությանը համապատասխանել է միջնադարում կիրառվող «*praesumptiones hominis*» եզրույթը²: Դ. Ի. Մեյերը, *praesumptiones hominis*-ը կամ ինչպես հաճախ նշվում է գրականության մեջ՝ համամարդկային կանխավարկածները³ տարանջատելով օրենքով նախատեսված կանխավարկածներից, նշում էր, որ վերջինիս ներքո պետք է հասկանալ մարդկանց պատկերացումների, ընդհանուր տրամաբանության և փորձի վրա հիմնված փաստի մասին կարծիք, որը, սակայն, չունի հարկադրական բնույթ:⁴ Ե. Վ. Վասկովսկու կարծիքով փաստացի կանխավարկածների արժեքն այն է, որ վերջիններս թեև դատարանի համար պարտադիր չեն, այնուամենայնիվ, ըստ անհրաժեշտության, դատարանը կարող է ղեկավարվել այդպիսի կանխավարկածներով⁵: Փաստացի կանխավարկածների մասին այդպիսի վերաբերմունք ժամանակին արտահայտել են նաև Ի. Օ. Օրշանս-

¹ Իրավունքի գործիքակագմային տեսության՝ որպես մեթոդաբանության մասին տե՛ս **Վիրաբյան Գ. Մ.**, Իրավական կանխավարկածների ընդհանուր տեսության հայեցակարգի մշակման մեթոդաբանության շուրջ: Регион и мир // Научно-аналитический журнал. Том XII, № 2, 2021, էջ 33-42:

² Տե՛ս, օրինակ, **Грубцова С. П.**, Правовые презумпции в судебном административном процессуальном праве: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2018, էջ 145:

³ Տե՛ս **Грубцова С. П.**, նույն տեղը:

⁴ Տե՛ս **Мейер Д. И.**, Избранные произведения по гражданскому праву. М.: Изд. АО «Центр ЮрИнфоР», 2003, էջ 15, 98-121:

⁵ Տե՛ս **Васьковский Е. В.**, Учебник гражданского процесса. Под ред. В. А. Томсинова. М.: Изд. Зерцало, 2003, էջ 294:

կին⁶, Գ. Ֆ. Դորմիդոնտովը,⁷ Յու. Ս. Գամբարովը,⁸ Ե. Ա. Նեֆեդևը,⁹ Կ. Պ. Պոբեդոնոսցևը¹⁰ և այլոք:

Այս կերպ հարցին մոտենալու միտումները շարունակվում են նաև այսօր: Մասնավորապես, իրավագետները նշված հարցի մասին խոսելիս առաջարկում են կանխավարկածները, ըստ ամրագրման փաստի, դասակարգել իրավականի (իրավաբանականի) կամ օրինականի և փաստացիի¹¹: Եթե փորձենք առավել ընդհանուր կերպով ներկայացնել արդի վիճակը, ապա կարող ենք արձանագրել, որ

⁶ Տե՛ս **Оршанский И. Г.**, О законных предположениях и их значении // Журнал гражданского и уголовного права. Изд. Типография А. М. Котомина, 1874, Кн. 4, էջ 6-7:

⁷ Տե՛ս **Дормидонтов Г. Ф.**, Классификация явлений юридического быта, относимых к случаям применения фикций. Казань: Изд. Типо-лит. Имп. ун-та, 1895, էջ 22-26:

⁸ Տե՛ս **Гамбаров Ю. С.**, Гражданское право. Общая часть. М.: 1899, էջ 565-581 (ներբերնվել է՝ <https://www.twirpx.com/file/182635/> էլ. կայքից, 20.01.2021թ., ժամը՝ 20:33):

⁹ Տե՛ս **Нефедьев Е. А.**, Учебник русского гражданского судопроизводства. Краснодар: Изд. Совет. Кубань, 2005, էջ 214:

¹⁰ Տե՛ս **Победоносцев К. П.**, Курс гражданского права. Часть вторая: Права семейственные, наследственные и завещательные: Учебник. М.: Изд. Статут, 2003, էջ 18, 128, 136, 615:

¹¹ Տե՛ս, օրինակ, **Бабаев В.К.**, Презумпции в советском праве. Горький: Изд. ГВШ МВД СССР, 1974, էջ 41-45, **Штугин Я. Л.**, Предмет доказывания в гражданском процессе. М.: Изд. Госюриздат, 1963, էջ 105, **Каминская В. И.**, Учение о правовых презумпциях в уголовном процессе. М., Л.: Изд. АН СССР, 1948, էջ 34-39, **Клейнман А. Ф.**, Основные вопросы теории доказательств в советском гражданском процессе. Л.: Изд. АН СССР, 1950, էջ 47, **Штейнберг А.**, Предположения как доказательства в гражданском процессе. // Сов.юстиция. Изд. НКЮ СССР, 1940, № 13, էջ 11-13, **Васильев Л. В.**, Фактические презумпции в советском уголовном судопроизводстве // Известия высших учебных заведений. Правоведение. 1982, № 1, էջ 95-99, **Федотов А. В.**, Понятие и классификация доказательственных презумпций // Журнал рос.права. 2001, № 4, էջ 64-79, **Кузнецова О. А.**, Презумпции в российском гражданском праве: дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2002, էջ 69-72, **Нахова Е. А.**, Роль презумпций и фикций в распределении обязанностей по доказыванию. Саратов: Изд. Саратов. ун-та, 2006, էջ 43, 49-50, **Ренц И. Г.**, Факты и доказательства в международных спорах: между истиной и справедливостью. М.: Изд. Статут, 2018, էջ 135-141:

քննարկվող հարցի շուրջ ձևավորվել է երկու մոտեցում՝ փիլիսոփայական և իրավաբանական: Առաջին մոտեցման հետևորդները գտնում են, որ փաստացի կանխավարկածներն իրավունքում իրականացնում են որոշակի գործառույթներ, որոնք սակայն չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների, իսկ երկրորդ՝ իրավաբանական մոտեցումը մերժում է փաստացի կանխավարկածների գոյությունը: Սակայն, միևնույն ժամանակ, վերջինիս կողմնակիցները նույնպես նշում են, որ թեև փաստացի կանխավարկածները չեն ամրագրվում իրավանորմերում և չեն հանգեցնում իրավաբանական հետևանքների ու պարտադիր չեն դատարանների համար, այնուամենայնիվ ունեն որոշակի նշանակություն¹²:

Եթե մի պահ հետադարձ հայացք գցենք, ապա կտեսնենք, որ երկու մոտեցումներն էլ համակարծիք են այն հարցի շուրջ, որ փաստացի կանխավարկածները դատարանների համար պարտադիր չեն և իրավական հետևանքներ չեն առաջացնում: Արդյունքում մնում է միայն այն, որ փաստացի կանխավարկածները, ըստ նշված մոտեցումների, իրականացնում են որոշակի գործառույթ, հետևաբար ունեն որոշակի նշանակություն և դեր: Այդ դեպքում հարց է առաջանում՝ ինչո՞ւ են շարունակում վիճել, ինչո՞ւ այս հարցի վերաբերյալ մինչ օրս չեն ձևավորում միասնական մոտեցում... Մնում է ենթադրել, որ հարցադրման էությունը վերջիններիս համար շարունակվում է մնալ չընկալված և չբացահայտված. հիմնահարցը, որը պետք է ստանա իր լուծումը, հետևյալն է՝ *«փաստացի կանխավարկածն իրավական է, թե՛ ոչ: Եթե իրավական է, ապա պետք է հանգեցնի նաև իրավական հետևանքների, իսկ եթե իրավական չէ, ապա պետք է դադարեցնել այդ ուղղությամբ հետազոտությունների իրականացումը»*: Հարկ է նկատել, որ քննարկվող հարցի գոյությունը նաև ուղղա-

¹² Փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների մասին տե՛ս **Сериков Ю. А.**, Презумпции в гражданском судопроизводстве. М.: Изд. Волтерс Клувер, 2008, էջ 18-19:

կի և անուղղակի իրավական կանխավարկածների ոչ ճիշտ ընկալման արդյունք է:

Այս հիմնահարցի լուծման բանալին գտնելու համար առաջարկում ենք հետևյալ ճանապարհային քարտեզը՝ *համակարգային վերլուծության ենթարկել փիլիսոփայական և իրավաբանական մոտեցումների կողմից առաջարկվող չափանիշները, վեր հանել թերությունները և ներկայացնել այս հիմնահարցի լուծման մեր տեսլականը*:

Այսպես, Ս. Պ. Գրուբցովան նշում է, որ փաստացի կանխավարկածը լավագույն դեպքում փաստի մասին հավանական ենթադրություն է, որը, հաշվի առնելով նորմատիվ ամրագրման բացակայությունը, չի հանգեցնում իրավական հետևանքների¹³: Խնդիրն այն է, որ հեղինակի, *որը թեև խուսափել է իրավական կանխավարկածի հասկացությունը սահմանելուց*, աշխատանքի երկրորդ գլխի առաջին պարագրաֆն ուսումնասիրելիս, որը նվիրված է եղել իրավական կանխավարկածի էությանը, ակնհայտ է դառնում, որ վերջինս իրավական կանխավարկածը ևս դիտարկում է որպես ենթադրություն, որի հատկանիշներից է ինդուկտիվ բնույթը և հավանականությունը¹⁴: Այստեղ հարց է առաջանում. եթե ինչպես իրավական, այնպես էլ փաստացի կանխավարկածները ենթադրություններ են, ապա որո՞նք են վերջիններս միմյանցից տարանջատելու չափանիշները: Ըստ հեղինակի՝ չափանիշը նորմատիվային ամրագրումն է: Եթե նորմատիվային ամրագրումն է, ապա հարց է առաջանում՝ այդ դեպքում ինչպե՞ս պետք է միմյանցից տարանջատել փաստացի և անուղղակի կանխավարկածները, և դա այն դեպքում, երբ հեղինակի կարծիքով անուղղակի կանխավարկածները բխեցվում են իրավանորմերից¹⁵: Մեզ համար Ս.Պ. Գրուբցովայի կողմից առաջ քաշված տեսակետն ընդունելի կլիներ, եթե վերջինս առնվազն մեկ օրինակի շրջա-

¹³ Տե՛ս Գրուբցова С. П., նշված աշխատությունը, էջ 147:

¹⁴ Տե՛ս Գրուբցова С. П., նշված աշխատությունը, էջ 72:

¹⁵ Տե՛ս Գրուբցова С. П., նշված աշխատությունը, էջ 153:

նակներում միմյանց հետ համեմատեր փաստացի և անուղղակի իրավական կանխավարկածները և վեր հաներ վերջիններիս միջև առկա տարբերությունները: Մինչդեռ օրինակի առկայությունը բացակայում է:

Փաստացի կանխավարկածներին իր թեկնածուական ատենախոսության շրջանակներում անդրադարձել է Լ. Ա. Աստեմիրովան՝ նշելով, որ վերջիններս, որոնք ամրագրված չեն իրավանորմում, հիմնված են փաստացի կապերի կրկնվողության հաճախականության վրա¹⁶: Սակայն հեղինակը, ինչպես որ Ս. Պ. Գրուբցովան, հրաժարվել է փաստացի կանխավարկածը որևէ օրինակի շրջանակներում քննարկելուց: Արդյունքում կրկին բաց է մնացել այն հարցը, թե ինչպե՞ս են միմյանց հետ հարաբերակցվում փաստացի և անուղղակի կանխավարկածները, երբ երկուսն էլ, ըստ հեղինակի, հավանական դատողություններ են¹⁷:

Հաջորդ հեղինակը, որին կցանկանայինք անդրադառնալ, Ն. Ս. Կարանինան է: Վերջինիս աշխատանքի դիտարկումը ցույց է տալիս, որ հեղինակի մոտ առկա են միմյանց հակասող մտքեր: Մասնավորապես, աշխատանքի երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում գրում է, որ փաստացի կանխավարկածներն իրավական պրակտիկայից կատարվող հետևություններ են, որոնք օրենսդրությամբ չեն ամրագրվում: Հաջորդ նախադասությամբ գրում է, որ ապացուցման գործընթացում վերջիններիս վրա տարածվում է օրինական կանխավարկածների կիրառման ռեժիմը: Այնուհետև նշում է, որ փաստացի կանխավարկածները, քանի որ օրենքում ամրագրված չեն, դատարանի համար պարտադիր չեն և փաստացի կանխավարկածները կարող են կիրառվել, եթե դատարանը գտնում է, որ վերջիններս ճիշտ են¹⁸: Առաջին հարցը, որ ծագում է, հետևյալն է՝ ինչպե՞ս է դա-

¹⁶ Տե՛ս **Астемирова Л. А.**, Презумпции в российском праве: дисс. канд. юрид. наук. Москва, 2010, էջ 83:

¹⁷ Տե՛ս **Астемирова Л. А.**, նշված աշխատությունը, էջ 8-9:

¹⁸ Տե՛ս **Каранина Н. С.**, Правовые презумпции в теории права и российском законодательстве: дисс. канд. юрид. наук. Москва, 2006, էջ 83:

տարանը որոշում փաստացի կանխավարկածի ճիշտ կամ սխալ լինելը: Այս հարցը, սակայն, Ն. Ս. Կարանինայի կողմից մնում է անպատասխան:

Հեղինակը, որպես փաստացի կանխավարկածի օրինակ, բերում է ոստիկանության համազգեստով անձի առկայությունը, ով ներկայացնում է նաև համապատասխան վկայականը: Այսինքն՝ համազգեստի և վկայականի առկայության դեպքում գործում է տվյալ անձի՝ ոստիկանության ծառայող լինելու փաստացի կանխավարկածը¹⁹: Խնդիրն այն է, որ Ն.Ս. Կարանինայի կողմից բերված կանխավարկածը բխում է օրենքից: Մասնավորապես, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի²⁰ 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողին տրամադրվում է համազգեստ և վկայական: Այս իրավադրույթի առկայությունն էլ պայմանավորում է նշված կանխավարկածի գոյությունը, որը բխեցնում ենք նորմատիվ իրավական ակտը մեկնաբանելու միջոցով: Հետևաբար, դժվար է հասկանալ, թե ինչպե՞ս է հեղինակն այս կանխավարկածը դիտարկում որպես փաստացի, եթե ուղղակի կամ անուղղակի կանխավարկածների մասին խոսելիս էլ նշում է, որ անուղղակի իրավական կանխավարկածը վեր է հանվում օրենսդրության մեկնաբանման միջոցով²¹: Դարձյալ հարց է առաջանում՝ որո՞նք են փաստացի և անուղղակի կանխավարկածների տարանջատման չափանիշները:

Այնուհետև Ն. Ս. Կարանինան նշում է, որ օրենքում իրենց ամրագրումը գտնում են առավել կարևոր կանխավարկածները: «Այնուամենայնիվ օրենքի տեքստում ամրագրում չստացած կանխավարկածները», - գրում է հեղինակը, - «չեն կորցնում իրենց իրավաբանակ ուժը»:²² Այս դեպքում ինչպե՞ս հասկանալ «չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը» արտահայտությունը, եթե հեղինակը մինչ այդ գրում է, որ փաստացի կանխավարկածները պարտադիր ուժ

¹⁹ Տե՛ս Կаранина Н. С., նշված աշխատությունը, էջ 83-84:

²⁰ Ընդունվել է 03.07.2002թ.: ՀՀՊՏ 2002.08.08/32(207): Հոդ. 734:

²¹ Տե՛ս Կаранина Н. С., նշված աշխատությունը, էջ 96:

²² Տե՛ս Կаранина Н. С., նշված աշխատությունը, էջ 85:

չունեն: Իր կողմից ստեղծած այս որոգայթը հեղինակը փորձում է հաղթահարել փաստացի կանխավարկածն իրավական սովորույթի հետ նույնացնելու միջոցով:²³ Եթե նույնիսկ դա այդպես է, ապա միևնույն է իրերի դրությունը ոչնչով չի փոխվում, քանի որ իրավական սովորույթն ունի համապարտադիր բնույթ²⁴, և դատարանը պետք է օրենքով նախատեսված դեպքերում այն կիրառի, իսկ փաստացի կանխավարկածը Ն. Ս. Կարանինայի կարծիքով պարտադիր ուժ չունի:

Հակասություններն ավելի են խորանում, երբ փորձում ենք հասկանալ, թե վերջինս ինչ է հասկանում իրավական կանխավարկած ասելով: Մասնավորապես, Ն. Ս. Կարանինան գրում է, որ կանխավարկածն իր բնույթով ենթադրություն է, որը գործում է բացառապես իրավունքում, իսկ տրամաբանական առումով հավանական դատողություն է²⁵: Միևնույն ժամանակ նշում է, որ փաստացի կանխավարկածը նույնպես ենթադրություն է, որը, սակայն, չունի պարտադիր բնույթ: Խնդիրն այն է, որ Ն. Ս. Կարանինան, վկայակոչելով մի շարք հեղինակների, որոնց կարծիքով փաստացի կանխավարկածները, քանի որ իրավանորմում ամրագրված չեն, չունեն իրավական բնույթ և իրավունքից դուրս են գտնվում, արձանագրում է, որ վերջիններիս հետ կարելի է համաձայնվել միայն առաջին մասով, իսկ երկրորդ մասով կարելի է վիճել, քանի որ բովանդակային առումով իրավական կանխավարկածը տրամաբանական դատողություն է, իսկ ձևի տեսանկյունից փաստացի կանխավարկածը համանման է իրավանորմի և նորմատիվ իրավական ակտի հոդվածի հարաբերակցությանը²⁶: Եթե այդպես է, ապա հեղինակը պետք է բացատրեր այն միտքը, թե ի՞նչ է նշանակում՝ փաստացի կանխավարկածն ամրագրված չէ իրավանորմում: Եթե իրավանորմում ամրագրված չէ,

²³ Տե՛ս **Каранина Н. С.**, նույն տեղը:

²⁴ Տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ, Եր., հեղ. հրատ., 2017, էջ 94:

²⁵ Տե՛ս **Каранина Н. С.**, նշված աշխատությունը, էջ 11-12:

²⁶ Տե՛ս **Каранина Н. С.**, նշված աշխատությունը, էջ 84-85:

ապա ըստ հետազոտողի տրամաբանության՝ այն պետք է ամրագրված լինի նորմատիվ իրավական ակտի հոդվածում: Եթե ամրագրված է հոդվածում, նշանակում է՝ ամրագրված է նաև իրավանորմում: Այլ կերպ ասած՝ հեղինակն ավելի շատ մտել է հակասությունների մեջ, քան առկա հարցերին տվել լուծումներ:

Քննարկվող հարցի վերաբերյալ համանման մոտեցում ունի նաև Դ. Մ. Շեկինը: Վերջինս նշում է, որ փաստացի կանխավարկածները, ի տարբերություն իրավաբանական կանխավարկածների, ուղղված չեն իրավական կարգավորման նպատակին: Վերջինիս կարծիքով կանխավարկածը կա՛մ ամրագրված է իրավանորմում, կա՛մ ոչ. երրորդ տարբերակ գոյություն չունի²⁷: Մի պահ ընդունենք, որ դա այդպես է: Այդ դեպքում ինչպես պետք է բացատրել հեղինակի այն միտքը, ըստ որի՝ փաստացի կանխավարկածներն իրավունքի հետ նվազագույնը փոխգործակցում են երկու ուղղություններով: Առաջին, փաստացի կանխավարկածներն իրավանորմերի ընդունման և ձևակերպման հիմք են և երկրորդ, փաստացի կանխավարկածները կիրառվում են ապացույցները գնահատելիս²⁸: Հետևաբար, եթե վերջիններս ուղղված չեն իրավական կարգավորմանը, ապա ի՞նչ պետք է հասկանանք այս ամենի ներքո: Հակասությունը հասնում է իր գազաթնակետին, երբ Դ. Մ. Շեկինը, նախ վկայակոչելով ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանի որոշումը, ուղղակի նշում է, որ դատարանը որպես անհատույց ստացած գումարների՝ հարկային մարմնի կողմից որակավորման գործերով վեճերի լուծման ժամանակ բազմիցս կիրառել է փաստացի կանխավարկած²⁹: Այնուհետև հղում կատարելով ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 3-րդ կետին՝ նշում է, որ հատուցելիության փաստացի կանխավարկածն օրենսդրի կողմից տվյալ նորմի ստեղծման համար հիմք է հանդիսացել: Ստացվում է, որ հեղինակը հաջորդ մտքի

²⁷ См. у **Щекин Д. М.**, Юридические презумпции в налоговом праве. Учебное пособие. М.: Изд. МЗ Пресс, 2002, էջ 62:

²⁸ См. у **Щекин Д. М.**, նշված աշխատությունը, էջ 63:

²⁹ См. у **Щекин Д. М.**, նշված աշխատությունը, էջ 63-64:

շրջանակներում ընդունում է, որ իրավանորմերից դուրս առկա են իրավական փաստացի կանխավարկածներ և այդ կանխավարկածներն ուղղված են իրավական կարգավորմանը, սակայն մինչ այդ էլ գրում է, որ իրավաբանական է այն կանխավարկածը, որն ուղղակի կամ անուղղակի ամրագրում է գտել օրենսդրության մեջ³⁰: Ավելին, Դ. Մ. Շեկինի կարծքով ևս անուղղակի կանխավարկածը վեր է հանվում մեկնաբանման միջոցով: Սակայն չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչպես են միմյանց հետ հարաբերակցվում (տարանջատվում) փաստացի և անուղղակի կանխավարկածները: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հեղինակի մոտ նույնպես առկա են միմյանց հակասող մտքեր, որոնք, բնականաբար, չեն կարող թույլ տալ ընկալելու հարցի բուն էությունը:

Վերոգրյալում նկարագրված մոտեցումներն այս կամ այն տարբերություններով նկատվում են նաև Ի.Վ. Ռեշետնիկովայի³¹, Ն. Ա. Նիկիտաշինայի³², Յու.Ա. Սերիկովի³³, Ս. Ա. Մոսինի³⁴, Ի. Գ. Ռենցի³⁵, Մ. Պ. Պրոնինայի³⁶, Ե. Ա. Ուգրենինովայի³⁷, Ֆ. Գ. Շախկելդովի³⁸, Ն.

³⁰ Տե՛ս **Шекин Д. М.**, նշված աշխատությունը, էջ 29:

³¹ Տե՛ս **Решетникова И. В.**, Презумпции и фикции в арбитражном процессе / Проблемы гражданского процесса. Вестник гражданского процесса, № 1, 2019, էջ 24:

³² Տե՛ս **Никиташина Н. А.**, Классификация презумпции в семейном праве / Теоретические проблемы отраслей права, № 3 (136), 2018, էջ 36-38 (<https://cyberleninka.ru/article/n/klassifikatsiya-prezumptsiy-v-semeynom-prave/viewer>, վերջին մուտքը՝ 26.01.2021թ., ժամը՝ 16:11):

³³ Տե՛ս **Сериков Ю. А.**, Презумпции в гражданском судопроизводстве. М.: Изд.Волтерс Клувер, 2008, էջ 19:

³⁴ Տե՛ս **Мосин С. А.**, Конституционные принципы и презумпции-принципы: монография. 2-е изд., перераб. и доп. М.: Изд. Юстицинформ, 2018, էջ 47-48:

³⁵ Տե՛ս **Ренц И. Г.**, Факты и доказательства в международном гражданском процессе: теоретические проблемы: дисс. докт. юрид. наук. Екатеринбург, 2018, էջ 130-150:

³⁶ Տե՛ս **Пронина М. П.**, Презумпции в современном российском праве: дисс. канд. юрид. наук. Н. Новгород, 2010, էջ 52-56:

³⁷ Տե՛ս **Угренинова Е. А.**, Презумпции в российской государственной-правовой традиции: дисс. канд. юрид. наук. Краснодар, 2013, էջ 54-61:

Ն. Յուկանովի³⁹ աշխատանքներում: Թվարկված հեղինակներից առավել հակված ենք աղբյուրաբանաբար իրավաբանական մոտեցման կարկառուն ներկայացուցիչ Ն. Ն. Յուկանովի աշխատանքին, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստացի կանխավարկածների վերաբերյալ վերջինիս մոտ առկա հակասություններն առավել խորքային են:

Այսպես, Ն. Ն. Յուկանովը, քննարկելով փաստացի կանխավարկածները, գրում է, որ այն ոչ թե արժանահավատ, այլ հավանական ընդհանրացում է⁴⁰: Ստացվում է, որ իրավական կանխավարկածն արժանահավատ ընդհանրացում է, իսկ փաստացի կանխավարկածը՝ ոչ: Ենթադրենք՝ առաջնորդվում ենք հավանականություններով և մի պահ ընդունում ենք, որ հեղինակի կողմից առաջ քաշված չափանիշները ճիշտ են: Սակայն այստեղ հարց է ծագում՝ նախ մի կողմից ինչպե՞ս ենք որոշում անուղղակի կանխավարկածն իրավական է, թե՛ փաստացի, և երկրորդ, այն (անուղղակի կանխավարկածը) հավանական է, թե՛ արժանահավատ: Այլ կերպ ասած՝ ո՞րն է հավանականությունն արժանահավատությունից տարանջատելու չափանիշը:

Երկրորդ չափանիշն այն է, որ փաստացի կանխավարկածը կարող է հերքվել, իսկ իրավականը՝ ոչ: Խնդիրն այն է, որ հեղինակը չի բերում փաստացի կանխավարկածի օրինակ, որ այն նախ հավանական է և կարող է հերքվել: Փոխարենը բերում է «օրենքի իմացության» կանխավարկածը և եզրահանգում, որ այն չհերքվող իրավական կանխավարկած է⁴¹: Իրականում, ցանկացած կանխավարկած իր պերֆորմատիվ բնույթի հաշվին ենթակա է հերքման, այդ թվում

³⁸ Տե՛ս **Шахкелдов Ф. Г.**, Концептуальные аспекты презумпции невиновности в уголовномпроцессе: генезис и тенденции совершенствования: дисс. докт. юрид. наук. Майкоп, 2006, էջ 42-44:

³⁹ Տե՛ս **Цуканов Н. Н.**, Правовые презумпции в административной деятельности милиции: дисс. канд. юрид. наук. Омск, 2001, էջ 37-47:

⁴⁰ Տե՛ս **Цуканов Н. Н.**, նշված աշխատությունը, էջ 43:

⁴¹ Տե՛ս **Цуканов Н. Н.**, նշված աշխատությունը, էջ 49:

նան օրենքի իմացության կանխավարկածը: Բերենք մեկ օրինակ և շարժվենք առաջ: Դիցուք՝ Ա-ն 2020 թ. դեկտեմբերի 10-ին Բ-ի հետ կնքած է լինում գործարք: 2021թ. հունվարի 2-ին վթարի է ենթակվում և մոտ մեկ տարի գտնվում է կոմայի մեջ: 2021թ. ապրիլի 1-ին ընդունվում է օրենք, որը հետադարձ ուժ է ունենում Ա-ի կողմից կնքած գործարքի վրա, որը, սակայն, օբյեկտիվորեն չէր կարող կատարել այդ օրենքից բխող գործողություններ: 2021թ. հոկտեմբերի 24-ին Ա-ն դուրս է գալիս կոմայից: Հարց՝ արդյո՞ք կարող ենք պնդել, որ վերջինիս համար ևս գործում է տվյալ օրենքի մասով վերը նշված իրավական կանխավարկածը...

Ն. Ն. Յուկանովի կողմից առաջ քաշված չափանիշների անկարողությունն առավել վառ դրսևորվում է, երբ հեղինակը գրում է, որ փաստացի կանխավարկածի կարևորագույն բնութագրիչ հատկանիշը ենթադրվող փաստի ճշարտացիության բարձր հավանականությունն է⁴²: Այսինքն, եթե բարձր հավանականությունը բացակայում է, նշանակում է՝ փաստացի կանխավարկած գոյություն չունի: Ընդունենք այդպես է: Սակայն հեղինակն ինչպե՞ս պետք է բոլորիս պարզաբանի հետևյալ հարցը՝ անմեղության կանխավարկածն արժանա-հավատ, թե՞ բարձր հավանականության ընդհանրացում է... Շարունակենք: Հակասությունն ավելի է խորանում, երբ նշում է, որ փաստացի կանխավարկածի հերքման համար բավարար է ենթադրվող փաստի ճշմարտացիության վերաբերյալ կասկածը⁴³: Դիցուք՝ Ա-ին ձերբակալում են սպանություն կատարելու պահին: Եթե առաջնորդվենք Ն. Ն. Յուկանովի տրամաբանությամբ, ապա պետք է տվյալ պահից սկսած՝ հերքենք ամեղության կանխավարկածը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հեղինակի կողմից առաջ քաշված չափանիշները ևս չեն կարող հնարավորություն տալ բացահայտելու փաստացի կանխավարկածի էությունը:

⁴² Տե՛ս **Цуканов Н. Н.**, նշված աշխատությունը, էջ 41, 45:

⁴³ Տե՛ս **Цуканов Н. Н.**, նշված աշխատությունը, էջ 47:

Եթե սեղանը մաքրենք, ապա կտեսնենք, որ այն չափանիշները, որոնք առաջարկում են փիլիսոփայական և իրավաբանական մոտեցման կողմնակիցները, հնարավորություն չեն տալիս ստանալու մի շարք հարցերի պատասխաններ: Մասնավորապես, անպատասխան են մնում հետևյալ հարցերը՝ ի վերջո ո՞րն է այս դասակարգման անհրաժեշտությունը, ո՞րն է փաստացի կանխավարկածի էությունը, գործնականում ի՞նչ խնդիրներ է լուծում և այսպես շարունակ: Փոխարենը «հորինում» և սկսում են վիճել ինչ-որ արհեստական խնդիրների շուրջ: Այս անպտուղ բանավեճը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ փաստացի կանխավարկածները շարունակվելու ենք հետազոտել իրականությունից կտրված, քանի դեռ չենք փոխելու մեր պատկերացումներն իրավական կանխավարկածի էության, նշանակության վերաբերյալ: Իսկ ի՞նչ ենք առաջարկում...

Մեր պատկերացմամբ *իրավական կանխավարկածը նորմատիվ իրավական ակտում ուղղակի կամ անուղղակի ձևով ամրագրված կամ իրավական սկզբունքներից, իրավանորմներից, այդ թվում նաև իրավաբանական փաստերից բխեցվող կանխադրույթ հանդիսացող օժանդակ իրավական միջոց է, որը թույլ է տալիս մտածել իրավունքում կամ իրավունքի մասին՝ կառուցելով իրավական երևույթների գոյության կամ բացակայության վերաբերյալ պայմանական արժանահավատ դատողություններ/մտահանգումներ, քանի դեռ այդ կերպ մտածելու հնարավորությունը (դատողությունը/մտահանգումը) չի հերքվել*: Անշուշտ, ընթերցողի մոտ պետք է տրամաբանական հարց ծագի՝ ի՞նչ է սա նշանակում և ի՞նչ հարցերի պատասխաններ է տալիս:

Փորձենք մի քանի օրինակների շրջանակներում նախնական պատկերացում կազմել փաստացի կանխավարկածի էության վերաբերյալ: Երբ խոսում ենք իրավունքի անալոգիայի մասին, նշում ենք, որ ելնելով ընդհանուր սկզբունքներից և իրավունքի իմաստից՝ իրավական սկզբունքի միջոցով կարգավորում ենք օրենսդրությամբ (պո-

զիտիվ իրավունքի շրջանակներում) չկարգավորված հարաբերություններ:⁴⁴ Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ իրավունքի անալոգիա կիրառելու հիմքն իրավական սկզբունքներն են՝ *որպես իրավական համակարգի շարժիչ ուժ, որոնք կանխորոշում են պետության և իրավունքի զարգացման ուղղությունները, չկարգավորված հարաբերությանը հաղորդում են իրավական իմաստ և բովանդակություն*,⁴⁵ իսկ հասարակական հարաբերության կանոնակարգման համար կիրառվող միջոցը՝ «անալոգիան»՝ որպես տրամաբանական հնարք: Սակայն միայն առաջին հայացքից: Երբ խնդրին մոտենում ենք գործիքակազմային առումով, նկատում ենք, որ իրավական սկզբունքի և անալոգիայի կիրառման համար անհրաժեշտ է ինչ-որ կանխադրույթ, օժանդակ իրավական միջոց, որն անվանում ենք իրավական կանխավարկած: Իրականում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ իրավունքի անալոգիա կիրառելը թույլատրված է, մենք ելնում ենք փաստացի իրավական այն կանխավարկածից, որ իրավունքի սկզբունքները, որոնք արտահայտում են իրավունքի էությունը, ի վիճակի են կարգավորելու պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերությունները: Այլ կերպ ասած՝ փաստացի կանխավարկածի առկայությունն է հնարավորություն տալիս կիրառելու անալոգիան՝ որպես տրամաբանական հնարք, իսկ իրավական սկզբունքը՝ որպես պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերության կարգավորման իրավական միջոց:

Պատկերացնենք Ա-ն ցանկանում է Բ-ի հետ կնքած գործարքը վիճարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի⁴⁶ 312-րդ հոդվածով նախատեսված հիմքով, այն է՝ *էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը դատարանով կարող*

⁴⁴ Տե՛ս օրինակ **Нерсисянц В. С.**, Общая теория права и государства: учебник. М.: Изд. Норма, 2012, էջ 494, **Хачатуров Р. Л.**, Аналогия в праве // Вектор науки ТГУ. 2009, № 5(8), էջ 129:

⁴⁵ Տե՛ս օրինակ **Ведяхин В. М.**, Принципы правового регулирования рыночных отношений // Правоведение. 1995, № 4-5, էջ 27:

⁴⁶ Ընդունվել է 05.05.1998թ.: ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

է անվավեր ճանաչվել մոլորության ազդեցության ներքո գործած կողմի հայցով: Էական նշանակություն ունի գործարքի բնույթի կամ դրա առարկայի այնպիսի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը, որոնք զգալիորեն պակասեցնում են այն ըստ նշանակության օգտագործելու հնարավորությունները: Սույն իրավադրույթն անգամ իրավաբանական կրթություն չունեցող անձն ընթերցելուց կհասկանա, որ կարող է վիճարկվել միայն այն մոլորությունը, որն էական է եղել: Հետևաբար, հարց է առաջանում՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հայցվորը պարտավո՞ր է ապացուցել մոլորության էական լինել, թե՞ առկա է իրավական միջոց, որը վերջինիս ազատում է մոլորության էական լինելու փաստն ապացուցելու պարտականությունից: Առաջին հայացքից ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի կերպով այդպիսի իրավական միջոց չենք տեսնում: Սակայն գործառնության անուցվածքային մեթոդը թույլ է տալիս արձանագրելու, որ դիտարկվող հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը, որին հետևում է երկրորդ պարբերությամբ սահմանված նախադասությունը, և որը պայմանավորում է նաև ապացուցման բեռի բաշխումը, կառուցված է հետևյալ փաստացի իրավական կանխավարկածի հիման վրա. *եթե մոլորությունը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված տեսակներից (գործարքի բնույթի կամ դրա առարկայի հատկանիշների վերաբերյալ մոլորությունը) որնէ մեկին, ապա մոլորությունը համարվում է էական, այսինքն, գործում է մոլորության էական լինելու կանխավարկածը, քանի դեռ մյուս կողմը, որը շահագործված է գործարքի վավերությունը պահպանելու մեջ, այլ բան չի ապացուցում:*

Դիցուք՝ պատվիրատուն կապալառուի հետ կնքում է կապալի պայմանագիր, որում նշվում է, որ կապալառուն պայմանագրով նախատեսված տույժերից բացի պատվիրատուին կհատուցի պատճառած վնասը, եթե կապալառուն պայմանագրի շրջանակներում կցուցաբերի չարամիտ դիտավորություն: Այլ կերպ ասած՝ պատվիրատուն վնասների հատուցում պահանջելիս պետք է ապացուցի, որ

կապալառուն իր վարքագծում դրսևորել է չարամիտ դիտավորություն: Պատկերացնենք, որ (1) կապալառուն առանց որևէ պատճառի 2021թ. հունվարի 8-ից սկսած որևէ աշխատանք չի իրականացնում տեղանքում, (2) կապալառուի ծրագրի ղեկավարը 2021թ. հունվարի 10-ից հետո բացակայում է տեղանքից, (3) կապալառուն ներկայացնում է աշխատանքների ավարտման ժամանակացույց, որտեղ ավարտման ժամկետը, առանց որևէ հիմնավորման, նշում է 2022 թ. դեկտեմբերի 30, (4) 2021թ. փետրվարի 1-ից էլ կապալառուն ընդհանրապես լքում է Հայաստանի Հանրապետության տարածքը՝ առանց պայմանագրային պարտավորությունները կատարելու:

Հարց է առաջանում՝ ի՞նչ անել (ինչպե՞ս մտածել): Ընդունենք՝ կիրառելի իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն է: Օրինակ՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը՝ կարող ենք ասել, որ նշված փաստերի դեպքում գործում է կապալառուի կողմից առանց որևէ պատճառի չարամիտ դիտավորություն դրսևորած լինելու կանխավարկածը: Այս կանխավարկածն օրենսդրությամբ առկա չէ, սակայն բխեցվում է պարտավորությունների պատշաճ կատարման սկզբունքից: Այժմ հարց՝ վերջինս փաստացի իրավական կանխավարկա՞ծ է, թե՞ ոչ: Պատասխանն ակնհայտ է՝ այո՛, որը հանգեցնում է նաև իրավական հետևանքների, այն է՝ համարում ենք, որ կապալառուն չարամիտ է եղել իր պարտավորությունների կատարման մեջ այնքան ժամանակ, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Իսկ չապացուցվելու դեպքում էլ կապալառուն պետք է հատուցի պատվիրատուի կրած վնասները: Նշված փաստացի կանխավարկածը հանգեցրե՞ց իրավական հետևանքների, թե՞ ոչ... Կարծում ենք՝ երկրորդ անգամ այս հարցին պատասխանելու անհրաժեշտությունը բացակայում է: Այսինքն՝ կանխավարկած, որն օրենսդրությամբ ամրագրված չէ, սակայն գոյություն ունեցող իրավական սկզբունքը և իրավաբանական փաստերը թույլ են տալիս վերհանելու նշված իրավական կանխավարկածի փաստացի գոյությունն իրավունքում: Եթե հրաժարվենք

այս կերպ մտածելուց, ապա իրավակիրառ պրակտիկայում այդպես էլ չենք կարողանալու դուրս գալ անելանելի իրավիճակներից: Մինչդեռ իրավական կանխավարկածի գործառույթներից մեկն իրավական կարգավորման պարզեցման գործառույթն է:

Օրինակները, իհարկե, կարող ենք անհրճադատ թվել: Սակայն առաջարկում ենք այսքանով բավարարվել: Բարձրացված հիմնահարցի վերաբերյալ մեր տեսլականի՝ առկա մոտեցումներից հայեցակարգային տարբերությունն այն է, որ փաստացի կանխավարկածն իրավական կանխավարկածի տարատեսակ է, որը, զուտ ամրագրման փաստից ելնելով, տարանջատում ենք օրինական իրավական կանխավարկածներից, որոնք իրենց ուղղակի կամ անուղղակի ամրագրումն են գտնում նորմատիվ իրավական ակտերում, և բոլորը միասին գործում են իրավունքում: Այսինքն՝ իրավական կանխավարկածներ, որոնք այս կամ այն կերպ ամրագրված են իրավանորմերում և կանխավարկածներ, որոնք ամրագրված չեն, սակայն իրավական համակարգում առկա են. երկրորդները բխեցնում ենք իրավանորմերից, իրավական սկզբունքներից կամ գոյություն ունեցող իրավաբանական փաստերից: Եթե փաստացի կանխավարկածը չի բխեցվում նշված տարբերակով, նշանակում է, որ այդպիսի կանխավարկած իրավունքում գոյություն չունի: Ավելին, փաստացի իրավական կանխավարկածներն են, որոնք թույլ են տալիս ճանաչելու իրավական օրինաչափությունները: Օրինակ, եթե պարտավորությունների պատշաճ կատարման սկզբունքից բխող փաստացի իրավական կանխավարկածի միջոցով մտածում ենք պոզիտիվ իրավունքի շրջանակներում և կատարում դատողություն, ապա երկրորդի՝ պոզիտիվ իրավունքի կողմից չկարգավորված հարաբերությունն իրավական սկզբունքով կարգավորելու իրավական կանխավարկածի միջոցով մտածում ենք իրավունքի մասին⁴⁷:

⁴⁷ Իրավունքում մտածողության և իրավունքի մասին մտածողության ձևերի մասին տե՛ս **Обвинников А. И.**, Правовое мышление: дисс. докт. юрид. наук. Ростов-на-Дону, 2004, 124-138, **Обвинников А. И.**, Правовое мышление: аксиоло-

Այսպիսով, իրավունքում փաստացի կանխավարկած ասելով՝ պետք է հասկանալ այն կանխավարկածները, որոնք առաջացնում են որոշակի իրավական հետևանքներ, ինչպես որ՝ մյուսները և պարտադիր են իրավակիրառի համար: Պատկերավոր ասած՝ փաստացի կանխավարկածները եփած սուրճի աղացած հատիկներն են բաժակում, որոնք մեզ թույլ են տալիս զգալու, ընկալելու իրավունքը, ինչպես աղացած հատիկները՝ սուրճի համը: Վերջիններս, ըստ անհրաժեշտության, ցանկացած պահի պատրաստ են նպաստելու իրավունքի առջև ծառացած խնդիրների լուծմանը. փաստացի իրավական կանխավարկածների միջոցով իրավունքը դառնում է առավել կենդանի: Վերջիններս այն արդյունքներին հասնելու հույսն են, որին ձգտում են ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ (իրավաիրացնող) գործունեության ընթացքում: Այստեղ տեղին է հիշատակել Գ. Վ. Շվեկովի այն միտքը, որ օրենքում որևէ կերպ ամրագրված չէ այնպիսի կարևորագույն կանխավարկած, ինչպիսին օրենքների իմացության կանխավարկածն է, որը սակայն տեսությունն ու պրակտիկան դիտարկում են որպես իրավունքում անվերապահորեն գործող իրավական կանխավարկած⁴⁸:

Հակառակ դեպքում իրավունքից դուրս փաստացի կանխավարկածների հարցն ուսումնասիրելու անհրաժեշտությունն ամեննին էլ պարզ չէ: Եթե իրավաբանական հանրությունը բոլոր դեպքերում կորոշի հրաժարվել մեր մոտեցումից, հոգ չէ. պարզապես փաստացի կանխավարկածների ուղղությամբ այլևս պետք չէ կատարել հետազոտություններ: Խնդիրն այն է, որ այս կերպ մոտեցումից հրաժարվելու դեպքում այդ նույն մասնագիտական հանրությունը շարունակելու է դարձյալ վիճել, սակայն այդպես էլ չի կարողանալու բացատրել պարտատերն ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներին պարտապանին պատկանող բաժնեմասի գնելու առաջարկ ներ-

гический и герменевтический аспекты: дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2000, էջ 119-136:

⁴⁸ Տե՛ս **Швеков Г. В.**, Преемственность в праве. М.: Изд. Высш. шк., 1983, էջ 42:

կայացրած լինելու⁴⁹, սեփական իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և վերականգման համար դատարան դիմելու⁵⁰, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների նկատմամբ օրենքով սահմանված՝ դատական սահմանափակ միջամտության⁵¹, ամուսնալուծության գործեր քննելիս կողմերին լսելուց և գործի փաստական հանգամանքները բազմակողմանի և օբյեկտիվորեն հետազոտելուց և գնահատելուց հետո ամուսիններին հաշտվելու համար ժամկետ տրամադրելու անհրաժեշտության և նպատակահարմարության ողջամիտ համոզմունքի⁵², ամուսինները, ծնողները և զավակները (որդեգրողները ու որդեգրվածները) ընտանիքի անդամներ հանդիսանալու⁵³ (որպես ընդհանուր կանխավարկած), օրենքի մասին տեղյակ լինելու⁵⁴, իրավունքի խախտված լինելու մասին իմացած լինելու⁵⁵, անվճարունակության և պարտապանի բարեխղճության պարտաճանաչության⁵⁶, դատարանի կամ դատավորի

⁴⁹ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼՂԶ/0087/02/20 քաղաքացիական գործով 2020թ. հուլիսի 31-ի վճիռը:

⁵⁰ Տե՛ս և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՂԶ/1802/02/20 քաղաքացիական գործով 2020թ. սեպտեմբերի 25-ի վճիռը:

⁵¹ Տե՛ս և ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼՂԶ/0036/02/20 քաղաքացիական գործով 2020թ. մայիսի 18-ի որոշումը:

⁵² Տե՛ս և ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԾՂԶ/6835/02/19 քաղաքացիական գործով 2020թ. ապրիլի 15-ի վճիռը:

⁵³ Տե՛ս և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՂԶ/42573/02/19 քաղաքացիական գործով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 2019 թ. դեկտեմբերի 16-ի որոշումը:

⁵⁴ Տե՛ս և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՂԶ/5520/02/20 քաղաքացիական գործով 2020 թ. հոկտեմբերի 21-ի վճիռը:

⁵⁵ Տե՛ս և ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳՂԶ/0692/02/20 քաղաքացիական գործով 2020թ. հոկտեմբերի 20-ի վճիռը:

⁵⁶ Տե՛ս և ՀՀ սնանկության դատարանի թիվ ՄՆԴ/3026/04/20 սնանկության գործով 2021թ. հունվարի 18-ի վճիռը, ՀՀ սնանկության դատարանի թիվ ՄՆԴ/2469/04/20 սնանկության գործով 2020թ. դեկտեմբերի 23-ի վճիռը, ՀՀ սնանկության դա-

անաշատության⁵⁷, ազատության իրավունքի կանխավարկածը հաղթահարված չլինելու⁵⁸ և նմանատիպ այլ փաստացի իրավական կանխավարկածների գոյությունն իրավունքի համակարգում: Ավելին, իրավաբանական միտքը հայտնվելու է այսպիսի մի իրավիճակում: Մարդկությունը դեռևս հարյուրավոր տարիներ առաջ երագում էր օդային տարածությունը կտրել-անցնելու մասին: Սակայն այդ երագանքները սահմանափակվում էին թռչող գորգի մասին պատկերացումներով կամ էլ թռչնի թևերը կրկօրինակելու անհաջող փորձով այնքան ժամանակ, քանի դեռ չյուրացվեցին օդային տարածությունն անցնելու օրինաչափությունները: Հետևաբար, եթե հրաժարվում ենք փաստացի կանխավարկածն իրավական համարելուց, ապա պետք է հրաժարվենք նաև իրավական օրինաչափությունները տեսնելու, յուրացնելու նպատակից և բավարարվենք զարգացած իրավական համակարգ ունենալու, իրավական կանխավարկածների ընդհանուր տեսություն մշակելու սին երագանքներով...

Եզրահանգում: Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալի մասին:

➤ Փաստացի կանխավարկածն իրավական կանխավարկածի տարատեսակ է, ունի այն նույն բնույթը, ինչ որ մյուսները, և բոլորը միասին գործում են իրավական համակարգում: Փաստացի կանխավարկածը բխեցնում ենք իրավանորմերից, իրավական սկզբունքներից կամ գոյություն ունեցող իրավաբանական փաստերից՝ առաջացնելով որոշակի իրավական հետևանքներ:

➤ Եթե փաստացի կանխավարկածը չի բխեցվում նշված տարբերակով, նշանակում է, որ այդպիսի կանխավարկած իրավունքում գոյություն չունի: Այս մոտեցումից հրաժարվելու դեպքում, նշանա-

տարանի թիվ ՄՆԴ/2463/04/20 սնանկության գործով 2020 թ. դեկտեմբերի 2-ի վճիռը:

⁵⁷ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/1137/02/08 քաղաքացիական գործով 2009 թ. մարտի 13-ի որոշումը:

⁵⁸ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0649/06/18 քրեական գործով 2019 թ. նոյեմբերի 7-ի որոշումը:

կում է՝ այսուհետ պետք է հրաժարվենք նաև փաստացի կանխավարկածները հետազոտելուց: Իսկ եթե չհաժարվենք, ապա նախ փաստացի կանխավարկածների հարցի շուրջ կձևավորենք միասնական մոտեցում՝ հետագա հետազոտությունները տեղափոխելով մեկ այլ հարթություն և երկրորդ, կկարողանանք մի կողմից բացատրել փաստացի իրավական և անուղղակի իրավական, մյուս կողմից էլ՝ ուղղակի և անուղղակի իրավական կանխավարկածների տարբերությունները:

К ОСНОВНОЙ ПРОБЛЕМЕ ФАКТИЧЕСКИХ ПРЕЗУМПЦИЙ

Геворг Вирабян

Преподаватель кафедры теории и истории государства и права юридического факультета ЕГУ

Основная проблема фактических презумпций отнюдь не нова в праве, а идея раскрытия сущности последних до сих пор продолжает являться одним из неотъемлемых спутников творческой жизни правоведов. В частности, краткое описание правовой мысли о фактических презумпциях на протяжении десятилетий приводит к тому, что доктрина разработала два подхода – философский и юридический, которые презумпции, по факту закрепления, классифицируют направовую и фактическую, предлагая свои представления на решение основной проблемы. Дело в том, что предлагаемые решения не приводят к единому подходу, а наоборот, приводят к тупику, добавляя к ряду препятствий на пути разработки общей теории правовых презумпций.

С целью разработки концепции общей теории интегрирования отраслевых подходов к правовым презумпциям, данная статья посвящена фактическим презумпциям, в рамках которой автор подверг системному анализу решения, предложенные философскими и юридическими подходами; выявлял недостатки; конкретизировал основную проблему; по-новому представил свое видение ее решения и ближайшее будущее юриспруденции, если юридическое сообщество не откажется от традиционных подходов. Проведенное исследование, методологической основой которого является инструментальная теория права, имеет научно-практическое значение.

ON THE ISSUE OF FACTUAL PRESUMPTIONS

Gevorg Virabyan

*Lecturer at the Chair of Theory and History of State and Law,
YSU Faculty of Law*

The main problem of factual presumptions is by no means new in law, and the idea of disclosing the essence of the latter still continues to be one of the integrals accompanies of the creative life of jurists. In particular, a brief description of legal thought about factual presuppositions over the decades leads to the fact that the doctrine has developed two approaches philosophical and legal, which classify presumptions according to the fact of fixation as legal and factual, offering their ideas for solving the problem. The problem is that the proposed solutions do not take a unified approach, but rather lead to a deadlock, supplementing the list of obstacles to the development of a general theory of legal presumptions.

In order to develop the concept of general theory of integration of sectoral approaches of legal presumptions, this article is devoted to factual presumptions, in the framework of which the author systematically analyzed the solutions proposed by philosophical and legal approaches, identified shortcomings, specified the issue, presented his vision. The near future of jurisprudence if the legal public does not abandon traditional approaches. Conducted research, methodological basis which is followed by instrumental theory of law has scientific-practical significance.

Բանալի բառեր - փաստացի կանխավարկած, իրավական կանխավարկած, օժանդակ իրավական միջոց, իրավանորմ, իրավական սկզբունք, իրավունքի անալոգիա, իրավունքի գործիքակազմային տեւություն, կանխադրույթ, դատողություն, մտահանգում, պոզիտիվ իրավունք:

Ключевые слова: фактическая презумпция, правовая презумпция, вспомогательное правовое средство, правовая норма, правовой принцип, правовая аналогия, инструментальная теория права, постулат, суждение, умозаключение, позитивное право.

Key words: factual presumption, legal presumption, accessary legal remedy, legal rule, legal principle, law analogy, instrumental theory of law, postulate, judgment, conclusion, positive law.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(2) 2020

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 11.11.2021:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 7.125:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y su.am